

338(47.925)

---

u-39



338 (47.925)

U-39

Գ. ՍԵՅՐԱՆ

**Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի  
Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ի Ը Յ Ե Կ Ն Ր Ա  
Հ Ե Ռ Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ը**

(Տնտեսական աշխարհագրություն)

338 (47.925)  
U-39

Թիֆլիս, 1928 թ.

### Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Աշխատութեան նյութերը հավաքել եմ մի քանի ամսվա ընթացքում: Հասկանալի 'յե, վոր այդ ժամանակամիջոցում Ղարաբաղի տնտեսական կյանքի լրիվ և ամբողջական պատկերը տալ անհնարին եր:

Շրջանի համարյա տնտեսական բոլոր խնդիրները, բացի առևտրից և տրանսպորտից, գրքում տեղ են գտել:

Հուսով եմ, վոր այս աշխատութեանը հայ մասսաների համար վոչ միայն ընթերցանութեան նյութ կձառայի, այլ նաև Ղարաբաղի դպրոցների համար տնտեսական աշխարհագրութեան և մասամբ հայրենագիտութեան ձեռնարկի դեր կկատարի:

Հայտնում եմ իմ շնորհակալութեանը Ղարաբաղում գործող այն բոլոր անձանց և հիմնարկներին, վորոնք ինձ հնարավորութեան տվին անհրաժեշտ նյութեր հավաքել:

Առանձնապես շնորհակալ եմ Ղարաբաղի ժողովրդական գրգրոցների ուսուցիչներին, վորոնք իրենց հաղորդած տեղեկութեաններով ու ցուցմունքներով նյութերի հավաքման գործը գյուրացրին:

Գ. Սեյրան

Գիրքն նվիրում եմ Ղարաբաղի բոլոր «այա»-ներին յեվ իմ այայիս (մայրիկ), վորոնք աշխատւոքյանս «Տնայնագործութեան» բաժնի համար միակ կենդանի աղբյուրն են հանդիսացել:



ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմական Արցախը՝ այսօրվա ինքնավար Լեւոնային Ղարաբաղը, համարյա միշտ յեղել է անկախ: Արշակունյաց որով 64—428 թ. (Ք. Հ.) Սյունյաց նախարարությունը, վորի մի մասըն եր կազմում է Արցախը, ամենահզօրներից եր: Արշակունյաց անկումից հետո Հայաստանի շատ անկյուններում մնում են կիսանկախ իշխանություններ: Արցախը այդ կիսանկախ իշխանություններից մեկն եր: 640 թվից (Ք. Հ.) Հայաստանն ընկնում է արաբական լծի տակ: Ղարաբաղը ևս ճանաչում է արաբական գերիշխանությունը, սակայն Սյունիքի հետ միասին վորոշ չափով պահպանում է իր ներքին ֆեոդալական անկախությունը: 9-դ դարի վերջերին, յերբ արաբների ազդեցությունը Առաջավոր Ասիայում թուլանում է, այդ ժամանակ Շիրակում անկախության դրոշակ են բարձրացնում հայ նախարարներից Բագրատունիները: Սրանց հետ միասին (հավանորեն և առաջ) իրեն անկախ է հայտարարում և Սյունիքը: Այնուհետև 13 և 14-դ դարերում Հայաստանին տիրում են թաթարները: Իրբև Հայաստանի նահանգներից մեկը Ղարաբաղն ևս յերկար տարիներ իր ուսերի վրա կրում է թաթարական ծանր լուծը: 15 և 16-դ դարերում Հայաստանի արևմտյան մասի տեր են դառնում ոսմանցիք, իսկ արևելյան մասի՝ պարսիկները: Ղարաբաղը յենթարկվում եր Պարսկաստանին: 17 և 18 դարերում, թեև Ղարաբաղը ճանաչում եր պարսկական գերիշխանությունը, բայց նա կառավարվում եր հայ ֆեոդալների (մելիքների) ձեռքով, վորոնք պարսից շահերից վաստալական կախման մեջ էյին: 17 և 18 դարերում Հայաստանի և վոչ մի անկյունում այնքան ուժեղ հայ ֆեոդալների չենք հանդիպում, վորքան Ղարաբաղում և Զանգեզուրում—պատմական Սյունիքում: Այդ հանգամանքը բացատրվում է, մի կողմից, Ղարաբաղի միատարր ազգաբնակչությամբ, մյուս կողմից՝ նրա բարձրարեւ լեռներով, լեռնաշղթաներով (Մոավ, Կրբխ-Կըզ, Քիրս, Դիզափայտ...), անդնդախոր ձորերով, կիրճերով, մութ անտառներով, վորոնք մինչև որս էլ ծածկում են յերկրի ամբողջ արևմտյան մասը:

Ամբողջ 19-դ. դարում Ղարաբաղը յենթարկվում էր ցարական Ռուսաստանին: Ցարական տիրապետութեանը Ղարաբաղի գյուղացու գրութեանը ավելի վատացրեց, վորովհետև Ղարաբաղի ֆեոդալները թիվը յերկպատակեց ինքնակոչ «չլու» բեկերով:

Ղարաբաղի աշխատավորութեանը տարիների յերազած անկախութեանը այսօր ձեռք է բերել: 1923 թվից նա ավտոնոմ է: Այժմ նա իր ուսերի վրա չի կրում վոչ ոտար ֆեոդալի և վոչ էլ «հարազատ» մեղիքի լուծը: Զնայելով այդ բոլորին՝ Ղարաբաղի գյուղացին այժմ խաբխափում է խորը ապիտութեան մեջ և զբաղվում տնտեսական ծանր պայմաններում: Բայց զարաբաղցու այդ որինակ վիճակը յերկար չպիտի տևի: Նա շուտով պիտի հրաժարվի նահապետական կեռից (արոր) ու թեկախի ավելի բարձր սիստեմի գյուղատնտեսութեան շրջան:

II

Վարչական բաժանում

Այսօրվա լեռնային Ղարաբաղը տեղավորված է Ադրբեջանի արևմտյան մասում: Հայաստանից նա բաժանվում է Քրդիստանի գավառով, վորը սեպի նման, յերբեմն լայն, յերբեմն էլ նեղ շերտով Ղարաբաղը անջատում է Զանգեզուրից: Ղարաբաղի սահմաններն են կազմում. արևմուտքից Քրդիստանը, հարավից Զեբրայելի գավառը, արևելքից Աղզամի գավառը, իսկ հյուսիսից Գանձակի գավառը՝ պատմական Գյուլիստանի մի մասը: Նա մտնում է Ադրբեջանի մեջ իբրև ավստում Երզան-յեռնային ավստում Վարաբաղ: Ղարաբաղի այսօրվա տերիտորիան կազմվել է նախկին Գանձակի նահանգի յերեք գավառներից՝ Շուշվա, Զիվանշիրի և Զեբրայելի:

Հիշյալ գավառների լեռնային մասերը միացել են ավտոնոմ Ղարաբաղին, իսկ դաշտային մասերը կցվել են Աղզամի և Կարյազինի (Զեբրայել) գավառներին: Վարչական տեսակետից Ղարաբաղը այժմ բաժանվում է 4 յենթաշրջանների. Իրիզակ, Վարանդա, Սաչեն և Զրաբերդ: Սամսայի 5 մեղիքութեաններից (Գյուլիստան, Զրաբերդ, Սաչեն, Վարանդա և Իրիզակ) ավտոնոմիայի մեջ չի մտնում մենակ Գյուլիստանի մի մասը (Գանձակի գավառի լեռնային մասը), վորը Զրաբերդի բնական շարունակութեանն է կազմում:

Սաչենի մեջ է մտնում Շուշին, վորը մի շարք թուրքաբնակ

գյուղերի հետ միասին կազմում են Շուշվա շրջանը: Բոլոր յենթաշրջանները բաժանվում են գյուղախմբերի (բոլորը 5-ական գյուղախմբի, իսկ Զրաբերդը 4 գյուղախմբի): Ամբողջ Ղարաբաղի կենտրոնն է Ստեփանակերտը (Սան-Քենդին), վորը միաժամանակ համարվում է և Սաչենի վարչական կենտրոնը: Մյուս շրջանները ևս ունեն իրենց վարչական կենտրոնները: Զրաբերդի կենտրոնն է Մարդակերտը (Աղզարա), Վարանդայինը՝ Սոնաշենը, իսկ Իրիզակինը՝ Հաղբութը: Շուշին, վորը ամբողջ 19-դ և 20-դ դարերում յեղել Ղարաբաղի սիրտը, 1920 թ. կոտորածից հետո նա տնտեսական ու կուլտուրական կենտրոն լինելուց զագարել է:

III

ՏԵՐԻՏՈՐԻԱ. ՅԵՎ. Ա.ԶԳ.Ա.ԲՆԱ.ԿՈՒԹՅՈՒՆ

Այսօրվա ավտոնոմ Ղարաբաղը մի փոքր յերկիր է, վորի մեծութեանը հավասար է 4.160,75 քառակուսի կիլոմետրի (3656 ք. վերսաի=380.832 դեսյատինի): Այս տարածութեանը կազմում է Ադրբեջանի ամբողջ տերիտորիայի 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, իսկ Սորհուրդային Հայաստանի 11—12<sup>0</sup>/<sub>0</sub>: Այստեղ պիտի ասել, վոր Ղարաբաղի սահմանները, նամանավանդ Քրդիստանի գավառի հետ, վերջնականապես վորոշված չեն: Անդրկովկասի յերկու փոքր քաղաքական միավորներից՝ Աբխազիայից (8254, 36 քառ. կիլոմետր) և Նախիջևանի հանրապետութեանից (5987, 9 ք. կիլոմետր) Ղարաբաղի տերիտորիան փոքր է: Ղարաբաղը մեծ է Աջարիայից, վորի տերիտորիայի մեծութեանը հավասար է 2.912 ք. կիլոմետրի և հարավային Ոսեթիայից (3911 ք. կ.): Պարզվեց, վոր Ղարաբաղը իր տարածութեամբ Անդրկովկասի ամենափոքր միավորներից է:

\* \*

Ղարաբաղի մեծութեանը կապված է ավելի նրա ազգաբնակչության քանակի, քան տերիտորիայի մեծութեան հետ: 1926 թվի ղեկտեմբերի համախորհրդային ղեմոզքաֆիական վիճակագրութեան տվյալով Ղարաբաղի ազգաբնակչութեան թիվը հավասար է 125159 հոգու, վորից 116934 հոգի ապրում են գյուղերում, իսկ 8225 հոգի՝ քաղաքներում:

Քաղաքներում ապրում է ազգաբնակչության մոտ 7<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, իսկ գյուղերում՝ 93<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Ղարաբաղում միայն 2 քաղաք կա. Շուշին և Ստեփանակերտը: Ստեփանակերտի ազգաբնակչութեանը որ որի վրա ավելանում է, իսկ Շուշվա ազգաբնակչութեանը պակասում:

և 1923 թ Շուշում յեղել է 6967 շունչ, իսկ 1926 թ. դեկտեմբերին՝ 5107: \*) Ստեփանակերտում 1924 թ. յեղել է 2467 շունչ, իսկ 1926 թ.՝ 3118: Այդ հանդամանքը բացատրվում է նրանով, վոր Ստեփանակերտը այժմ լեռնային Ղարաբաղի կենտրոնն է, իսկ Շուշին 1920 թ. դեպքերից հետո այդպիսին լինելուց դադարել է: Թե բնակչությունը սեռերի և բնակավայրերի վրա ինչպես է բաժանվում, այդ ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Բայոն	Գյուղական ազգաբնակիչություն			Քաղաքային ազգաբնակիչություն			Ամբողջ ազգաբնակիչություն		
	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը
Վարանդա	14422	14451	28873	—	—	—	14422	14451	28873
Ջրաբերդ	16523	15249	31772	—	—	—	16523	15249	31772
Դիզակ	12270	12883	25153	—	—	—	12270	12883	25153
Խաչեն	13355	13435	26790	1624	1491	3118	14979	14929	29908
Շուվարայոն	2254	2092	4346	2509	2598	5107	4763	4690	9453
	58524	58110	116634	4133	4092	8225	62657	62202	124859
0/0-ով	50,3	49,7	100	50,2	49,8	100	50,3	49,7	100

Այս աղյուսակը պարզ ցույց է տալիս, վոր տղամարդիկ ամբողջ Ղարաբաղում ազգաբնակչության մեծամասնությունն են կազմում: Ստեփանակերտում տղամարդիկ շատ են, վորովհետև այնտեղ դրսից յեկած շատ ամուրի տղամարդ պաշտոնյաներ են ծառայում: Շուշում կանայք ավելի յեն, վորովհետև տղամարդկանց մի մասը դրսումն է աշխատում: Հետաքրքրականը այն է, վոր Ղարաբաղում ամենից շատ տղամարդ ունեցող շրջանը Ջրաբերդն է, վորտեղ ամեն 1000 տղամարդուն դալիս է 923 կին: Այդ հանդամանքը պատահականություն չպիտի համարել: Ջրաբերդը իբրև Ղարաբաղի համեմատաբար ամենահարուստ և հողով ապահով վայրը, քիչ արտագաղթ է տալիս: Դիզակի, Խաչենի և Վարանդայի տղամարդ ազգաբնակչության մի զգալի տոկոսը արհեստավորներ են, վորոնք ձմեռը և աշնան վերջը յերկրից բացակայում են: Դրա համար այստեղ կանայք տղամարդկանցից

\*) 1897 թ. Շուշում յեղել է 37,591 հոգի, իսկ 1900 թ. 27,714 հոգի:

շատ են: Դիզակում ամեն 1000 տղամարդուն դալիս է 1050 կին, Խաչենում՝ 1006, իսկ Վարանդայում՝ 1002:

Բնական աճումը Ղարաբաղում մեծ տոկոս է կազմում: 1926 թ. գյուղական բնակչության ծնունդը հասավ 4,30/0-ի, մահը 1,50/0-ի, իսկ աճումը 2,80/0-ի: Խորհուրդային միություն վերջին տարիների աճումը մոտենում է 20/0-ին (վրաստանում և Ադրբեջանում աճումը հասավ 20/0-ի, իսկ Հայաստանում՝ 30/0-ի):

Ազգաբնակչության 900/0 (112685 հոգի) հայ է, 9,60/0 (12006)՝ թուրք, 0,30/0-ը՝ ռուս և 0,10/0-ը՝ այլազգիներ:

Լ. Ղարաբաղի ազգաբնակչությունը Ադրբեջանի մի շարք գավառների ազգաբնակչությունից պակաս է: Նա պակաս է Գանձակի գավառի ազգաբնակչությունից (204768), Գեոկչայից (173796), Դուրայի գավառից (158,204), Լենքորանից (207852) և Սալյանից (128390): Ղարաբաղի ազգաբնակչությունը ավել է, քան պաշտոնական թվերն են ցույց տալիս:

Վիճակագրության ժամանակ, իմ մոտավոր հաշվով, Ղարաբաղից բացակայել են մոտ 10 հազար արհեստավորներ և հասարակ աշխատողներ, վորոնք ձմեռը սովորաբար աշխատում են դրսում: Նրանց մի մասը նույնիսկ Ռուստով և Հյուսիսային Կովկաս է անցնում:

Դրա վրա պիտի ավելացնել և այն, վոր վիճակագրությունը ձմեռն է կատարվել յերբ Վարանդայի մի շարք գյուղեր (Մուղանլի, Խոջևենդի և Վարդաղլին) ձմեռում էլին Աղղամի գավառում:

Յեթե պայմանորեն բնդունենք, վոր Լ. Ղարաբաղում ապրում է մոտավորապես 135 հազար հոգի, այն ժամանակ կտեսնենք, վոր նրա ազգաբնակչությունը, բացի Աբխազիայից (ուր ապրում են 199179 հոգի), Անդրկովկասի մյուս բոլոր քաղաքական փոքր միավորներից (Նախիջևան 103716, Աջարիս, 128000, Հարավային Ոսեթիա 87342) գերազանցում է:

Այժմ տեսնենք ազգաբնակչության խտությունը Ադրբեջանի գավառների շարքում Ղարաբաղը ինչ տեղ է բռնում.

(1926 թ. դեմոգրաֆիական վիճակագրության տվյալով)	
մի քառակուսի կիլոմետրի վրա	Ադրբեջանում ապրում է 26,8 հոգի
»	»
»	» Աղղամի գավ. » 30,0 »
»	» Բազվա » » 112,4 »
»	» Գանձակի » » 26,2 »
»	» Գյոկչայի » » 24,7 »

»	»	»	»	Ջերբայիլի	»	»	17,6	»
»	»	»	»	Չաքաթալի	»	»	18,6	»
»	»	»	»	Լենքորանի	»	»	38,6	»
»	»	»	»	Սալյանի	»	»	13,4	»
»	»	»	»	Շեմախի	»	»	12,2	»
»	»	»	»	Լ. Ղարաբաղում	»	»	31,1	»

Այս աղյուսակը պարզ ցույց է տալիս, վոր բացի Բազվա\*) և Լենքորանի գավառներից, Աղբրեջանի ամենախիտ ազգաբնակչության ունեցող շրջանը Ղարաբաղն է: Մյուս գավառները, Նախիջևանն ևս, Ղարաբաղից ավելի պակաս խտություն ունին: Յեթե այդպես է, նշանակում է Աղբրեջանյան մասշտաբով Ղարաբաղը ամենասակավաճող շրջանն է: Վերջնական հողաշինարարության ժամանակ այդ բանի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնեն թե Ղարաբաղի և թե կենտրոնական որգանները:

Հողազրկության հետ կապված է ազգաբնակչության արտագաղթը, վորը Ղարաբաղում մասսայական բնավորություն է ստացել: Արտագաղթին նպաստում են նաև պարբերական յերաշտը, կարկուտը, կենդանիների կոտորվածքը (աղարը) և այլն: 19 և 20 դ. դ. Ղարաբաղից հեռացողների թիվը այսօր հայրենիքում ապրողներից անցնում է: Վորտեղ ասեք, վոր դարաբաղցին ապրելիս չլինի: Բազվա հայ ազգաբնակչության կեսից ավելին Ղարաբաղցիներ են: Նուխու, Արեշի, Գյոկչալի գավառների հայ ազգաբնակչության մեծ մասը Ղարաբաղից են դուրս յեկել: Նուխում և գավառում ապրող դարաբաղցիների թիվը 1917 թ. գաղթից առաջ 10000-ից անցնում էր: Անդրկասպյան լեռներում և հյուսիսային կովկասում կգանենք դարաբաղցիների խոշոր գաղութներ: Պարսկաստանում, Ասիայի հեռավոր խորքերում, Ամերիկայում, Արևմտյան Յեվրոպայում ցրված են հազարավոր դարաբաղցիներ:

Ուր իշխում է յեռադաշտյան հողագաղթը սխտեմ, մի քառ. վերստի վրա կարող է ապրել միայն 35 մարդ: Ղարաբաղում անպետք հողեր (քերծեր, ձորեր) շատ կան: Այստեղ 1 ք. կիլ. տարածություն ներկա տեխնիքական հեռամնաց պայմաններում հաղիվ կարողանա կերակրել 20—25 հոգու: Ղարաբաղում իշխում է յեռադաշտյան սխտեմ և մի քառ. վերստի վրա ապրում է 30-ից ավել մարդ: Այդ նշանակում է, վոր վոչ միայն աճող սերունդը, այլ նաև այժմյան ապրողների մի մասը Ղարաբաղում

\*) Բազվա գավառի խտությունը կապված է Բազվա հետ, ուր 1926 թ. ապրում էր 317000 հոգի:

ապրուստ ձարել չի կարող: Նրանք աստանդականի ցուպը ձեռներին այսօր ստիպված են իրենց որվա պարենը հայթայթել հայրենիքից դուրս: Յեթե Ղարաբաղում լեռնային արդյունագործությունը ծաղկի և դրա հետ միասին գյուղացին բարձր ձևի տնտեսություն անցնի, այն ժամանակ աճող սերունդը կմնա յերկրի ներսում: Եմիգրացիայի մի մասը ընդմիշտ կտրվում է հայրենիքից, իսկ մյուս մասը կարճ ժամանակով հեռանում է քաղաքներում փող վաստակելու և իր քայքայված տնտեսությունը վերականգնելու համար: Ժամանակավոր եմիգրանտների մի մասը Բազվում բանվորագրվում է, մյուս մասը մշակ-համբալ և դառնում, իսկ մի խոշոր մասն էլ դբաղվում է արհեստներով, ինչպես՝ վորմնազրույթյամբ, ատաղձագործություն, քարտաշույթյամբ: Վարանդայում և Դիզակում գյուղ չկա, վոր չունենա մի քանի տասնյակների հասնող արհեստավորություն: Թե ամեն տարի ճիշտ քանի հոգի յե հեռանում Ղարաբաղից, դժվար է ասել, բայց, վոր եմիգրացիան մասսայական բնույթ է կրում, դա ակնհայտնի փաստ է:

Ղարաբաղի կենտգործկոմի 1925 թ. ոգոստոսի նստաշրջանում Դիզակի գավառի կոմի նախագահ ընկ. Շահենի զեկուցումից պարզվեց, վոր Դիզակից այդ տարին հեռացել են 4895 հոգի, վորը կազմում էր Դիզակի ամբողջ ազգաբնակչության 18<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Նույնը ավել կամ պակաս չափով կարելի է պնդել Վարանդայի ու Սաչենի մասին:

Ղարաբաղի գյուղերում գրագետները և կիսագրագետները 1926 թ. ավյալով կազմում են ազգաբնակչության 20,4<sup>0</sup>/<sub>10</sub>-ը, իսկ քաղաքներում՝ 37,2<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Ստեփանակերտում գրագետները կազմում են 23<sup>0</sup>/<sub>10</sub>-ը, իսկ Շուշում՝ 27,5<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Թե Սորհուրգային պետություն որով գրագետների տոկոսը ինչպես է բարձրացել, այդ յերևում է հետևյալ աղյուսակից:

1920, 1921 և 1926 թ. գրագետների տոկոսը.

Քաղաքային ազգաբնակչություն		Գյուղական ազգաբնակչություն		Ամբողջ ազգաբնակչություն							
1920/21 թ.	1926 թ.	1 9 2 1 թ.	1926 թ.	1920 և 1921 թ.թ.	1926 թ.						
Տղամարդ	Կին	Ընդամենը	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Ընդամենը
30,3	10,7	21	37,2	14,3	3,3	9	20,4	15,9	3,9	10,1	21,5

Վերջին տարիների ընթացքում դպրոցների, աշակերտութ-  
 թյան և ուսուցչության թիվը ևս հսկայական քայլերով աճում է:  
 1922/23-ուս. տարում Ղարաբաղը ունեցել է I աստիճանի 79 դըպ-  
 րոց 4375 աշակերտներով 150 ուսուցիչներով: 1926/27 ուս. տա-  
 րում՝ 137 դպրոց 15339 աշակերտներով և 304 ուսուցիչներով: 1923—  
 24 թ. յեղել է II աստիճանի 2 դպրոց 2 խմբակով և 60 աշա-  
 կերտներով, 1926/27 ուս. տարում՝ 5 դպրոց 16 խմբակով և 464  
 աշակերտներով: Բացի I և II աստիճանի դպրոցներից Ղարաբաղն  
 (Ստեփանակերտում) ունի մի միջնակարգ գյուղատնտեսական  
 դպրոց, ուր սովորում են 250 աշակերտներ, վորոնցից 218 գի-  
 շերոթիկ են: Բացի դրանից Ղարաբաղում կան հարյուրից ավելի  
 լիկկայաներ, վորտեղ սովորում են մի քանի հազար անգրագետ-  
 ներ (1924/25 ուս. տարում յեղել են 124 լիկ կայաններ, ուր սո-  
 վորում էին 3674 հոգի):

Այժմ մի քանի խոսք պրոֆմիության մասին: 1924 թ.  
 պրոֆմիության մեջ յեղել է 1624 հոգի, 1925 թվին՝ 2750 հոգի,  
 իսկ 1926 թ. հոկտեմբերի 1-ին՝ 3418 հոգի: Յերկու տարվա ըն-  
 թարքում տեսնում ենք, վոր պրոֆմիության անդամների թիվը  
 ավելի քան կրկնապատկվել է: Պրոֆմիության մեջ են մտնում  
 խորհաշխի, լուսաշխի, հողանտառի, կառուցողների, մանողներին,  
 տպարանի և այլ աշխատողներ: 1925 և 1926 թ. իր անդամների  
 քանակով առաջին տեղը բռնում եր խորհաշխը, յերկրորդ տեղը՝  
 հողանտառը, հետո իրար էլին հաջորդում՝ մանվածային արդյունա-  
 գործության մեջ աշխատողները, կառուցողները, լուսաշխը և այլն:  
 Մանվածային (մետաքսե թելի) արդյունագործության մեջ աշ-  
 խատողներին թիվը արագորեն զարգանում է: 1924 թ. մանողներին  
 թիվը 376 եր, 1925 թ.՝ 400, իսկ 1926 թ. 666:

IV

ՀՈՎԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև ուսսական տիրապետությունը Ղարաբաղում կային  
 անթիվ և անհամար խաներ, բեգեր և մելիքներ, վորոնք դաշտային  
 և լեռնային Ղարաբաղի փաստական տերերն էին: Ռուսական  
 տիրապետության ժամանակ ազնվականների թիվը վոչ միայն  
 չպակասեց, այլ նույն իսկ ավելացավ: Միապետության արբեցող  
 պաշտոնեյությունը մի շեշ ուղիով տամայակ գյուղերի հոգեր այս  
 կամ այն ինքնակոչ բեգին եր նվիրում: 1861 թ. թեև ճորտու-

թյունը Ռուսաստանում ընկավ, բայց սոցիալական ֆեոդա-  
 լիզմը մինչև 1917 թիվը շարունակեց մնալ: Լեռնային Ղա-  
 րաբաղում իշխում էին վոչ միայն հայ, այլ նաև թուրք  
 կալվածատերեր: Որինակ, յեթե վերցնենք Ջրաբերդը, կտեսնենք,  
 վոր այնտեղ Դուռխանովների, Հասան-Ջալալյանների, Մելիք-  
 Բեզլարովների և Ավան Յուզբաշեֆների կողքին կանգնած Ադիգյո-  
 գիլբեգովներին, Վելլբեգովներին և Ամեդ-աղային: Մինչև 1917 թ.  
 հեղափոխությունը կալվածատիրությունը Ղարաբաղում մնաց  
 անտասան: 1917—20 թ. ազգամիջյան կռիվները խանգարեցին հո-  
 գային հարցի լուծմանը: Միայն 1920 թ., յերբ Խորհուրդային  
 կառավարությունը վերջնականապես հաստատվում է Ազրբեջա-  
 նում, այն ժամանակ նա առառնապես սկսում է զբաղվել հո-  
 գային հարցով: Ազրբեջանի կենտրոնում 1921 թ. հատուկ «հո-  
 գաշինարարության հարվածային կոմիտի» յե ընտրվում, վորը  
 փորձում է 1921—1922 թ. կանոնավորել հողային հարցը: Այդ  
 կոմիտիան իր վրա դրած պարտականությունը չի կարողանում  
 բավարար կերպով առաջ տանել, վորովհետև մասնագետ ուժեր  
 կոմիտիայում բացակայում էին. հողերը բաժանվում են վոչ թե  
 գնահատելուց, նրանց ներքին արժեքը վորոշելուց հետո, այլ մե-  
 խանիկորեն: Հասկանալի յե, վոր նման հողաշինարարություն  
 դյուրացիության բավարարել չէր կարող: Նա հոնքը շինելու տեղ,  
 աչքն ել կուրացնում է: Վոր հարվածային կոմիտիան շատ սխալ-  
 ներ է թույլ տվել, այդ յերևում է հետևյալից: Կոմիտիայի հաշ-  
 վով Ղարաբաղի կուլտուրական հողերի քանակը հավասար է  
 127000 դեսյատին, այն ինչ 1921 թ. Ազրբեջանի գյուղատնտե-  
 սական վիճակագրության տվյալով կուլտուրական հողերը հա-  
 վասար են 62647 դեսյատին: Այդ վիճակագրության տվյալով  
 ամեն շնչին ընկնում է 0,2—0,5 դեսյադին հողամաս: Ջրաբեր-  
 դում ընկնում է՝ 0,55 դեսյատին, Վարանդայում՝ 0,47 դես., Դի-  
 դակում 0,42 դես., Սաչենում, 0,4 դես. իսկ Շուշվա շրջանում՝  
 0,2 դեսյատին: Ուրեմն տեսնում ենք, վոր Ջրաբերդը Ղարաբաղի  
 ամենահողառատ շրջանն է: Հարվածային կոմիտիայի և վիճակա-  
 գրության հակասությունը բացատրվում է նրանով, վոր հար-  
 վածային կոմիտիան անպետք հողերն ել պիտանի յե հաշվել: 1921  
 թ. վիճակագրության տվյալները կուլտուրական հողերի մասին  
 պիտի ընդունել մոտավորապես ճիշտ և իրականության ավելի  
 համապատասխանող:

Հարվածային կոմիտիայի թերությունները շտկելու համար

գավառային գործկոմիտեներին կից հաստատվում է հողային կոմիտեի սիստեմ, վորոնք կոչված էլին տեղն ու տեղը ուսումնասիրելու վիճելի խնդիրները և նրանց տալու շուտափուլ լուծում: Միևնույն ժամանակ Ղարաբաղի հողփողկոմատին կից կազմակերպվում է կենտրոնական կոմիտեի, վորը, գավառային հողկոմիտեների նկատմամբ, հանդիսանում է բարձրագույն ինստանցիա: Աննշան և արագ վորոշում պահանջող վիճերը լուծվել են վարչական յեղանակով: 1928 թ. հունվարի Ղարաբաղի կենտրոնական կոմիտեի աշխատանքները, վոր մինչև այժմ վերջնականապես չեն կանոնավորված վոչ միայն միջգավառային հողային խնդիրները, այլ նաև ներքին (գյուղական համայնքների և առանձին ընտանիքների մեջ) հողային հարցերը: Յեթե նորից հողաբաժանումներ լինեն, ցանկալի յե, վոր հողաբաժանման կոմիտեի սիստեմի մասնակցին հողաչափերի հետ միասին և հիդրո-տեխնիկներ, ագրոնոմներ, յեթե կուզեք և Ղարաբաղի պատմություն իմացողներ, վորպեսզի հողաբաժանումը կատարվի ճիշտ և արդարացի: Առանց լուրջ և վերջնական հողային հարցի կանոնավորման, անյերևակայելի յե Ղարաբաղի գյուղացիության անտեսության բարձրացման մասին յերազել: Վերջին 3—4 տարվա ընթացքում շատ գյուղերում հողերը մի քանի անգամ իրար մեջ բաժանվել են: Շարունակական բաժանումները այն բացասական կողմն ունեն, վոր գյուղացին խնամքով չի հերկում իրեն բաժին ընկած հողը, վորովհետև կարծում է, թե կարող է նորից վերաբաժանումներ տեղի ունենալ: 1927 թ. ամառը Ղարաբաղի ժողկոմխորհի նախագահ Ա. Ղարաբաղյանից իմացա, վոր Սոնաշենից 20—25 վերստ դեպի գաշտային մասը «Գյալուր ախ» կոչված տեղում 20000 դեսյատին ջրովի հող և հատկացվելու կոնային Ղարաբաղին: Յեթե այդ իրականանա, այն ժամանակ վարանդեցի և Դիզակցի գեղջուկը իր դարերով ծոված մեջքը հնարավորություն կունենա ուղղել ու հպարտ ման գալ հայրենի լեռներում:

V

ՀՈՎՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Անպիսի հողեր. Ղարաբաղի ընդհանուր տարածությունը հասար և 380832 դեսյատինի, վորից 140000 դեսյատին (37<sup>0</sup>/<sub>100</sub>-ը) ծածկված է մացառներով և անտառներով, 62647,07 դես. (16<sup>0</sup>/<sub>100</sub>) յենթակա յեն անմիջական ոգտագործման—կուլտուրական հողեր են, 38000 դ. (10<sup>0</sup>/<sub>100</sub>) արոտատեղիներ են, իսկ մնացած 140285

դեսյատինը (37<sup>0</sup>/<sub>100</sub>) անպետք հողեր են: Յեթե վոչ պիտանի հողամասերի վրա ավելացնենք և 12000 դես. անպետք արոտատեղիներ, այն ժամանակ Ղարաբաղի անպետք հողերը կկազմեն ամբողջ տարածության 40<sup>0</sup>/<sub>100</sub>-ը: Յեթե Ղարաբաղի անպետք հողամասերի 0<sup>0</sup>/<sub>100</sub>-ը համեմատենք Անդրկովկասի բոլոր մանր միավորների հետ, կտեսնենք, վոր Ղարաբաղը գտնվում է միանգամայն աննպաստ պայմաններում:

Անդրկենտրոնական տվյալով և. Ղարաբաղի ամբողջ տարածությունը զանազան հողամասերի վրա (по земельным УГОДЯМ) այսպես է բաժանվում (հաշված 1000 դեսյատինով):

	մոլ	3807
	հոչ վո	80,1
	մուչ վոտտ	100,5
	վիս շեմարդ	146
Արոտատեղի	մոլ	38,0
	տեղ	—
	գլխոս	—
	տրդ	—
	ստաղդ	140 38,0
	ժմոչտոսով	0,6
Վարկերի հող	մոլ	100
	տեղ	—
	վի	37,5
	սմ շեմ	62,5
	վեմ	3,2
	վեմ	0,9
	կոմտեղ	3,3

\*\*) (Народное хозяйство Закавказья в цифрах 1927 г. З. С. Ф. С. Р. Ц. С. У. стр. 82)

Անպետք հողեր Ղարաբաղում պիտի համարել. անջրտի տեղեր, քերժեր, նեղ ձորեր, անմատչելի արոտատեղեր և այլն: Չորերը Ղարաբաղում շատ մեծ տեղ են բռնում: Նրանց թիվը որսովուր շատանում է: Յեթե իր ժամանակին ձորագոյացման առաջն շառնվի, այն ժամանակ կարող է ձորերի տարածութիւնը ավելանալ: Չորագոյացումը կատարվում է բնական և արհեստական յեղանակով: Բնական պայմանների շարքը պիտի դասել. յերկրի խորդ ու բորդ բելլեֆը, ուղղաձիգ սարալանջերը և փափուկ վերնահողը: Չորագոյացման պակաս չեն նպաստում կլիմայական պայմանները: Յեթե ձյունառատ ձմեռվան հաջորդում է տաք գարուն, ձյունը անմիջապես հալվում է, առաջ են գալիս հեղեղներ, վորոնք քշում տանում են վերնահողը և գոյացնում անդունդներ:

Արհեստական անդունդներ են գոյանում այն դեպքում, յերբ սարալանջերի խողան հողերը սկսում են մշակել կամ նրա վրայի անտառները կտրտել: Յերբ սարալանջերի հողերը անմշակ են և անտառապատ, այն ժամանակ խոտերը և ծառերը հեղեղների առաջն առնում են, բայց յերբ անտառները կտրտում են, հողերն էլ մշակում, ձորագոյացման պրոցեսը արագանում է: Հանցանք է սարերի լանջերին յերկրագործութեամբ զբաղվել, վորովհետև հերկած հողի ծրերը (ակոսները) հեղեղների համար բնական հուններ են հանդիսանում: Ղարաբաղի լեռնային մասերում հողագործութիւնը պիտի վերացնել և անցնել բարձր ձևի անասնապահութեան, իսկ նախալեռնային մասերում յերկրագործութեամբ միայն վորոշ տեղերում պիտի զբաղվել, հակառակ դեպքում ձորերի տարածութիւնը ժամանակի ընթացքում կարող է շատանալ և յերկրի զարգացման գործին խանգարել: Հեղեղների առաջ առնելու միակ միջոցն է Ղարաբաղի սարալանջերը և ձորերը պատել ծառերով, իսկ վորոշ տեղեր խոտահարք դարձնել, վորպեսզի վերնահողը ամրանա:

1921 թ. գյուղատնտեսական վիճակագրութեան տվյալով կոլսուրական հողերի (անմիջական շահագործման յենթակա հողերի) տարածութիւնը հավասար է 62647,07 դեկայտինի, վորից սգարակային հողամասերը (բուն ագարակ, այգի, բանջարանոց) 5805,84 դեկայտին են (9<sup>0</sup>/<sub>10</sub>), վարելահողերը՝ 56660,13 դեկայտին (91<sup>0</sup>/<sub>10</sub>) և խոտահարքը՝ 181,13 դեկայտին (0,3<sup>0</sup>/<sub>10</sub>): Գավառների վրա նրանք հետևյալ կերպով են բաժանվում.

Ջրաբերում կուլտուրական հողերը 20907,94 դեկայտին են, վորից՝ ագարակային հողամաս . . . . .	840,38 դես. = 4 <sup>0</sup> / <sub>10</sub>
Վարելահող . . . . .	19942,29 դես. = 95 <sup>0</sup> / <sub>10</sub>
Սոտահարք . . . . .	125,27 դես. = 1 <sup>0</sup> / <sub>10</sub>
Վարանդայում՝ 15544 դեկայտին են, վորից՝ ագարակային հողամասեր . . . . .	2194,73 դես. = 14 <sup>0</sup> / <sub>10</sub>
Վարելահող . . . . .	13350,04 դես. = 86 »
Սոսիսում՝ 13978 դեկայտին են, վորից ագարակային հողամասեր . . . . .	1438,35 դ. = 10 <sup>0</sup> / <sub>10</sub>
վարելահող . . . . .	12489,1 դ. = 89 <sup>0</sup> / <sub>10</sub>
խոտահարք . . . . .	50,86 դ. = 1 <sup>0</sup> / <sub>10</sub>
Դիզակում 11197,9 դեկայտին են, վորից՝ ագարակային հողամաս . . . . .	1272,49 դես. = 11 <sup>0</sup> / <sub>10</sub>
վարելահող . . . . .	9924,91 դես. = 89 <sup>0</sup> / <sub>10</sub>
խոտահարք . . . . .	0,5 դես.
Շուշիում 1018,27 դեկայտին են, վորից՝ ագարակային հողամաս . . . . .	59,89 դես. = 6 <sup>0</sup> / <sub>10</sub>
վարելահող . . . . .	953,88 դես. = 94 <sup>0</sup> / <sub>10</sub>

Թվերից պարզվեց, վոր ամենից շատ վարելահող ունի Ջրաբերը, վորի վարելահողը Ղարաբաղի վարելահողի 1/3-ից էլ ավել է, յերկրորդ տեղը բռնում է Վարանդան, հետո գալիս է Սոսիսը և ամենից վերջին տեղը բռնում է Դիզակը: Իսկ յեթե վերցնենք ագարակային հողամասերի տարածութիւնը, կտեսնենք, վոր առաջին տեղը բռնում է Վարանդան, հետո՝ Սոսիսը, Դիզակը և վերջին տեղը՝ Ջրաբերը:

Պիտանի հողերի 17<sup>0</sup>/<sub>10</sub> ամբողջ Ղարաբաղում ջրովի յե, իսկ 83<sup>0</sup>/<sub>10</sub>-ը չի ջրվում: Ըստ գավառների ջրովի և վոշ ջրովի հողերը հետևյալ հարաբերութեան մեջ են.

Ջրաբերի հողերի 36 <sup>0</sup> / <sub>10</sub> -ը ջրովի յե, իսկ 64 <sup>0</sup> / <sub>10</sub> -ը չի ջրվում	
Սոսիսի » 10 » » » 90 » » »	
Դիզակի » 8 » » » 92 » » »	
Վարանդայի » 3 » » » 97 » » »	
Շուշի » 14 <sup>0</sup> / <sub>10</sub> » » » 86 » » »	

Այս տախտակից պարզվեց, վոր ամենից շատ ջրովի հող ունի Ջրաբերը, յերկրորդ տեղը բռնում է Սոսիսը, իսկ ամենավերջին տեղը բռնում է Վարանդան:

23111 - 59



### 1) ՅԱՆՔՍԱՏԵՂԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԵՐՔԸ

Պիտանի հողերի ամենամեծ մասը—91<sup>0</sup>/<sub>0</sub>-ը հաշվում է վարելահող: Բոլոր վարելահողերը Ղարաբաղում, ինչպես և Անդրկովկասում, չեն շահագործվում, չեն ցանվում, այլ շահագործվում է նրանց միայն մի մասը, վորովհետև սերմնափոխություն սխտեմ գոյություն չունի, այլ տիրողը միակողմանի ցելային—հացահատիկային (յերկղաշայան, յեռաղաշայան) սխտեմն է: Ղարաբաղում ցելը շատ մեծ տեղ է բռնում: Վարելահողի 60<sup>0</sup>/<sub>0</sub>-ը ցել է: Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր Ղարաբաղում հողագործությունը շատ պրիմիտիվ կերպով է առաջ տարվում: Յեվրոպայում և Անդրկովկասում ցելի տարածություն մեծությամբ առաջին տեղը բռնում է Ղարաբաղը: Վոր դա այդպես է, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Հորանդիայում ցելը բռնում է վարելահողի	0,7 <sup>0</sup> / <sub>0</sub> -ը
Անգլիայում » » » »	1,7 »
Բելգիայում » » » »	2,8 »
Գերմանիայում » » » »	4,7 »
Շվեյցիայում » » » »	12,2 »
Ֆրանսիայում » » » »	11,8 »
Ալժիրում » » » »	2,2 »
Ռուսաստանում » » » »	25 »
Ազրբեյջանում » » » »	43,6 »
Վրաստանում » » » »	35 »
Հայաստանում » » » »	33 »
Ղարաբաղում » » » »	60 »

Յեթե ամբողջ վարելահողից հանենք ցելատեղիները, այն ժամանակ 1921 թվի ցանքատեղին հավասար կլինի 19121 դեյառինի: Այժմ տեսնենք այդ ցանքատեղիները ինչպես են բաշխվում զանազան հացաբույսերի մեջ: Ամենից շատ Ղարաբաղում ցանվում է ցորեն, վորի տարածությունը 1921 թ. հասնում էր 11639,82 դեյառինի: Յերկրորդ տեղը բռնում է գարին 5580,1 դեյառին, յերրորդ տեղը՝ կորեկը 994,19 դեյառին: Յեթե ցորենի, գարու և կորեկի ցանքսի տարածությունը գումարենք, միասին կստանանք 18214,11 դեյառին, վորը ամբողջ ցանքատեղիների 90<sup>0</sup>/<sub>0</sub> է կազմում: Այս թվերը պարզ ցույց են տալիս, վոր Ղարաբաղում ցանում են միայն ցո-

րեն, գարի և կորեկ, իսկ մյուսները յերկրորդական տեղ են բռնում: Այստեղից ևս պարզվում է, վոր Ղարաբաղում իշխում է միակողմանի հացահատիկային տնտեսություն: Մյուս կուլտուրական բույսերը (ճակնդեղ, բամբակ, կտավատ...) համարյա բացակայում են: 1921 թ. տվյալով ցորեն ցանվել է.

Վարանդայում	3539,34 դես.	Ամենից շատ ցորեն ցանվել է Վարանդայում, համարյա այնքան էլ Ջրաբերդում և ամենից քիչ ցանվել է Սաչենում:
Ջրաբերդում	3535,4 »	
Դիզակում	3050,45 »	
Սաչենում	1317,33 »	
Շուշլա բայոն	97,31 »	

Բերքի տեսակետից պիտի յենթադրել, վոր Ջրաբերդը ցորեն շատ է տալիս, թեև նրա տարածությունը մի քանի դեյառինով Վարանդայից պակաս է: Այդ բացատրում է նրանով, վոր Ջրաբերդի ցորենի հողերի մի խոշոր մասը ընկնում է հարթության վրա և նրա ցանքսի 27<sup>0</sup>/<sub>0</sub>-ն էլ ջրով է յի:

Գարի ամենից շատ ցանվել է Վարանդայում (2267,96 դես.), յերկրորդ տեղը բռնում է Դիզակը (1287,04 դես.), յերրորդ տեղը՝ Ջրաբերդը (1056,36 դես.) և չորրորդ տեղը՝ Սաչենը (906,39 դես.)

Կորեկ ցանվել է.

Ջրաբերդում	363, 1 դեյառին
Սաչենում	336,46 »
Վարանդայում	139,39 »
Դիզակում	126,32 »

Կորեկը մեծ մասանք չի ջրվում. նրա բախտը կախված է անձրևից:

Այս թվերը ցույց են տալիս, վոր ամենից շատ հացահատիկ ցանվում է Ջրաբերդում և Վարանդայում: Ջրաբերդը հայտնի յե նամանավանդ իր ցորենով, վորը, մեծ քանակությամբ արտահանվում է հարևան Ադրամի շուկան:

Այժմ տեսնենք լեռնային Ղարաբաղը կարճը և ինքը իր բերքով կերակրվել: 1921 թ. ցորենի, գարու և կորեկի ցանքսի տարածությունը հավասար էր 18264,11 դեյառինի: Ընդունելով, վոր միջինը 1 դեյառինից Ղարաբաղում ստացվում է 35 փուլ. (յերեք հացաբույսերի համար) հացահատիկ, բերքը 1921 թ. համար կստացվի 637493,85 փուլ.: Յեթե այս գումարից հանենք մոտ 150000 փուլ սերմացվի համար, կմնա 487493,83 փուլ.: Յուրաքանչյուր շնչին կզա 3—4 փուլ: Սովո-

րաբար քաղաքում 1 հոգին մի տարում սպառում է 12 փութ հացա-  
հատիկ, իսկ գյուղում՝ 16 փութ (առանց սերմացվի): Յեթե ամբողջ  
Ղարաբաղի ազգաբնակիչ յունը գյուղացի համարենք և յուրաքան-  
չյուր շնչի սպառումը հաշվենք միջինը 15 փութ, այն ժամանակ  
յերկրից ստացած հացահատիկը հազիվ կարողանա 3 ամիս ժողո-  
վրդին կերակրել: Գավառներից միայն Ջրաբերդը կարող է իր  
հացով ապրել: Այժմ հետաքրքիր է իմանալ, ինչով և ապրում  
գյուղացին, յեթե նրա հիմնական զբաղմունքը—յերկրագործու-  
թյունը նրան չի կերակրում: Այդ հարցին շատ խելացի կերպով  
պատասխանել է Գիլգալի գավառի Վարդապետի նախագահ ընկեր Շահենը  
իր 1925 թվի շրջանի կենսագործկոմի պլենումում արած գեկուցման  
մեջ. «Դիպակցին մինչև իր խոտի և արտի հասնելը դաշտավայրի  
հարևան թուրքի խոտը հարում է և արտը հնձում: Մինչև այդ  
լեռներում իր արտն է հասնում: Յետ և դառնում իր խոտը հա-  
բում և արտը հնձում: Այդ ժամանակ դաշտավայրում կեռասը  
հասնում է: Նա ելը վերցնում գնում և կեռաս բերում ու ծա-  
խում լեռնային մասում: Սաղողի ժամանակ նա հարևանի ծառն է  
բարձրանում, խաղող քաղում: Իր բաժին խաղողը բերում ծա-  
խում է: Աշնանը խոզ և մորթում՝ միսը ծախում: Սողի ճարպից  
սապոն և յեփում, հետո մի դամբյուղ «կոնավը քցում» մեջը  
լցնում սապոն, շրջում մի գյուղից մյուսը՝ ծախում:» Նույնը կա-  
րելի յե պնդել պակաս չափերով Վարաճաղայի և Սաչենի վորոշ  
բայոնների գյուղացիների նկատմամբ: Տեսնում ենք, վոր Ղա-  
րաբաղի գյուղացին ենցիկլոպեդիստ և իր պարպմունքի մեջ:  
Ինչով ասես, վոր նա չի զբաղվում: Այդ բոլորից հետո, շատ ան-  
գամ, նա ցորեն հացի կարոտ է մնում: Գոհ կլինենք, վոր կորեկ  
հաց միշտ ունենար: Բայց շնորհիվ պարբերական յերաշտի, կար-  
կաի, մորեխի նա յերբեմն գուրկ է մնում և կորեկի ճաղից:  
Ղարաբաղի գիշեր ցերեկ աշխատող գյուղացին ավելի վատ պայ-  
մաններում է ապրում, քան տաժանակիր աշխատանքում ապ-  
րողները: Յետ աչքով տեսել եմ, ինչպես 14—18 վերստ հեռավո-  
վորությունից գյուղացին մի մեշոկ վարունգ շալակել բերել է  
Ստեփանակերտի շուկան վաճառելու:

Մյուս հացաբույսերից հանարք աննշան տեղ է բռնում  
(18,35 դեսյատին), վարսազը (պուստոթողը) հաշվում է 52,14 դե-  
սյատին: Ղարաբաղում վարսազ չի ցանվում, նա բսնում է գա-  
բու և խոտի հետ միասին: Բայց թն ինչո՞ւ է հիշվում, ինձ հա-  
մար պարզ չէ: Հավանորեն վիճակագրողները սխալվել են:

Մյուս կուլտուրական բույսերից մեծ ապագահ ունի Ղա-  
րաբաղում նարսնիլը, վորը նոր է սկսում տարածվել: Փորձը  
ցույց է տվել, վոր Ղարաբաղի վորոշ տեղերում կարտոֆիլ ավել է  
ստացվում, քան Ռուսաստանում, ուր այդ արմատապտուղը սկսել է  
տարածվել դեռ XVІІІ դարից: Սորհուրդային Ղարաբաղի 1925 թ.  
№ 29-ում կարգացի, վոր մի դեսյատինից վերին թաղավարում  
Սարգիս Սաչատրյան անունով մի գյուղացի (Մեծ պատերազմի  
ժամանակ յեղել է գերի Գերմանիայում) 1921 թ. 1 դեսյատինից  
ստացել է 2000 փութ կարտոֆիլ: Ուրիշները միևնույն հողամա-  
սից հաջորդ տարիներում ստացել են 1120—1730 փութ: Բերած  
թվերը գերազանցում են յեվրոպական՝ բոլոր յերկիրների ստացած  
բերքից:

Պատերազմից մի քանի տարի առաջ մի դեսյատինից

Բելգիայում ստացվում էր	1172	փութ.
Հոլանդիայում	»	1079
Անգլիայում	»	908
Գերմանիայում	»	900
Ռուսաստանում	»	402

Այս թվերը ցույց են տալիս, վոր Ղարաբաղում կարտոֆիլ  
ձեռնտու յե ցանել, քանի վոր նրա վորոշ վայրերում բերք ավե-  
լի կարելի ստանալ, քան նույնիսկ Բելգիայում: Կարտոֆիլը Յեվ-  
րոպան փրկեց սովից: Նա մոտ ապագայում կփրկի և Ղարաբաղը  
սովերից: Ղարաբաղի լեռնային մասում նա հեշտությամբ աճում  
է, քանի վոր կարտոֆիլը չի պահանջում վոշ շատ խոնավություն  
և վոշ էլ չորություն: Ղարաբաղում պիտի մացնել այնպիսի շու-  
տահաս կարտոֆիլ, վորի աճեցողությունը տեղում է 70—90 ուր:  
Հացաբույսերի ցանքսերը լեռնային մասերում պիտի փոխարի-  
նել կարտոֆիլով, քանի վոր նա կրկնակի ու յերակի անգամ  
հացաբույսերից ձեռնտու յե: Կարտոֆիլի ավելցուկը հնարավոր է  
հարևան շրջաններում փոխանակել ցորենի ու գարու հետ և  
միևնույն ժամանակ կենդանիների համար կեր ծառայեցնել: Գեր-  
մանիայում կարտոֆիլի բերքը 40% -ը, իբրև կեր, կենդանիներին  
է արվում: Կարտոֆիլից կարելի է պատրաստել կրախմավ և սպիրտ:  
Կարտոֆիլի առատ բերքը կնպաստի Ղարաբաղում գյուղատնտե-  
սական արդյունագործության առաջացման ու զարգացմանը:  
1921 թ. կարտոֆիլի ցանքսատեղին բռնել է 267,74 դեսյատին  
կամ ամբողջ ցանքսատեղիի 1 1/2 % -ը: Կուլտուրական բույսերից

աննշան տեղ և բռնում կհավասր: Կտավատը Ղարաբաղում ցան-  
վում և վոչ թե թեկիկներ ստանալու համար, ինչպես Ռուսաս-  
տանում, այլ սերմի համար: Կտավատի ստացած սերմից պատ-  
րաստում են ձեթ և կենդանիների համար քուփս: Ձեթ ստաց-  
վում և ինքնաուս վարպետների ղեկավարությամբ, հատուկ նահա-  
պետական գործարաններում, վորոնք տեղում կոչվում են սրանոց:  
Սրանոցները բանում են ձմեռ ժամանակ, յերբ դաշտային աշխա-  
տանքները վերջանում են: Կտավատի տարածությունը 1921 թ. Ղա-  
րաբաղում բռնում էր 56,52 դեկտարին: Մենակ Ջրաբերդը 54,36  
դեկտարին տեղ էր բռնում: Մյուս գավառները կտավատի մշակ-  
ման գործում աննշան տեղ են բռնում:

Լորին յիվ բակլանիասի բռնում են 219,65 դեկտարին:  
Մրանք ցանվում են թե սեփական կարիքների և թե ներքին  
«շուկաների» համար:

Այսօր շատ չնչին, բայց մոտ ապագայում շատ մեծ տեղ  
պիտի գրավի բավալի ցանքսը Ղարաբաղում: 1921 թ. նրա  
ցանքսը հավասար և յեղել 12 դեկտարին: Բամբակի  
ցանքսը կապված և ջրային հարցի հետ: Ջրային հարցը իր  
ամբողջ մեծությամբ կանգնած և Ղարաբաղի կառավարության  
առաջ: Նա պիտի շուտափույթ լուծում ստանա, հակառակ դեպ-  
քում գյուղատնտեսական կյանքը յերկար տարիներ կքարանա:  
Միայն Ջրաբերդում կա 19000 դեկտարինն հող, վորը հնարավոր և  
վոտոգել, յեթե համապատասխան առուներ անցկացվեն: Թար-  
թառը իր վտակներով կարող և Ջրաբերդի անջրտի հողերի բո-  
լոր կարիքները բավարարել: Մենակ Ուզուն Թալայի առու  
(սկիզբն և առնելու Թարթառից) կարող և վոտոգել 16000 դեկտա-  
րին, Մատաղտի առու (վորի անցկացման աշխատանքները ար-  
դեն սկսել են), պիտի վոտոգի 1000 դեկտարին: Խանազալի առվի  
վերանորոգման դեպքում (սկիզբն և առնում Ինչի չայից) թալիշ-  
ցիների 2000 դեկտարին հողը կվոտոգվի: Յեթե այս 19000 դե-  
կտարինի վրա բամբակ ցանվի, այն ժամանակ Ջրաբերդը միան-  
գամայն կփոխվի, տնտեսապես կառաջադիմի: Պիտի ի նկատի  
ռենեսանս վոր 1926 և 1927 թ. թ. Հայաստանում ցանվել և ըն-  
դամենը 13000 դեկտարին, իսկ վրաստանում 4—5 հազար դեկ-  
տարին:

Խաչենում ևս կան բամբակի համար պիտանի հողամասեր,  
վորոնք վոտոգման են սպասում: Ֆիրդժամալի բայունի (Ֆիրդժա-  
մալ, Նախիջևանի, Դահրազ, Աղբուլազ, Շեյլու և Մուղալու գյու-

ղերը) 6000 դեկտարին հողը ծրագրված և վոտոգել կամ քյարիզ-  
ներով կամ առվով, վորը պիտի իր սկիզբն առնի Գարգառից (խան-  
բաղի մոտից) և անցնի 50 վերստ տարածություն: 6000 դեկտա-  
րինից 3000-ի վրա կարելի յի բամբակ ցանել, իսկ մյուս 3000-ը  
վորոչված աչգիների (թթենի և խաղողի) և զանազան անկարան-  
ների հատկացնել: Բալուղժայի 300 դեկտարին և Դաշ-բլաղի 300 դե-  
կտարին հողամասերը ևս ծրագրված և մոտ ապագայում վոտոգել:

Վարանդան աղքատ և գետերով: Դրա համար նրա դաշտերի մի  
մասը մինչև պատերազմը վոտոգվում էր քյարիզներով: Այժմ այն-  
տեղ 30 փչացած քյարիզներ կան, վորոնցից 16 զանվում են  
հարթավայրերում և արմատական բեմնուտի մեծ կարիք ունին:  
Յեթե հիշյալ քյարիզները վերանորոգվեն, այն ժամանակ հնա-  
բավորություն կգառնա այնտեղի 6000 դեկտարին բամբակատե-  
ղիները վոտոգել:

Դիզակում ևս գետեր քիչ կան, դրա համար վոտոգումը կա-  
տարվել և նույնպես քյարիզներով: Այնտեղ կան 24 քյարիզներ,  
վորոնք վերանորոգման նույնպես կարոտ են: Յեթե Դիզակի  
բամբակտեղին հաշվենք 2000 դեկտարին, այն ժամանակ ամբողջ  
Լեռնային Ղարաբաղի բամբակատեղիների տարածությունը կհասնի  
30000 դեկտարինի (19000 Ջրաբերդ + 3000 Խաչեն + 6000 Վարան-  
դա + 2000 Դիզակ = 30000): Ժողովուրդը պատրաստ և ամեն ինչ  
զոհաբերել վոտոգման գործը առաջ տանելու համար: Կենտրոնա-  
կան և Ղարաբաղի կառավարությունը պիտի վոչ մի բան չխնա-  
յեն քյարիզները վերանորոգելու և առուներ անց կացնելու համար:  
Գյավուր-արիի շքջանից ստանալիք 20000 դես. հողամասերից մի  
մասը հնարավոր և բամբակի ցանքսի համար հատկացնել: Յեթե  
հաջողվի մոտ ապագայում ցանել 35—40000 դեկտարին բամբակ,  
տարին կստացվի մոտ 2 միլիոն փութ հնգավոր բամբակ: Բոլոր  
ասածներս իրականանալու դեպքում, Ղարաբաղի գյուղացին կհար-  
ստանա և ոտարություն գնալը կմոտանա:

Հում բամբակը զարկ կտա բամբակագտման արտադրու-  
թյան և մանավանդ մանվածային արդյունադործության:

1923/24 թ. Ջրաբերդում ցանվել և 476 դեկտարին բամբակ,  
բայց ջրաբերդցին դրանով չի բավականացել. նա իջել և գաշտա-  
վայրը—այսօրվա Աղզամի գավառը, կիսովի հարևան թուրքից  
հող և վերցրել և բամբակ ցանել: 1924/25 թ. Ղարաբաղում բամ-  
բակի 4 փորձագաշտի հիմք և դրվել. մեկը Խոնաշենում, իսկ  
յերեքը Ջրաբերդում: Գյուղատնտես Բ. Մելիք-Շահնազարյանը,

Վորը 1914—16 թ. յեղել է старший специалист по хлопководству Елисоветполькой губ., պատմում է, վոր ինքը փորձել է Զրարերդում բամբակ ցանել և մի դեպքատինից ստացել է 100—120 փութ հնդավոր բամբակ: Այս բոլորը ասում են, վոր Ղարաբաղում բամբակագործութունը մեծ ապագահ ունի, յեթև ջրային հարցը նպաստավոր լուծում ստանա:

Նույնը կարելի յե պնդել և բրինձի նկատմամբ:

1921 թ. Ղարաբաղում ցանվել է 106,15 դեպյատին բրինձ (չալթուկ), այն էլ միայն Զրարերդում: Հաճախ է պատահում, վոր հայ գյուղացիին իջնում է հարևան թուրք գյուղացու մոտ և կիսովի բրինձ ցանում:

1921 թ. ծխախոտ միայն 0,58 դեպյատին է ցանվել: Այժմ ծխախոտ Ղարաբաղի համարյա բոլոր շրջաններում ցանվում է, սակայն միայն տեղական կարիքների համար: 1911 թ. կարվածատեր Մ. Բեգլարյանը Զրարերդում ցանել է մեծ քանակությամբ ծխախոտ և ստացել առատ բերք: Այժմ շրջանում մասնագետ ծխախոտ ցանողներ չկան: Նույն իսկ 1924 թ. Ստեփանակերտի ազրոկայանում ցանած ծխախոտը հաջող բերք չի տվել, մասնագետ ցանողներ չլինելու պատճառով:

Ինչպես վերև շեշտեցի, ցանքաստեղծների մասին իմ բերած թվերը յես վերցրել եմ 1921 թ. Ադրբեջանյան գյուղատնտեսական վիճակագրության տվյալներից: Անդկենտովիճվարչության (Зак. II. С. V.) 1926 թվի տվյալները Ղարաբաղի ցանքաստեղծների մասին հետևյալ պատկերն են տալիս:

(Հաշված դեպյատիններով)

Ցորեն	Գարի	Հաճար																		
			Սնդնանագրանք	Գարնանագրանք	Աշնանագրանք	Գարնանագրանք	Սնդնանագրանք	Ցեղիպագրանք	Կորեկ	Զալթուկ (բրինձ)	Սխես	Լոբի	Արբնձ (Пречина)	Կարոֆիլ	Բամբակ	Ծխախոտ	Կոսվառ	Փունջուլ	Բախչա	Բանջարանոցի ցանք
27414	1330	9580	880	2	274	2	949	152	84	55	11	66	705	2	32	18	14	3140	17	44726

## 2) Ա.Գ.Ա.Ր.Ա.ԿԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ

(Усадебные угодья)

Ագարակային հողամաս ստեղծվ պիտի հասկանալ. այգի, բանջարանոց և ագարակ: 1921 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալով բոլոր տեսակի այգիների տարածութունը Ղարաբաղում յեղել է 3508,55 դեպյատին, վորից մրգի այգիներ յեղել են 1420,66 դեպյատին (վոչ ջրովի 654,64 դեպյատին), խաղողի այգիներ՝ 1739,5 դեպյատին (վոչ ջրովի 648,95 դեպյատին), խառը այգիներ՝ 448,33 դեպյատին (վոչ ջրովի 202,63 դեպյատին): Իսկ Ֆինժողկոմի տվյալով այգիների տարածութունը հավասար է 3578 դեպյատինի, վորից 1770 դեպյատին խաղողի այգիներ են, 1264 դեպ. թթի այգիներ, իսկ 126 դեպյատին շերամի թթենիներ (ջրո թթենի—թոխմաշար):

### ա) ՄՐԳԻ ԱՅԳԻՆԵՐ

Մրգի ծառեր Ղարաբաղի համարիս բոլոր անկյուններում կարելի յե աճեցնել: Ղարաբաղի անտառները լեցուն են տանձենու, խնձորենու, տիտղի, զկուռի և հոնի ծառերով: Գավառների վրա մրգի այգիները հետևյալ կերպով են բաժանվում.

	Ընդհանուր արածություն	ջրովի	վոչ ջրովի
Վարանդա . . . . .	680,45 դեպ.	195,45 դեպ.	485,00 դեպ.
Սաչեն . . . . .	367,6 »	351,69 »	15,91 »
Դիլակ . . . . .	327,68 »	182,65 »	145,03 »
Զրարերդ . . . . .	36,66 »	34,92 »	1,74 »
Շուշու շրջան . . . . .	8,27 »	7,00 »	1,27 »
	1420,66 դ.*)	771,71 դեպ.	648,95 դեպ.

Այս տախտակից պարզվեց, վոր ամենից շատ մրգի այգիներ ունի Վարանդան, հետո Սաչենը, Դիլակը և ամենավերջին տեղը բռնում է Զրարերդը: Այգիների համարյա կեսը (45<sup>0</sup>/<sub>0</sub>-ը) չի ջրվում, իսկ Վարանդայում չի ջրվում այգիների 71<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Սաչենում համարյա բոլոր այգիները ջրովի յեն, իսկ Դիլակում չջրվող այգիները կեսից քիչ պակաս են: Վուտզման դեպքում Ղարաբաղը կծածկվի ամբողջովին այգիներով, նա կհամանվի իս-

\*) Անդկենտովիճվարի 1926 թ. տվյալով Լ. Ղարաբաղի մրգի այգիների տարածութունը հավասար է 0,9 հազար դեպյատինի:

կազման Ղարա—բաղի (սև—այգու): Ուշադրութեան արժանի յեն Չանախչու, Գուշչի-Բարայի և Մադաթ-Քենդի «կարվել» խնձորը:

Աչքի են ընկնում նամանավանդ կարվել-ի ձմեռվա տեսակները: Հայտնի յեն Տումու, Չարգանիշենի և Թաղավարդի «բանետը»: Կարվել և բանետ խնձորենիները բերվել են Ռուսաստանից: Ղարաբաղում խնձորները զանազան անուններ են կրում: Որ. կթնենի (կաթնի համով), հըլվենի (հալվում է դեռ չձամած), սրսրենի, վորը իր համով ու մեծութեամբ շատ նման է անտոնովկային, շիրվանին հայտնի յե իր կարմրութեամբ և յերկարութեամբ:

Հայտնի յեն հետևյալ տեսակի օսնձեր. ձմեռենին, իր յերկարակեցութեամբ, խան-արմուղին և մալաչենին իրենց համով և հյութով: Մյուսները հայտնի չեն և կրում են զանազան անուններ. ամռենի (ամառվա), կրմրենի, վրդվրենի (վարդավառին հասնող), կընընչենի և այլն: Շատ անգամ թուրքերը մրգաշատ Աղզամից պալիս են վարանդայի այգիների մրգերը գնում և տանում Շուշում վաճառում: Ճանապարհների և շուկայի բացակայութեամբ խանդարում են խնձորենու և տանձենու այգիների զարգացմանը Ղարաբաղում: Յեթե յերկաթուղի անցկացվի, այգեգործութեան այդ ճյուղը արագ տեմպով կզարգանա:

Մյուս մրգերից հիշատակութեան արժանի են. սալորը և կեռասը, վորոնց ծառերը նույնիսկ անտառներում վայրենի զրութեամբ աճում են:

բ) ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐ

1921 թ. տվյալով խաղողի այգիների տարածությունը հավասար է 1739,5 գեոյատինի (Ղարաբաղի ֆինժողկոմի ներկայացուցչի տվյալով 1770 տես.): \*) գավառների վրա այգիները այսպես են բաժանվում.

	Չրովի	Վոչ օրովի	Ընդամենը
Գիգակ . . . . .	274,89 գես.	190,76 գես.	465,76 գես.
Վարանդա . . . . .	111,31 »	450,07 »	561,38 »
Սաչեն . . . . .	297,73 »	8,96 »	306,69 »
Ջրաբերդ . . . . .	400,93 »	4,85 »	405,78 »
	<hr/>	<hr/>	<hr/>
	1084,86 գես.	654,64 գես.	1739,5 գես.

\*) Անդրկենտրոնական տվյալով խաղողի այգիների տարածությունը հավասար է 3206 գեոյատինի:

Աղյուսակից յերևում է, վոր Չրովի այգիները վոչ Չրովիներից 1<sup>1</sup>/<sub>2</sub> անգամ մեծ տեղ են բռնում: Ամենից շատ Չրովի այգիներ ունի Ջրաբերդը և ամենից քիչ՝ Վարանդան: Խաղողի այգիների տարածութեամբ առաջին տեղը բռնում է Վարանդան, հետո Գիգակը, Ջրաբերդը և ամենավերջին տեղը՝ Սաչենը: Վարանդան ու Գիգակը տալիս են հայտնի խաղողներ, վորոնք իրենց վորակով շատ բարձր են: Խաղողից պատրաստում են գինիներ, վորոնց մի քանիսի տեսակը շատ բարձր են իրենց վորակով: Հայտնի յե Ղղղալայի գինին (Каракеңдское вино): Ուրիշ գյուղերից աչքի յեն ընկնում Մուշկապատը և Գիշը: Այդ գյուղերի գինիները արտահանվում է Բագու և հեռուները: Մինչև պատերազմը տեղում պատրաստած գինիների մեծ մասը սպառում էր Շուշին: \*)

Գժբախտաբար մեր գինիները պատրաստվում են մինչև որանահապետական յեղանակով (վոտքերով են վողկույզները տրորում) և սահվում հակառոտջապահական պայմաններում:

Այգեգործութեանը շրջանում զարգացնելու համար հոգժողկոմատը Արմենաբաղում (խանի բաղի մոտ), Ստեփանակերտից 6 վերստի վրա, մրգի ծառերի և խաղողի վորդերի տունկեր է առաջացրել: Գյուղացիներին մի քանի տարուց հետո հնարավորութեամբ և արվելու ետան գնով հոգժողկոմատի տնկարաններից խաղողի առողջ վորդեր և մատղաշ ծառեր գնելու իրենց այգիների համար: Բայց բավական չե գյուղացիներին ետան գնով տունկեր մատակարարել, պետք է նաև ցույց տալ նրանց այգի դրելու ձևը: Այդ ասպարեղում շրջիկ գյուղատնտեսները մեծ գործունին կատարելու:

գ) ԹԹԵՆՈՒ ԱՅԳԻՆԵՐ ՅԵՎ ՈՂՈՒ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1921 թ. լիճակագրութեան տվյալներով թթենու այգիները բռնում են 1421 գեոյատին տարածություն, վորը գավառների վրա այսպես է բաժանվում.

Վարանդա . . . . .	680 գես. (47,8 <sup>0</sup> / <sub>0</sub> )
Սաչեն . . . . .	368 » (25,9 <sup>0</sup> / <sub>0</sub> )
Գիգակ . . . . .	328 » (23,1 <sup>0</sup> / <sub>0</sub> )
Ջրաբերդ . . . . .	37 » (2,6 <sup>0</sup> / <sub>0</sub> )
Շուշու բայոն . . . . .	8 » (0,6 <sup>0</sup> / <sub>0</sub> )
	<hr/>
	1421 գես. (100 <sup>0</sup> / <sub>0</sub> )

\*) Լենինգրադի հայտնի գինեվաճառ յեղբայր Յելիսեյները, յերբ ծանոթանում են Ղղղալայի գինու հետ, այնքան են հավանում, վոր վորոշում են Ղղղալայի բոլոր այգիները գնել:

Ամենից շատ թթեհու ալգիններ կան Վարանդայում, հետո Դիզակում, Խաչենում և ամենավերջին տեղը բունում և Զրաբերդը:\*)

1918—1921 թթեհու ալգինների տարածութունը զգալի չափերով պակասել է, վորովհետև փոխադարձաբար հայ և թուրք իրար ալգինները վոչնչացրել են: Ալգինների վոչնչացման գործում պակաս դեր չեն կատարել հացահատիկների պակասութունը և թանգութունը: Գյուղացին 1918—21 թ. թ. սովի շրջանում ծառերը կտրտում եր և նրա տեղը ցորեն կամ գարի ցանում:

Թթեհու ալգինները տալիս են թուփ, վորը 1<sup>1</sup>/<sub>2</sub> ամիս կերակրում է գյուղացուն: Թուփը չորացնում, նրանից ձմեռվա կեր են պատրաստում: Թթից պատրաստում են և բաքմազ: 1918—1923 թ. ամբողջ Ղարաբաղում շաքարի փոխարեն գործ են անել բաքմազ ու թուփ: Չնայելով, վոր վերջին տարիների ընթացքում շաքարը գործածութունից սկսել է դուրս վանել բաքմազին ու թթին, բայց վերջինները, իբրև կեր, այսոր ել չեռ շարունակում են դեր կատարել: Թուփը և բաքմազը ապրանքային նշանակութուն չունին. նրանք սպասվում են հենց տեղում: Ապրանքային խոշոր նշանակութուն ունի թթից պատրաստած ողին, վորը մեծ քանակությամբ արտահանվում է Բագու, Անդրկասպյան յերկիր և հեռուները:

1926 թ. հունվարի 1-ին շրջանում յեղել են 323 ողու «գործարաններ (կուբ), վորոնց տարողութունը հասնում եր 3,4—12,2 վեդրոյի: 1924 թ. ողի քաշվել է 11 բայոնում.

	Գործարան	Ասիկան
1. Շուշիքենդի բայոն . . . . .	21	110210
2. Զրաբերդի » . . . . .	12	46779
3. Գարգառի » . . . . .	23	332240
4. Թաղավարդի » . . . . .	24	193144
5. Ճարտարի » . . . . .	29	266908
6. Դաշրլաղի » . . . . .	37	277299
7. Սոսի » . . . . .	42	353575

\*) Ղարաբաղի բոլոր գյուղերի 2<sup>1</sup>/<sub>3</sub>-ը (140 գյուղ) թթեհու ալգիններ ունեն: Ամեն 100 ընտանիքին գալիս է՝

Վարանդայում . . . . .	10,7	գետյատին ալգի
Խաչենում . . . . .	6,3	»
Դիզակում . . . . .	6,2	»
Շուշի բայոն . . . . .	1,0	»
Զրաբերդում . . . . .	0,6	»

8. Տողի-թաղի » . . . . .	36	244281
9. Յենիքենդի » . . . . .	33	342273
10. Կաղարծի » . . . . .	42	338793
11. Հագրութ » . . . . .	35	162461
	334	2658463

Պիտի յենթադրել, վոր ողի ավելի է քաշվել քան ցույց են տալիս նարկոմֆինի պաշտանական թվերը: Սովորաբար քաշելիս աշխատում են ավելցուկ (перекур) ավելի դուրս բերել, վորպեսզի ալցից չտան: Մասնագետների կարծիքով քաշած ողիի 1<sup>1</sup>/<sub>4</sub>-ը վրիպում է ֆինագենտի հսկողութունից: Ողի քաշվում է վոչ միայն թթից, այլ և գինու մնացորդներից: Թե վորքան ողի յե քաշվել թթից և գինուց վերջին տարիների ընթացքում, այդ ցույց է տալիս հետևյալ աղյուսակը, վորի թվերը վերցված են Ազրբեջանի ֆինանսական կոմիտարիատից:

Տարիներ	Թթից	%	Գինուց	%	Ընդամենը	%
1923/24	2651853 <sup>9</sup>	95,5	125012	4,5	2776865	100
1924/25	2884139	89,9	323521	10,1	3207660	100
1925/26	3052226	89	377176	11	3429402	100

1925 թ. հրատարակված „Заказкаабе“ Ժողովածվի виноградарство и виноделние հոդվածից (յերես 208—229) յերևում է, վոր Անդրկովկասի վոչ մի բայոն այնքան մեծ քանակությամբ թթի ողի չի ավել, վորքան Լեռնային Ղարաբաղը:

1909—1913 թ. Անդրկովկասում թթից 2980.000<sup>0</sup> ողի յե քաշվել, վորը անում է Անդրկովկասի բոլոր նյութերից քաշած ողու 8,6<sup>0</sup>/<sub>0</sub>: Համարյա թթի ողու ամբողջը քաշվել է Գանձակի նահանգում, իսկ նրա 90<sup>0</sup>/<sub>0</sub>-ն ել՝ Գանձակի նահանգի Շուշի գավառում, վորը այսոր մտնում է Լ. Ղարաբաղի մեջ: \*)

\*) 1 գերյատին ալգին միջին թվով ունենում է 120 ծառ: Մի ծառը տալիս է 2—3 փութ թաց թուփ: Մի գետյատինը տալիս է 300 փութ թուփ: Թթի 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ը (30 փութ) ուտում կամ ծախում են: Մնացած 270 փթից դուրս է գալիս 2700 աստիճան ողի (1 փթից 10<sup>0</sup>), հում ողի յի միջին պնդութունը 50<sup>0</sup> է (2700<sup>0</sup>: 50<sup>0</sup>=54—54 վեդրոյի): Ուրեմն մի գետյատինը տալիս է 54 վեդրո ողի: Գանձակ է, վոր մի ծառը տալիս է 1<sup>1</sup>/<sub>2</sub> վեդրո ողի:

Մինչև 1924 թվի ղեկավարներ ամիսը պետությունը արցիզ էր վերցնում յուրաքանչյուր աստիճանից 2 կոպ., իսկ այժմ (1925 թվից) արցիզը բարձրացել է մինչև 5 կոպեկ: Այդ նշանակում է 1 վեդրոյին (50<sup>0</sup> ողուց) 1924 թ. սեզոնին արցիզ վերցվել է 1 ր., իսկ այժմ վերցնում են 2 ր. 50 կոպ.: 1924 թվին գյուղացիներից Ազվինը և Ղարպետաուր (Ղարաբաղի պետական առևտուրը) արտիճանը գնել են 10 կոպ., բացի զրանից գնողները ակցիզի վճարումը ևս վերցրել են իրենց վրա: Այդ նշանակում է գնողները վրա վեդրոն (առանց փոխադրութան ծախքի) նստել է 6 ր. (5 րուբլիով վեդրոն է գնվել և 1 րուբլի էլ ակցիզ վճարվել): 1925 թ. սեզոնին Ղարպետաուր գյուղացիներից գնում է աստիճանը 13 կոպեկով (վեդրոն 6 ր. 50 կ.), 5 կոպ. էլ տալիս (վեդրոյին 2 ր. 50 կ.) ակցիզ: Այդ նշանակում է Ղարպետաուր վրա ողու վեդրոն նստում էր 9 րուբլի (աստիճանը 18 կոպ.):

Ողուց ստացած յեկամուտը Ղարաբաղի գեղջուկի բյուզժեյի մեջ մեծ աեղ է բռնում: Նա կազմում է նրա ամբողջ յեկամտի 4<sup>1</sup>/<sub>6</sub>-ը, իսկ գյուղատնտեսությունից ստացած յեկամտի 15<sup>0</sup>/<sub>6</sub>-ը: Թե ողուց վորքան յեկամուտ է ստանում գյուղացիությունը, այդ ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Տարիներ	Թթի ողուց	0/0	Գինու ողուց	0/0	Ընդամենը	0/0
1923/24	424296 ա.	92,4	35003 ա.	7,6	459299	100
1924/25	461462 ա.	83,6	90586 ա.	16,4	552048	100
1925/26	488356 ա.	82,2	105609 ա.	17,8	593965	100

Պետությունը ևս ողուց, իբրև ակցիզ, Ղարաբաղի մաշտարով մեծ գումարներ է վերցնում: 1926/27 արդյունաբերական տարում պետության ողուց ստացած յեկամուտը գյուղատնտեսական տուրքից անցնում է.

Տարիներ	Ողու ամբողջ ակցիզը (հաշված ուրբլիով)	Գյուղատնտեսական տուրքը (հաշված ուրբլիով)
1924/25	160383	242834
1925/26	171470	149470
1926/27	Անհայտ	58767

Ողիչի արտադրությունը զարգացնելու համար անհրաժեշտ է. նախ փոստոման դործը առաջ տանել և յերկրորդ, վորքան հնարավոր է, ողուն բարձր գին նշանակել, վորպեսզի գյուղացին չտուժի: Ողիչի բարձր գնահատումը գյուղացուն թթի այգիները տարածությունը ավելացնել ու մեծ խթաններ կտան:

Յեթե գյուղացու ողու վրա թափած աշխատանքը պրոֆմիության գրույքով փողի վերածենք, կտեսնենք, վոր նա իր թափած եներգիայի հավասար արժեքը յետ չի ստանում: Այդ միտքը թվերով ապացուցանում է Արամ Բաղդասարյանը (այգուտեր, համալստանավարտ) իր «ողու ինքնարժեքի վորոշումը» կոչված աղյուսակում: Յեթե մեկը ուղենա, ասում է նա, ուրիշից կապարով վերցրած այգուց 300 վեդրո ողի ստանալ, նա ստիպված պիտի լինի հետևյալ աշխատանքները կատարել.

ա) կապարառուն ստացած 300 վեդրոյից, տեղական սովորությունից համաձայն, 130 վեդրոն պարտավոր է այգետիրոջը տալ: Յեթե 130 վեդրոն փողի վերածենք ( $130 \times 6\frac{1}{2}$  ուրբլ. = 845 ուրբլի) կսանանք 845 ուրբլ.

բ) յերկու թուֆ թափողների ամբողջ սեզոնում ( $1\frac{1}{2}$  ամսվա մեջ) կատարած աշխատանքների վճարը (ամեն մեկին ամիսը 45 ուրբլ.) կանի 135 ուրբլ.)

գ) 6 շալ բռնողների (ամեն մեկին ամիսը 45 ա.) վճարը՝ 270 ա.

դ) 2 թուֆ կրողի վճարը (ամեն ամիսը 30 ա.)՝ 90 ա.

ե) 6 տակառի քրեյը՝ 130 ուրբլ. \*)

զ) թուֆ թափելու համար անհրաժեշտ է 100 արշին շալ, արշինը 45 կոպեկով կանի 45 ուրբլ.: Բայց վորովհետև շալը 2 տարի յե գնում, պիտի հաշվել կեսը, վոր կանի  $22\frac{1}{2}$  ա.

յ) մի ողի քաշողի (ВИНО КУР) (ամիսը 60 ա.) վճարը՝ 90 ա.

ը) մի ողի քաշելու կաթսայի (КУՃ.) քրեյը՝ 52 ա.\*\*)

թ) 2 թուֆ կրող եշ սեզոնին վարձվում է 30 ա.

ժ) կողմնակի ծախս, պատենտ, մարկա—20 ա.

ի) 11 բանվորի (6 շալ բռնող, 1 ողի քաշող, 2 թուֆ թափող, 2 կրող) ուտելու ծախս (ամեն մեկին 9 ա.)  $1\frac{1}{2}$  ամսում կանի 148  $\frac{1}{2}$  ա.

լ) 8 սածեն փայտը (սածենը 20 ա.) կանի 160 ա.  
ընդամենը 1993 ա.

\*) 1 տակառը քրեյում են 3 փարջ ողիյով: 3 փարջը =  $\frac{1}{2}$  վեդրոյի, կես վեդրոն 1925 թ. գնահատվել է 3 ա. 25 կոպ.

\*\*\*) Միջին կաթսան (կուբը) 8 վեդրոյանոց է: Կուբը վորքան վեդրոյանոց է, այնքան վեդրո ողիյով քրեյով է արվում ( $8 \times 6\frac{1}{2}$  ուրբլ. = 52 ա.)

Մինչև 1924 թվի դեկտեմբեր ամիսը պետությունը արքելի եր վերցնում յուրաքանչյուր աստիճանից 2 կոպ., իսկ այժմ (1925 թվից) արքելը բարձրացել է մինչև 5 կոպեկ: Այդ նշանակում է 1 վեդրոյին (50<sup>0</sup> ողուց) 1924 թ. սեզոնին արքելի վերցվել է 1 ռ., իսկ այժմ վերցնում են 2 ռ. 50 կոպ.: 1924 թվին գյուղացիներից Ազգիկներ և Ղարպետառը (Ղարաբաղի պետական առևտուրը) աստիճանը գնել են 10 կոպ., բացի զբանից գնողները ակցիզի վճարումը ևս վերցրել են իրենց վրա: Այդ նշանակում է գնողները վրա վեդրոն (առանց փոխադրություն ծախքի) նստել է 6 ռ. (5 ըուբլիով վեդրոն է գնվել և 1 ըուբլի էլ ակցիզի վճարվել): 1925 թ. սեզոնին Ղարպետառը գյուղացիներից գնում է աստիճանը 13 կոպեկով (վեդրոն 6 ռ. 50 կ.), 5 կոպ. էլ տալիս (վեդրոյին 2 ռ. 50 կ.) ակցիզ: Այդ նշանակում է Ղարպետառի վրա ողու վեդրոն նստում էր 9 ըուբլի (աստիճանը 18 կոպ.):

Ողուց ստացած յեկամուտը Ղարաբաղի գեղջուկի բյուզեյի մեջ մեծ տեղ է բռնում: Նա կազմում է նրա ամբողջ յեկամտի 4/6-ը, իսկ գյուղատնտեսությունից ստացած յեկամտի 15<sup>0</sup>/<sub>100</sub>-ը: Թե ողուց վորքան յեկամուտ է ստանում գյուղացիությունը, այդ ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Տարիներ	Թի ողուց	0/0	Գինու ողուց	0/0	Ընդամենը	0/0
1923/24	424296 ո.	92,4	35003 ո.	7,6	459299	100
1924/25	461462 ո.	83,6	90586 ո.	16,4	552048	100
1925/26	488356 ո.	82,2	105609 ո.	17,8	593965	100

Պետությունը ևս ողուց, իրրե ակցիզ, Ղարաբաղի մաշտարով մեծ գումարներ է վերցնում: 1926/27 արդյունաբերական տարում պետության ողուց ստացած յեկամուտը գյուղատնտեսական տուրքից անցնում է.

Տարիներ	Ողու ամբողջ ակցիզը (հաշված ուբլիով)	Գյուղատնտեսական տուրքը (հաշված ուբլիով)
1924/25	160383	242834
1925/26	171470	149470
1926/27	Անհայտ	58767

Ողիյի արտադրությունը զարգացնելու համար անհրաժեշտ է. նախ վտուղման գործը առաջ տանել և յերկրորդ, վորքան հնարավոր է, ողուն բարձր գին նշանակել, վորպեսզի գյուղացին չտուժի: Ողիյի բարձր գնահատումը գյուղացուն թիթի ալիքները տարածությունը ավելացնել ու մեծ խիթաններ կաան:

Յեթե գյուղացու ողու վրա թափած աշխատանքը պրոֆմիտության գրույքով փողի վերածենք, կտեսնենք, վոր նա իր թափած եներգիայի հավասար արժեքը յետ չի ստանում: Այդ միտքը թվերով ապացուցանում է Արամ Բաղդասարյանը (այգուտեր, համարանավարտ) իր «ողու ինքնարժեքի վորոշումը» կոչված աղյուսակում: Յեթե մեկը ուզենա, ասում է նա, ուրիշից կապալով վերցրած այգուց 300 վեդրո ողի ստանալ, նա ստիպված պիտի լինի հետևյալ աշխատանքները կատարել.

ա) Կապալառուն ստացած 300 վեդրոյից, տեղական սովորության համաձայն, 130 վեդրոն պարտավոր է այգետիրոջը տալ: Յեթե 130 վեդրոն փողի վերածենք ( $130 \times 6\frac{1}{2}$  ուբլ. = 845 ուբլի) կսանանք 845 ուբլ.

բ) յերկու թութ թափողների ամբողջ սեզոնում ( $1\frac{1}{2}$  ամսվա մեջ) կատարած աշխատանքների վճարը (ամեն մեկին ամիսը 45 ուբլ.) կանի 135 ուբլ.)

գ) 6 շալ բռնողների (ամեն մեկին ամիսը 45 ո.) վճարը՝ 270 ո.

դ) 2 թութ կրողի վճարը (ամեն ամիսը 30 ո.)՝ 90 ո.

ե) ճաակառի քրեյը՝ 130 ուբլ. \*)

զ) թութ թափելու համար անհրաժեշտ է 100 արշին շալ, արշինը 45 կոպեկով կանի 45 ուբլ.: Բայց վորովհետև շալը 2 տարի յե գնում, պիտի հաշվել կեսը, վոր կանի  $22\frac{1}{2}$  ո.

յ) մի ողի քաշողի (ВИНО КУР) (ամիսը 60 ո.) վճարը՝ 90 ո.

ը) մի ողի քաշելու կաթսայի (КУՃ.) քրեյը՝ 52 ո.\*\*)

թ) 2 թութ կրող եշ սեզոնին վարձվում է 30 ո.

ժ) կողմնակի ծախս, պատենտ, մարկա—20 ո.

ի) 11 բանվորի (6 շալ բռնող, 1 ողի քաշող, 2 թութ թափող, 2 կրող) ուտելու ծախս (ամեն մեկին 9 ո.)  $1\frac{1}{2}$  ամսում կանի 148  $\frac{1}{2}$  ո.

լ) 8 սամեն փայտը (սամենը 20 ո.) կանի 160 ո.

Ընդամենը 1993 ո.

\*) 1 տակառը քրեյում են 3 փարջ ողիյով: 3 փարջը =  $\frac{1}{2}$  վեդրոյի, կես վեդրոն 1925 թ. գնահատվել է 3 ո. 25 կոպ.  
\*\*) Միջին կաթսան (կուբը) 8 վեդրոյանոց է: Կուբը վորքան վեդրոյանոց է, այնքան վեդրո ողիյով քրեյով է արվում ( $8 \times 6\frac{1}{2}$  ուբլ. = 52 ո.)

կապալառուն 300 վեդրո ողին կարող եր 1925 թ. ծախել 1950 ո. (300×6<sup>1</sup>/<sub>2</sub> ո. = 1950 ո.): Այս հաշվառման պարզվեց, վոր յեթե կապալառուն բոլոր աշխատանքները վարձով կատարել տա, այն ժամանակ նա վոչ միայն ոգուտ չի ստանա, այլ նույնիսկ 43 ուրբլիով ել կֆնասով: Չնայելով այդ բոլորին, մինչև որս գյուղացին թթից ողի քաշելուց չի հրաժարվում: Այդ հանգամանքը բացատրվում ե նրանով, վոր բոլոր աշխատանքները կատարում են գյուղացու կամ կապալառվի ընտանիքի մեծուփոքր անդամները: Հազովագյուտ զեպքերում միայն նրանք վարձու աշխատանքի յեն դիմում:

Յեթե գյուղացու, նրա ընտանիքի անդամների և անասունների կատարած բոլոր գյուղատնտեսական աշխատանքները վորի վերածենք, հաշվենք և գյուղացու տարվա յեկամուտը, այն ժամանակ ստիպված պիտի լինենք ամստուրթյուն համարել վոչ միայն թթից ողի քաշելը, այլ նաև ներկա տեխնիքական պայմաններում Ղարաբաղում տոնասարակ վորեև գյուղատնտեսական աշխատանք տանելը:

Աղքատ գյուղացին իր ծառի թուփը թափելու և նրանից ողի քաշելու վոչ մի հնարավորություն չունի: Նա նույն իսկ չի կարողանում շալ գնել: Այդ բանի համար նա ստիպված իր այգին տալիս և գյուղի կուլակին կիսովի շահագործելու:

Ղարաբաղի կառավարությունը այժմ աշխատում ե, վոր գյուղացին վոչ միայն շատ ողի քաշի, այլ նաև մտահոգված ե, վոր գյուղացու ձեռքով քաշած այդ հում ողին (50<sup>0</sup>-ի) գավի և դառնա 96<sup>0</sup>-ի սպիրտ: Մինչև պատերազմը գաշտային և լեռնային Ղարաբաղի կարիքները բավարարում եյին 3 ողեգտիչ գործարաններ, վորոնք բոլորն ել Լ. Ղարաբաղի սահմաններից դուրս եյին գտնվում: Նրանք բոլորն ել Աղղամուհն եյին: Աղղամում այժմ մնացել և միայն Արումուհների ողեգտիչ (ректификационный) գործարանը: 1924 թ. Լ. Ղարաբաղում ողեգտիչ գործարան չլինելու պատճառով, Ղարաբաղում գյուղացիներից գնած ողին տարել և Աղղամ և աննպաստ պայմաններում գտել ավել: Իբրև գտման վարձ ընդունած ողուց Աղղամի գործարանը 20<sup>0</sup>/<sub>10</sub> իրեն և պահել: 1925 թվի ոգոստոսի 1-ից Ղարաբաղի ժողովրդական անտեսության բարձրագույն խորհուրդը (В. С. Н. Х.) Ասկարանում բաց և անում ողեգտիչ գործարան, վորը մինչև այժմ գործում ե: Այս աշնանը (1927 թ.) Վարանդայում Թաղլար գյուղից 5 վերստ հեռավորության վրա բացվել և մի ուրիշ ողե-

գտիչ գործարան, վորը կոչված և Վարանդայի և Դիզակի կարիքները բավարարել, իսկ Ասկարանի գործարանը բավարարելու յե գլխավորապես Ջրաբերդի, Սաչենի և մասամբ Վարանդայի կարիքները: Ասկարանի գործարանը գտնվում և Ստեփանակերտ—Յեվլախ տանող խճուղու վրա, իսկ Վարանդայինը՝ Ստեփանակերտ—Կարյազին տանող խճուղու վրա, վորը մոտենում և Բագու—Ջուլֆա յերկաթուղադին: Ասկարանի գործարանում գավել և.

1924/25 թվին . . . . .	423183 <sup>0</sup>	սպիրտ
1925/26 » . . . . .	1435975 <sup>0</sup>	»
1926/27 » . . . . .	1258257 <sup>0</sup>	»
Առաջիկա յերեք տարում յերկու գործարանում գավելու յե.		
1927/28 թ. . . . .	2.880.000 <sup>0</sup>	սպիրտ
1928/29 թ. . . . .	3.360.000 <sup>0</sup>	»
1929/30 թ. . . . .	3.840.000 <sup>0</sup>	»

Մասնագետների հաշվով կառավարությունը առաջիկա 3 տարիներում (1927/28, 1928/29, 1929/30 թ. թ.) 542198 ուրբլի ոգուտ և ստանալու: Այդ գումարը յերեկայական չպիտի համարել, վորովհետև յեթե մի աստիճան մաքուր սպիրտից նույնիսկ 5 կոպ. ոգուտ ստացվի, վերոյիշյալ գումարը կգոյանա: Թե վորքան ոգուտ և ստացվելու, այդ ցույց և տալիս հետևյալ աղյուսակը.

	1927/28 տար.	1928/29 տ.	1929/30 տ.
Սպիրտի 1 <sup>0</sup> -ի գործարանային ինքնարժեքը . . . . .	19,8 կոպ.	18,98 կ.	18,82 կ.
Սպիրտի 1 <sup>0</sup> -ի առևտրական ինքնարժեքը . . . . .	22,03 կ.	21,71 կ.	21,49 կ.
Սպիրտի 1 <sup>0</sup> -ը վաճառվելու յե . . . . .	28 կ.	27 կ.	26,5 կ.

Աղյուսակը պարզ ցույց և տալիս, վոր ոգուտը 5 կոպ. պակաս չի լինելու:

Անկասկած և, վոր ամբողջ սպիրտը վաճառվելու յե, վորովհետև թթի ողին ոգոստոսից և շուկա դուրս գալիս, իսկ խաղողի ողին ավելի ուշ և իրացվում:

Այդ 2 գործարանները Ղարաբաղի անտեսական կյանքի զարգացման գործում մեծ դեր ունին կատարելու:

Ողեգտիչ գործարանների ամենաթույլ կողմը այն և, վոր

նրանք շրջանառողական կապիտալ չունեն: Որ. 1926/27 թ. ժող-  
տնտրարձխորհուրդը (В. С. Н. X.) 300.000 ուսուրի շրջանառ-  
ողական (оборотный) կապիտալի կարիք ուներ, բայց նա իր արա-  
մազրուծյան տակ ունեցել է մենակ 29000 ուսուրի:

VI

ԿԵՆԳԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կենդանաբուծությունը շրջանում մեծ դեր ունի կատարելու:  
Ունենալով ալպյան արոտներ և անասնապահության համար  
միանգամայն պիտանի հողամասեր, Ղարաբաղի տարածության  
մեծ մասը պիտի կապել անասնապահության հետ: Ջրաբերդի  
և Դիզակի լեռնային մասում հաղվագյուտ տարիներում բերք—  
հացահատիկ ստացվում է 1-ին 3: Լինում են տարիներ, վոր  
գյուղացին իր ցանած սերմն էլ չի վերցնում: Չնայելով այդ  
բոլորին Ղարաբաղի գյուղացին շարունակում է բնագործին մին-  
չև այսօր էլ իր պապերի նահապետական գործիքներով անհու-  
սալի հողերի վրա վար ու ցանքս անել: Հանցանք է Ղարաբաղի  
վորոշ տեղերում յերկրագործությամբ զբաղվել: Բնությունը գո-  
ուում գոչում է, վոր Ղարաբաղի արևմտյան մասում միայն պի-  
տի զբաղվել անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Նրա—  
բնության ձայնին վոչ վոք արձագանք չի տալիս: Այժմ մենք  
տնտեսության անարխիկ վիճակից արդեն թեվակոխել ենք պլա-  
նային տնտեսության շրջանը: Մենք ունենք արդեն մեր պե-  
պլանները, վորոնք կոչված են սզգաբնակության զբաղմունքը  
հարմարացնել յերկրի ֆիզիկո-աշխարհագրական պայմաններին:

«Յերեսներս զեպի դանխական և շվեյցարական անասնապա-  
հություն» լողունգը Ղարաբաղի կառավարության մտածողության  
և գուրգուրանքի առարկան պիտի լինի: Յեթե ուզում ենք, վոր  
Ղարաբաղի գյուղացին մարդավայել կյանքով ապրի, պիտի ալ-  
պյան ֆերմաների խիտ ցանցով Ղարաբաղը ծածկվի: Այս բոլո-  
րից հետո տեսնենք, ինչ վիճակում է գտնվում անասնապահու-  
թյունը Ղարաբաղում: Սկսենք խոշոր յեղջյուրավորներից:

1) Խոշոր յեղջյուրավոր կենդանիներ ասելով, պիտի հասկանալ,  
յեզներ, կովեր, գոմեշներ և գոմեշակովեր. 1921 թ. գյուղատե-  
սական վիճակագրության տվյալով շրջանը ունեցել է 50716  
խոշոր յեղջյուրավոր կենդանիներ, վորոնք գավառների վրա  
այսպես էյին բաժանվում.

Շրջաններ	Յեզներ (աշ- խատի (տնավ) կովեր	Կովեր	Անչափահաս չորիներ	Դեղձորներ	Գոմեշ (աշ- խատի (տնավ)	Խոկոս- գործեր	Անչափահաս ստրիներ	Ընդամենը	Խոկոս- գործեր և չորի- ներ	Ընդամենը
Դիզակ . . .	3600	2221	2050	7871	381	86	71	538		8409
Վարանդա . . .	4422	3085	3045	10552	1127	309	292	1728		12280
Շուշու շրջան . . . . .	374	660	757	1793	42	84	93	219		2012
Սաչեն . . . . .	3663	2632	2705	9000	936	263	304	1503		10503
Ջրաբերդ . . .	4679	4451	4348	13478	2685	768	581	4034		17512
	16740	13049	12905	42694	5171	1510	1341	8022		50716

Այդուստակից յերևում է, վոր գավառներից առաջին տեղը  
բռնում է Ջրաբերդը, հետո՝ Վարանդան, Սաչենը և վերջին  
տեղը բռնում է Դիզակը: Ջրաբերդի և Դիզակի մեջ խոշոր յեղջյու-  
րավոր կենդանիների նկատմամբ կա անուշիկ տարբերություն.  
Ջրաբերդն ունի 17512 խ. եղջյուրավորներ, իսկ Դիզակը՝ 8409:  
Յեզներ և գոմեշներ (բուզաներով) շրջանը ունի 21911 հատ: Յե-  
թե ընդունենք, վոր 1921 թ. Ղարաբաղում յեղել է 130 հազար  
սզգաբնակություն, այն ժամանակ յուրաքանչյուր 2—3 հողուն  
հազիվ էր գալիս 1 խոշոր յեղջյուրավոր (յեղ կամ գոմեշ): Հաշվելով  
միջինը մի ընտանիքին Ղարաբաղում 5 շունչ, կստացվի, վոր  
1 ընտանիքին Ղարաբաղում 1 աշխատող խ. յեղջյուրավոր էլ չի  
գալիս: Կովեր ամբողջ Ղարաբաղում 13049 հատ էր: Ամեն 10 շըն-  
չին (կամ յերկու ընտանիքին) գալիս է 1 կով: Այժմ տեսնենք  
100 շնչին Ղարաբաղում և մյուս պետություններում քանի խո-  
շոր յեղջյուրավոր է գալիս:

Արգենտինայում . . . . .	449	գլուխ . . . . .
Կանադայում . . . . .	133	» . . . . .
Մ. Պետություններում . . . . .	82	» . . . . .
Դանիայում . . . . .	87	» . . . . .
Ֆինլանդիայում . . . . .	50	» . . . . .
Գերմանիայում . . . . .	34	» . . . . .
Ռուսաստանում . . . . .	31	» . . . . .

Վրաստանում . . . . .	47	» (1923 թ.)
Հայաստանում . . . . .	43	» (1922 թ.)
Ադրբեջանում . . . . .	34	» (1921 թ.)
Ղարաբաղում . . . . .	36	» (1921 թ.)

Այս ազյուսակից պարզվեց, վոր Ղարաբաղը, Բացի Գերմանիայից, Ռուսաստանից և Ադրբեջանից, բո լոր մյուս պետություններից խոշոր յեղջյուրավորներով քիչ և ապահոված: Յեվրոպայում և Ամերիկայում գյուղատնտեսության մեջ յեղ և գոմեշ քիչ են բանեցնում: Այնտեղ (նամանավանդ Գերմանիայում և Ամերիկայում) անասուններին մեքենան և փոխարինում: Չընայելով դրան, յեվրոպական և ամերիկական մի շարք պետություններում խոշոր յեղջյուրավորներ վոչ միայն Ղարաբաղից համեմատաբար քիչ չեն, այլ նույն իսկ ավել են:

Մեր կովերը և յեղները իրենց վորակով յեվրոպականից շատ ցածր են: Մեր կովերը տալիս են 3—4 անգամ պակաս կաթ: Քաշն ևլ նույնքան անգամ պակաս և: Շատ կովեր Ղարաբաղում այժից ևլ պակաս են կաթ տալիս: Պակաս կաթ տալու առաջն առնելու համար, անհրաժեշտ և այլասեռովոց կովերը աղնվացնել: Ղարաբաղի շրջանային գյուղատնտես Բ. Շահնազարյանը այն կարծիքին և, վոր հարմար և Ղարաբաղի կովերը աղնվացնել Շվից (Շվեյցարական) տեսակի միջոցով, վորովհետև, ասում և. 1) Շվիցը շատ կաթ և տալիս, 2) խառնուրդը առողջ և լավ սերունդ կտա, 3) նրանք զվար են հիվանդանում (նամանավանդ տուբերկուլյոզով), 4) նրանք մնվել—մեծացել են խիստ Ալպերում, վորտեղի ֆիզիկո-աշխարհագրական պայմանները շատ նման են և Ղարաբաղին, 5) նրանք սովոր են արածակերի (ПОДНОЖНЫЙ КОРМ):

1924/25 անտեսական տարում հոգեփոխմամբ կենդանիներին սերունդը աղնվացնելու համար 5 շվեյցարական հորթուկ և 5 ևլ յեղ և բերել տալիս, վորոնց տեղավորում և Ստեփանակերտի ագրո-կայանում:

1926 թ. փանտախտից (чума) բոլոր Շվից տեսակի բուզաները (բացի 1-ից) սատկել են:

1925 թ. ամառը թթու ջրի մոտ, Ղարաբաղի և Ադրբեջանի հոգեփոխմամբների նախաձեռնությամբ, բացվել և արլյան ֆերմա, վորը պիտի զբաղվի՝ 1) արտատեղիների ուսումնասիրությամբ և լավացումով, 2) տեղական և շվեյցարական տեսակներ

րի զուգավորելով և 3) կենդանական նյութերի վերամշակումով:

Ղարաբաղի ֆինվարչության տվյալներով հաջորդ տարիներում խոշոր յեղջյուրավորները ավելանում են: Այսպես 1924/25 թ. խոշոր յեղջյուրավորների թիվը բարձրացավ 74000-ի, 1925/26 թ.՝ 80340-ի, 1926/27 թ.՝ 81200-ի: Անգլենտվիճվարի տվյալով 1926 թ. Ղարաբաղում յեղել և 90981 խոշոր յեղջյուրավոր անասուն (Տես народное хозяйство Закавказья в цифрмах стр. 111):

2) ՄԱՆՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ (ՎՈՉԽԱՐ ՅԵՎ ԱՅԾ):

1921 թ. վիճակագրության տվյալով Լեռնային Ղարաբաղը ունեցել և 19234 վոչխար և 20199 այծ: Սրանք գավառների վրա այսպես էլին բաժանվում.

Շ Ր Ջ Վ Ն	Վոչխար	Այծ	Ընդամենը
1. Դիզակ	5426	8863	14289
2. Վարանդա	3509	2539	6048
3. Շուշուբայոն	774	578	1352
4. Սաչեն	2650	3743	6393
5. Զրաբերդ	6875	4476	11351
Ընդամենը	19234	20199	39433

Մանր յեղջյուրավորներով ամենից հարուստ և Դիզակը, հետո Զրաբերդը և ամենավերջին տեղը բռնում և Վարանդան: Խոշոր յեղջյուրավորների նկատմամբ մենք հակառակը տեսանք. ամենավերջին տեղը բռնում ևր Դիզակը, իսկ առաջնակարգ տեղերից մեկը (11-ը)՝ Վարանդան: Սաչենը և Վարանդան միասին այնքան այծ ու վոչխար չունին, վորքան մենակ Դիզակը: Այդ հանգամանքը բացատրվում և նրանով, վոր Դիզակը Ղարաբաղի ամենասակավահող և աղքատ գավառն և: Չքավոր գյուղացու համար վոչխար ու այծ գնելն ու պահելը կով գնելուց ու պահելուց ավելի հեշտ և:

Վրաստանում . . . . .	47	» (1923 թ.)
Հայաստանում . . . . .	43	» (1922 թ.)
Ադրբեջանում . . . . .	34	» (1921 թ.)
Ղարաբաղում . . . . .	36	» (1921 թ.)

Այս աղյուսակից պարզվեց, վոր Ղարաբաղը, Բացի Գերմանիայից, Ռուսաստանից և Ադրբեջանից, բո լոր մյուս պետութուններից խոշոր յեղջյուրավորներով քիչ և ապահովված: Յեվբոսպում և Ամերիկայում գյուղատնտեսության մեջ յեզ և գոմեշ քիչ են բանեցնում: Այնտեղ (նամանավանդ Գերմանիայում և Ամերիկայում) անասուններին մեքենան և փոխարինում: Չընայելով դրան, յեվբոսպական և ամերիկական մի շարք պետութուններում խոշոր յեղջյուրավորներ մոջ միտյն Ղարաբաղից համեմատաբար քիչ չեն, այլ նույն իսկ ավել են:

Մեր կովերը և յեղները իրենց վորակով յեվբոսպականից շատ ցածր են: Մեր կովերը տալիս են 3—4 անգամ պակաս կաթ: Քաշն ել նույնքան անգամ պակաս է: Շատ կովեր Ղարաբաղում այժից ել պակաս են կաթ տալիս: Պակաս կաթ տալու առաջնաանելու համար, անհրաժեշտ է ալլասեովող կովերը ազնվացնել: Ղարաբաղի շրջանային գյուղատնտես Բ. Շահնաղարյանը այն կարծիքին է, վոր հարմար է Ղարաբաղի կովերը ազնվացնել Շվից (Շվեցարական) տեսակի միջոցով, վորովհետե, ասում է. 1) Շվիցը շատ կաթ է տալիս, 2) խառնուրդը առողջ և լավ սերունդ կտա, 3) նրանք դժվար են հիվանդանում (նամանավանդ տուբերկուլյոզով), 4) նրանք մնվել—մեծացել են խիստ Ալպերում, վորտեղի ֆիզիկո-աշխարհագրական պայմանները շատ նման են Լ. Ղարաբաղին, 5) նրանք սովոր են արածակերի (подножный корм):

1924/25 տնտեսական տարում հողփողկոմատը կենդանիներին սերունդը ազնվացնելու համար 5 շվեցարական հորթուկ և 5 ել յեզ և բերել տալիս, վորոնց տեղավորում է Ստեփանակերտի ագրո-կայանում:

1926 թ. Ժանտախայից (Чума) բոլոր Շվից տեսակի բուզաները (բացի 1-ից) սատկել են:

1925 թ. ամառը թթու ջրի մոտ, Ղարաբաղի և Ադրբեջանի հողփողկոմատների նախաձեռնությամբ, բացվել է ալպյան ֆերմա, վորը պիտի զբաղվի՝ 1) արոտատեղիների ուսումնասիրությամբ և լավացումով, 2) տեղական և շվեցարական տեսակներ

րի զուգավորելով և 3) կենդանական նյութերի վերամշակումով:

Ղարաբաղի ֆինվարչության տվյալներով հաջորդ տարիներում խոշոր յեղջյուրավորները ավելանում են: Այսպես 1924/25 թ. խոշոր յեղջյուրավորների թիվը բարձրացավ 74000-ի, 1925/26 թ.՝ 80340-ի, 1926/27 թ.՝ 81200-ի: Անդկենտվիճվարի տվյալով 1926 թ. Ղարաբաղում յեղել է 90981 խոշոր յեղջյուրավոր անասուն (Տես народное хозяйство Закавказья в цифрмах стр. 111):

2) ՄԱՆՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ (ՎՈՉԽԱՐ ՅԵՎ ԱՅԾ):

1921 թ. վիճակագրության տվյալով Լեռնային Ղարաբաղը ունեցել է 19234 վոչխար և 20199 այծ: Սրանք գավառների վրա այսպես ելին բաժանվում.

Շ ր ջ ա ն	Վոչխար	Այծ	Ընդամենը
1. Դիզակ	5426	8863	14289
2. Վարանդա	3500	2539	6048
3. Շուշու բայոն	774	578	1352
4. Խաչեն	2650	3743	6393
5. Ջրաբերդ	6875	4476	11351
Ընդամենը	19234	20199	39433

Մանր յեղջյուրավորներով ամենից հարուստ է Դիզակը, հետո Ջրաբերդը և ամենավերջին տեղը բռնում է Վարանդան: Խոշոր յեղջյուրավորների նկատմամբ մենք հակառակը տեսանք. ամենավերջին տեղը բռնում էր Դիզակը, իսկ առաջնակարգ տեղերից մեկը (II-ը)՝ Վարանդան: Խաչենը և Վարանդան միասին այնքան այժ ու վոչխար չունին, վորքան մենակ Դիզակը: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, վոր Դիզակը Ղարաբաղի ամենասակավահող և աղքատ գավառն է: Չքավոր գյուղացու համար վոչխար ու այծ գնելն ու պահելը կով գնելուց ու պահելուց ավելի հեշտ է:

Աղյուսակից նույնպես պարզվում է, վոր շրջանի այծերի մոտ 45<sup>0</sup>/<sub>0</sub>-ը գտնվում է մենակ Դիզակում: Այդ հանգամանքը բացատրվում է Դիզակցու համեմատական աղքատությամբ և այծի եժանությամբ (այժը վոչխարից եժան է): Դրա վրա պիտի ավելացնել և այն, վոր այժը «գլխիպահի» յե—քերծեբում և լեռներում հեշտ և իր համար կեր ճարում: Այժը կարծես ծնված է քերծոտ ու լեռնոտ Դիզակի համար:

Վոչխարը ամենապիտանի ընտանի կենդանիներից է. նա տալիս է միս, դժակ, բուրդ, մորթի և այլն:

Ղարաբաղի վոչխարը պատկանում է Ղարաբաղի տեսակին: Նրանց գույնը մեծ մասամբ սպիտակ կամ գորշ է: Տալիս են կոպիտ, բայց յերկար բուրդ: Նրանք արտաքինով Անդրկովկասի շատ տեղերի վոչխարներից մեծ են: Ղարաբաղի վոչխարների միսը հայտնի յե իր հոտով և համով: Վոչխարի կաթից պատրաստում են մեծ քանակությամբ պանիր: Վոչխարի պանիրը հարգելի յե վոչ միայն մեղանում, այլ նաև Ուկրալինայում (ԾրինՅա), Իտալիայում և Ֆրանսիայում: «Րոկֆոր» կոչված պանիրը, վորը համաշխարհային համբավ ունի, պատրաստվում է վոչխարի կաթից: Ղարաբաղի մոթալները հայտնի յեն իրենց համով և հոտով: Դժբախտաբար մինչև որս Ղարաբաղում պանիր պատրաստում են նահապետական յեղանակով:

Լիսագորսկու ալպյան Ֆերմայի նպատակներից մեկն էլ այն պիտի լինի, վոր շրջանի գյուղացիության գյուղատնտեսական մթերքներ (և պանիր) պատրաստելը սովորեցնի:

Այժի կաթից պատրաստում են պանիր, վոր Ղարաբաղում վոչխարի պանրից պակաս հարգելի չի: Այժի մազից գործում են կարպետ (մազի կարպետ), պարան և այլն: Այժը—այդ աղքատ մարդու կովը, իրոք Ղարաբաղում փոխարինում է կովին: 1921 թ. տվյալով ամեն 100 հոգուն Ղարաբաղում գալիս է 30 մանր յեղջյուրավոր (յեթե ընդունենք, վոր այդ ժամանակ Ղարաբաղում յեղել է 130000 հոգի): Վերջին տարիների տվյալները ցույց են տալիս, վոր Ղարաբաղի մանր յեղջյուրավորների թիվը զգալի չափով բարձրանում է: 1924/25 տնտեսական տարում Ղարաբաղում մանր յեղջյուրավորների թիվը հասնում է 75100-ի, 1926/27 տարում՝ 90000-ի: Անդկենտովիճվարի տվյալով 1926 թ. Ղարաբաղի այծերի և վոչխարների թիվը նույն իսկ բարձրանում է 98952, վորոնցից 64586-ը հաշվում է վոչխար (տես. народное хозяйство Закавказья в цифрах стр. 112): Վերջին թվերը ցույց

են տալիս, վոր վերջին 2 տարիների ընթացքում արդեն ամեն 100 հոգուն գալիս է 80 մանր յեղջյուրավոր: Ռուսաստանում մինչև պատերազմը ամեն հարյուր հոգուն գալիս էր 52 մանր յեղջյուրավորներ, իսկ Անդրկովկասում՝ 263,4: Ղարաբաղի ֆիզիկո-աշխարհագրական պայմանները այնպես են, վոր հնարավոր է մանր յեղջյուրավորների թիվը յերկարակել ու քառապատկել:

### 3) Ձի, ՁՈՐԻ ՅԵՎ, ԵՃ

1921 թ. ամբողջ Ղարաբաղում յեղել է 2377 ձի, 7455 եշ և 171 Ձորի: Նրանք գավառների վրա այսպես էլին բաժանվում.

	Եշ	Ձի	Ձորի
Դիզակ . . . . .	2307	255	107
Վարանդա . . . . .	2010	502	12
Շուշու բայոն . . . . .	129	387	9
Սաչեն . . . . .	1799	485	38
Ջրաբերդ . . . . .	1210	748	5

7455 եշ 2377 Ձի 171 Ձորի

Եշով և Ձորիով առաջին տեղը բռնում է Դիզակը և ամենավերջին տեղը՝ Ջրաբերդը: Եշը Ղարաբաղում ամեն ինչ է. գյուղացին շուկա յե գնում՝ եշով, ջաղաց է գնում՝ եշով, քաղաքի հետ կապ է պահում՝ եշով, խուրձ է կրում (նամանավանդ Դիզակի լեռնային մասում)՝ եշով: Ուրիշ խոսքով նրա անտեսության հիմքը եշն է կազմում: Դժբախտաբար Ղարաբաղում շատերը զուրկ են և այդ համեստ անասունից: Ղարաբաղում շատ եշ լինելը բացատրվում է նրանով, վոր յերկիրը չափազանց լեռնոտ լինելու պատճառով սալ զփվար է բանում: Յերը կանոնավոր ճանապարհներ անցկացվեն, այն ժամանակ եշերը տեղի կտան ձիերի, խոշոր յեղջյուրավորների և ավտոտրանսպորտի առաջ:

Ձորիների թիվը որ ավուր պակասում է: Այդ կենդանին զիմացկուն է և միանգամայն պիտանի Ղարաբաղի համար:

1924/25 տարում հողժողկոմատը իր նախահաշվի մեջ էր մտցրել 3012 ուրբի Ձորիներ արտադրելու գործարանի համար, բայց այդ չնչին գումարն էլ կենտրոնում չի հաստատվել: Ձորու գործարանը Ղարաբաղի նման մի գերազանցորեն լեռնոտ յերկիրի համար միանգամայն անհրաժեշտ է: Ձիաներ Ղարաբաղում շատ

քիչ են մնացել: Յեղածներն էլ գյուղական փոքր յարուներ են: Կար ժամանակ, յերբ Ղարաբաղի նժույզները իրենց բարձր վորակով ամբողջ աշխարհում հայտնի էյին: Այժմ այդ ցեղը չքանում է: Ղարաբաղի ձիաները աղնիվ ցեղի վերականգնումը հող-ժողկոմատի համար պիտի դառնա առանձին մտածողության առարկա:

1924/25 տարում հողժողկոմատին հաջողվել է գնել 3 Ղարաբաղի բարձր տեսակի արտադրողներ, վորոնք պահվում են Ստեփանակերտի զուգավորման (случные пункты) կայանում: 1924/25 տարում Ստեփանակերտի կայանում Սաչենի շրջանից մոտ 100 գյուղացու ձիաներ են զուգավորվել:

Այժմ Ղարաբաղում ձի, եշ և ջորի շատ կան, քան 1921 թ.: Ղարաբաղի ֆինկոմիտատի տվյալով.

1924/25 թ. Ղարաբաղում յեղել է 3101 ձի և ջորի, 10420 եշ
1925/26 » » » 3651 » » » 10580 »
1926/27 » » » 4985 » » » 11050 »

Անդրկենտրոնի տվյալով 1926 թ. Ղարաբաղում յեղել է 11201 եշ, 261 ջորի և 6579 ձի: Նույն թվին Ղարաբաղում յեղել է նաև 54 ուղա:

Վերջին թվերը ցույց են տալիս, վոր ամեն 100 հոգուն Ղարաբաղում գալիս է 8 եշ և մոտ 5 ձի: Յեթե ընդունենք, վոր միջին ընտանիքը Ղարաբաղում բաղկացած է 5 հոգուց, այն ժամանակ կարգվի, վոր ամեն 2<sup>1</sup>/<sub>2</sub> ընտանիքին գալիս է մի եշ, իսկ 4 ընտանիքին՝ մի ձի:

Վերջին թվերը, նախ, հերքում են այն համատարած կարծիքը, վոր Ղարաբաղը շատ եշ ունի և յերկրորդ, ցույց են տալիս, թե վորքան աղքատ է Ղարաբաղի գյուղացին:

### 4) Խ Ո Չ

Սողաբուծությունը ամենաողտակար զբաղմունքն է համարվում: Ամեն սիստեմի տեսեսություն հնարավորություն է տալիս խոզեր պահել: Սողը տալիս է բազմակողմանի ոգուտ. տալիս է ձարպ, միս, մազ և կաշի: Ամենապակասը տարին 2 անգամ ծնում է, տալով յուրաքանչյուր անգամ 8—10 ճուտ: Ղարաբաղում մի տարվա խոզը արգեն ընդունակ է բեղմնավորվելու: Ռուսաստանում խոզի մսից պատրաստում են յերշիկ և այլ նյութեր, վորոնք իբրև կեր, ձմեռ ժամանակ գյուղացուն շատ ոգնում են:

Սազերը հոտը փրկեցին, 1918—1922 թ. սելյուտկան Ռուսաստանին, իսկ խոզերը, համաշխարհային պատերազմի ժամանակ, Գերմանիային: Սողերը կարող կլինեն և Ղարաբաղի աղքատ գյուղացուն փրկել սովի ճանկերից: Ղարաբաղի պայմանները միանգամայն խողաբուծության համար նպաստավոր են: Ղարաբաղի անտառների սրզնե, հաճարենու և կաղնի ծառերի պտուղները խողաբուծության գործը միանգամայն հեշտացնում են: 1921 թ. տվյալով Ղարաբաղում եղել է 4496 խոզեր, վորոնք գավառների վրա հետևյալ կերպով էյին բաժանվում.

Գիղակ . . . . .	969 խոզ
Վարանդա . . . . .	571 »
Շուշու բայոն . . . . .	5 »
Սաչեն . . . . .	1113 »
Զրարերգ . . . . .	1838 »
	<hr/>
	4496 խոզ

Ղարաբաղում խոզ պահելը շատ ձեռնտու յե, վորովհետև տավարի հետ գնում արածում են և առանձին հողացողության առարկա չեն դառնում: 9 ամսով, առանց հսկողության, գյուղացիք խոզերը բաց են թողնում անտառներում արածելու: Չմեղ միայն երեք ամիս կերակրում են նրանց տանը կաղնու ծառի կաղինով, հաճարով կամ գարիլով: Դժբախտաբար մեր գյուղացին խելացիորեն խողի միսը ոգտագործել յերշիկի և ապուխտի համար չի կարողանում: Գյուղացուն պիտի սովորեցնել կենդանական նյութերը բացիոնալ կերպով շահագործել: Մեր խոզերը իրենց քաշով անգլիականից շատ պակաս են: Ղարաբաղի խոզերի վորակը հնարավոր է բարձրացնել, զուգավորելով նրանց անգլիական յորկշիր տեսակի հետ: Զտարյուն խոզերը հասարակ խոզերից հողատարություն ավելի յեն պահանջում: Յելային—հացահատիկային սիստեմի (паровая—зерновая) գյուղատնտեսության ղեկքում զտարյուն խոզեր պահելը ձեռնտու չէ: Յեթե Ղարաբաղը անցնի սերմնափոխության սիստեմին\*), այն ժամանակ զտարյուն յորկշիր տեսակի խոզերի տարածումը շրջանում կգտոնա նըպատակահարմար: Ղարաբաղի հողժողկոմատը Ռուսաստանից բերել է տվել մի քանի յորկշիր (կիսազտարյուն) տեսակի խոզեր,

\*) Սերմնափոխության ղեկքում կցանվի մեծ քանակութամբ ճակնդեղ (կերի և շաքարի), կարտոֆիլի, գաղար, վորոնք չարածող ազնվացիկ խոզերի համար եժան կեր կհանդիսանան:

վորոնք կոչված են շրջանի խողերի տեսակը կլիսով չափ աղնվա-  
 ցնելու: Կիսագտարրուն խողերը ձեռնառու յեն, վորովհետև սրանք  
 հեշտությամբ կարող են հարմարվել Դարաբաղի պայմաններին:  
 Խողեր Դարաբաղում ավելի կան, քան պաշտոնական վիճակագր-  
 ությունն է ցույց տալիս: Խժարերդի գյուղախմբում 1921 թ.  
 վիճակագրության ավյալով յեղել է միայն մի խող, այն ինչ այն-  
 տեղի խողերի քանակը մի քանի հարյուրի յեր հասնում: Վարան-  
 դայի Սոսի գյուղխմբի խողերի թիվը հաշված է 115, այն ինչ  
 այս շրջանում կա այնպիսի գյուղ, վորտեղի խողերի քանակը  
 1921 թվին մի քանի հարյուրների յեր հասնում: Նույնը կարելի  
 յե պնդել և մյուս գյուղախմբերի վերաբերյալ: Վոր իրոք Դարա-  
 բաղում մեծ քանակությամբ խողեր կան, այդ ցույց են տալիս  
 1921 թվի և հաջորդ տարիների Դարաբաղի ժողովո՛ֆինի ավյալ-  
 ները.

1921 թվին Դարաբաղում յեղել է	7300 խող
1924/25 » » » »	12600 »
1926/27 » » » »	16700 »

5) ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բոլոր անկյուններում և Դարաբաղում մեղվա-  
 բուծությունը վաղուց գոյություն ունի: Դարաբաղի Ալպյան լեռ-  
 ները, իրենց անուշաբույր ծաղիկներով, անտառներով (նամանա-  
 վանդ լորենի) և նախալեռնային բուսականությամբ մեղվաբու-  
 ծի գործը գյուրացնում են: Մինչև որս էլ Զրաբերդի անտառնե-  
 բի ծառերի փշակներում գյուղացին փթերով մեղր է ճարում  
 և վայրի մեղուների ընտանիքներ գյուղեր տեղափոխում: Այս  
 հանգամանքը նորից ապացուցանում է, թե վորքան մեղվաբու-  
 ծության համար շրջանում նպաստավոր պայմաններ կան: 1912 թ.  
 մենակ Զիվանշիրի\*) նահանգում 12000 փեթակ է յեղել: Այժմ  
 փեթակները թիվը զգալիորեն պակասել է: 1921 թ. վիճակագրու-  
 թյան ավյալներով ամբողջ Դարաբաղում յեղել է 1264 փեթակ,  
 վորից միայն 241-ն է յեղել շրջանակավոր, իսկ մնացածները քը-  
 թոցներ էյին: Գավառների վրա փեթակները այսպես էյին բա-  
 ժանվում.

\*) Զիվանշիրի դաշտային մասը այժմ կցվել է Աղղամի շրջանին, իսկ  
 նրա լեռնային, մեղվաբուծության համար ամենակարևոր մասը, կոչվում է Զրա-  
 բերդ, վորը այժմ լեռնային Դարաբաղի մի անբաժան գավառն է համարվում:

	Շրջանակավոր	Գթոց.	Ընդամենը
Դիզակ . . . . .	—	27	27
Վարանդա . . . . .	83	438	521
Շուշու շրջան . . . . .	30	70	100
Խաչեն . . . . .	66	195	261
Զրաբերդ . . . . .	62	293	355
<hr/>			
241 շրջան.	1023	քթոց	1264 փե- թակ

Այս թվերը իրականության չեն համապատասխանում: Յեւ  
 Զրաբերդում ապրող մասնագետ մեղվաբուծից դեռ 1925 թ. իմա-  
 ցել էմ, վոր մենակ Զրաբերդի շրջանը ունի 2800 փեթակ, վորից  
 միայն 60 հատն է Դատանրլատի սիստեմով:

Մեղվաբուծության համար ամենանպաստավոր վայր պիտի հաշ-  
 վել Խաչեն գետի հովիտը: Մասնագետների կարծիքով միայն այս  
 հովտում—գետի աջ և ձախ ափերի ուղղությամբ, կարելի յե պա-  
 հել վոչ պակաս քան 2000 փեթակ: Այժմ այդ հովիտը ունի մի-  
 այն 1000 քթոց: Փեթակների թիվը պակաս է ցույց տված Վա-  
 րանդայում և մյուս գավառներում:

Դարաբաղի մեղրը հայտնի յե իր համով ու հոտով: Այստեղ  
 հնարավոր է 1 փեթակից (նոր սիստեմի) ստանալ մինչև 3 փութ  
 մեղր: Գթոցներից ստացվում է միջինը 10 գրվանքա: Բացառիկ  
 տարիներում բերքը քթոցների հասնում է 1 փթի:

Բժշկությունը ապացուցել է, վոր մեղրը շատ ոգտակար է  
 որդանիզմի համար, իսկ մեղուների գոյությունը՝ պողաբերու-  
 թյան համար:

Բնությունը ամեն տեսակի հնարավորություն տալիս է Դա-  
 բաբաղում զբաղվելու մեղվաբուծությամբ: Մեղ մնում է միայն  
 բնության ավածը կատարելագործել: Բայց գժբախտաբար մին-  
 չև որս էլ գյուղացին նայում է մեղվաբուծության վրա իբրև մի  
 ավելորդ, շատ-շատ ոժանդակ զբաղմունքի վրա: Գյուղացին զը-  
 խի չի ընկել, վոր Դարաբաղի արևմտյան մասերում հնարավոր է  
 մեղվաբուծությունից ավելի ոգուտներ ստանալ քան հողագոր-  
 ծությունից:

Մեղրը շրջանից դուրս համարյա չի արտահանվում, այլ  
 գործ է անվում յերկրի ներսում:

Քիչ գյուղական տներում կճարեք մեղր: Գյուղացիության  
 հոծ մեծամասնության համար մեղրը միանգամայն անմասաչելի  
 բարիք է:



1924 թ. հոգժողկոմատը գնել է Դատանըխատի 6 փեթակ և Ստեփանակերտում հիմք դրել ցուցադրական մեղվանոցի:

Շրջանում մեղվաբուծութունը զարգացնելու համար անհրաժեշտ է. ա) բոլոր շրջաններում ու յենթաշրջաններում բանալ ցուցադրական մեղվանոցներ: բ) Ձմեռը մեղվաբուծներին հավաքել ու նրանց համար մատչելի գրույցներ կազմակերպել: գ) Բանալ Ստեփանակերտում և գավառների կենտրոններում արհեստանոցներ և եփան գնով գյուղացիութան փետակներ մատակարարել:

Ղարաբաղի ապագան և մեղվաբուծութան մեջ է:

VII

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԵՏԱՔՍԻ ԹԵԼԻ ԱՐՏԱԳԸՐՈՒԹՅՈՒՆ

Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում վաղուց է, ինչ ըզբաղվում են շերամապահութամբ: Բայց թե յերբ և Անդրկովկասը սկսել ծանոթանալ շերամապահութան հետ, ինձ ճիշտ հայտնի չէ: Առաջին գրավոր տեղեկութունը Անդրկովկասի մետաքսի մասին մեզ տալիս է 10 դարի հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացին իր «Պատմութուն Աղվանից աշխարհի» գրքում: «Եւ որ շուրջ գնովաֆն (խոսքը Կասպից ծովի մասին է) են գաշաք՝ զըտանի ի նո սա հաց և գինի շատ, նավթ և աղ, ապրեռում և բամբակ...» (Մ. Կաղանկատվացի գլուխ է. յերևա 15): XIV դարու ճամբորդ Շիլդերբրգը հայտնում է, վոր Շամախում, Ղարաբաղում և Վրաստանում շերամապահութունը շատ տարածված է: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Շամախին, Նուխին և Շուշին Անդրկովկասի ամենաառևտրաշահ քաղաքներն էին: Այդ քաղաքների հարստութունը պիտի բացատրել մետաքսի թելի և գործվածքների այն հսկա առևտրով, վոր գրանք ունեյին Արևմտյան Յեվրոպայի, Ռուսաստանի և Արևելքի հետ: XIX դարի սկզբից Ռուսաստանը վոտք գնելով Անդրկովկաս սկսում է հովանավորել շերամապահութունը: 1848 թ. հարկային վարչութան տվյալներից պարզվում է, վոր ամբողջ Անդրկովկասը տվել է 32000 փութ թել, վորից մեծակ Շուշվա ուայոնը տվել է 5000 փ. 1894 թ. Շուշում բացվում է շերամապահութան կայան, վորի շարունակութունը պիտի համարել 1924 թ. ապրիլի 18-ին Հաղ-

բութում «Չաչե» խտալական ընկերութան բաց արած շերամի կայանը\*):

Մինչև համաշխարհային պատերազմը լեռնային Ղարաբաղում շերամապահութունը այսորվանից ավելի չէր զարգացած: Աղգամիջյան կռիվների ժամանակ (1917—1920 թ.) շերամապահութունը և մետաքսի թելի արտադրութունը համարյա կանգ առավ: Արտադրութան այդ ճյուղի անկմանը պակաս չեն նպաստել և Ռուսաստանի քաղաքացիական կռիվները, վորոնց ընթացքում մետաքսեղենի արտադրութան գրեթե բոլոր գործարանները փակվել էին: Կենտրոնական Ռուսաստանի գործարանների փակումը չէր կարող չանդրադառնալ Ղարաբաղի (և Անդրկովկասի) կումը չէր կարող չանդրադառնալ պատրաստվող կիսահում շեփրա, քանի վոր մեր յերկրամասում պատրաստվող կիսահում շերամի թելի համարյա ամբողջ կլանողը մինչև պատերազմը (այսոր էլ) հանդիսանում էր Ռուսաստանը: Միայն 1923 թվից, յերբ կյանքը Ղարաբաղում սկսեց նորմալ հունուլ ընթանալ, շերամապահութան վերականգնումը առանձին ուշադրութան առարկա դարձավ:

Շերամի թթենիների (թոխմաշար) տարածութունը այժմ ամբողջ Ղարաբաղում հավասար է 400 գեսյատինի: Պիտի ընդունել, վոր մինչև պատերազմը շերամի թթենիների տարածութունը յեղել է կրկնակի: Գյուղացիները 1917—1921 թ. շերամի թթենիները պատվաստել են—խիսկան թթենու վերածել: Շատ տեները պատվաստել են—խիսկան թթենու վերածել: Շատ տեները կտրել են և նրանց տեղը հացահատիկներ ցանել:

Անցյալում շերամապահութամբ աչքի յեր ընկնում Դիզակը: Այսոր էլ Դիզակը չի կորցրել իր առաջնութունը: Յերկրորդ տեղը բռնում է Վարանդան, յերրորդ տեղը՝ Ջրաբերդը և միայն տեղը՝ Սահենը: Թե մինչև պատերազմը Ղարաբաղում վորվերջին տեղը՝ Սահենը: Թե մինչև պատերազմը Ղարաբաղի վիճաբան բոժոժ է ստացվել, այժմ դժվար է տեսլ: Ղարաբաղի վիճակագրական բաժնի վարիչ ընկ. Միրզայանի հաշվով մինչև պատերազմը Ղարաբաղը տված պիտի լինի 7500—8000 փութ թաց (2500 փութ չոր) բոժոժ: Թե 1917—1923 թ. վորքան սերմ է Ղարաբաղում բաժանվել և վորքան բոժոժ ստացվել, յես չկարողացա իմանալ: Այդ թվականներին յերկիրը խոռը գրութան մեջ է յեղել, իսկ 1921—1923 թ. շրջանը վիճակագրական բաժին չի ունեցել:

\*) Այդ կայանը գեո իր միսին չկատարած փակվում է:

1924 թվականին «Ազշուկը» (Азшелк) իր Աղզամի ներկայացուցչի միջոցով Ղարաբաղին ավել է 2033 տուփ սերմ, վորի 74%-ը Ֆրանսիական ֆիրմայի յե յեղել, իսկ մնացածը՝ ուրիշ ֆիրմաների: Այդ սերմից

Դիզակը ստացել է—	1243	տուփ
Վարանդան » »	490	»
Զրաբերդը » »	300	»

2033 տուփ

Բացի դրանից Դիզակը Հազրութի կայարանից ստացել է 300 տուփ խտրական ֆիրմայի սերմ: Նշանակում է ամբողջ Ղարաբաղը 1924 թ. ստացել է 2333 տուփ.

Դիզակը . . . . .	1543	տուփ	66%
Վարանդան . . . . .	490	»	21%
Զրաբերդը . . . . .	300	»	13%

Ընդամենը 2333 տուփ 100%

70 գյուղ (գյուղերի 1/3 մասը) Ղարաբաղում զբաղվում է շերամապահութամբ: Հիշյալ գյուղերից 10-ը շերամի սերմ ստացել է 50 տուփից ավելի: Այդ գյուղերն են.

Դ ի զ ա կ ու մ	
ա) Հազրութը . . . . .	171 տուփ
բ) Բանաձորը . . . . .	168 »
գ) Տ ո դ ը . . . . .	120 »
դ) Առաքյուլը . . . . .	86 »
ե) Զիրակունը . . . . .	73 »
զ) Զորը (Սուր) . . . . .	62 »
է) Տաղասըրը . . . . .	59 »
Վ ա ր ա ն դ ա յ ու մ	
ա) Գ ի շ ը . . . . .	267 տուփ
Զ Ր ա բ ե ր դ ու մ	
ա) Վերին Զայուն . . . . .	78 տուփ
բ) Ներքին » . . . . .	82 »

Շերամապահութամբ զբաղվող գյուղերից 50%-ից ավելին ստացել է 15 տուփից վոչ պակաս:

1924 թ. յուրաքանչյուր տուփ սերմից ստացվել է 1 փութ 30 գրվանքա թաց բոժոժ: Կոլոր թվով ստացվել է Ղարաբաղում 1924 թ. 4000 փութ թաց բոժոժ (կամ 1300 փութ չոր):

Բոլոր բոժոժը կողերատիվը գնել է գյուղացիներից և հանձնել Ղարաղպետառի (Ղարաբաղի—Աղզամի առևտրական ընկերությունը) տրամադրության տակ գտնված մանվածարանները թել պատրաստելու համար:

1925 թ. մարտին «Քեյբերլիզի» Ստեփանակերտի ներկայացուցչի միջոցով ստացվել է Ղարաբաղի համար 1964 տուփ սերմ.

Դիզակի գավառը ստացել է	1103	տուփ
Վարանդան » »	271	»
Զրաբերդը » »	590	»

Ընդամենը 1964 տուփ:

1925 թվին սերմ պակաս է բաժանվել, քան 1925 թվին: Այս յերևույթը պիտի բացատրել նրանով, վոր 1924 թ. բոժոժը ցածր է գնահատվել: Գյուղացին ոգուտ քիչ է ստացել Բացի դրանից 1924 թ. սերմը բաժանելիս, գյուղացին պարտավորվել էր ամեն տուփին մտցնել 6 գրվանքա թաց բոժոժ, Գյուղացիներին 6 գրվանքա թաց բոժոժի փոխարեն, վերցրել են 6 գրվանքա չոր բոժոժ:

\*\*\*

Մինչև պատերազմը Լեռնային Ղարաբաղում զարգացած է յեղել վոչ միայն շերամապահությունը, այլ և մետաքս մանելու արդյունադործությունը: Մինչև անցյալ դարու 60 թվականները Անդրկովկասում յեվրոպական յոլվի մետաքսի գործարաններ չկային: Անցյալ դարու 50-ական թվականների վերջին Յեվրոպայում մետաքսի վորդի սաստիկ հիվանդություն է առաջանում: Յեվրոպացիք սկսում են դրսից և Անդրկովկասից սերմ ու բոժոժ ներմուծել: Այդ ժամանակ է, վոր Յեվրոպան և Ռուսաստանի կենտրոնը հետաքրքրվում են Անդրկովկասով: 1863 թ. Մոսկվայի հայտնի մետաքսագործ Ալեքսեյեվը կառուցում է Նուխում 192 հայտնի մետաքսագործ Ալեքսեյեվը կառուցում է Նուխում 192 հայտնի մետաքսագործ մի մետաքս մանելու գործարան: Այդ միգազահից բաղկացած մի մետաքս մանելու գործարանում: Լեռնյն ժամանակները բացվում են գործարաններ և Ղարաբաղում: Ղարաբաղի գործարանատերերը մեծ մասամբ յեղել են այդ բաղցի հայեր, վորոնք ոտարության մեջ փոզ են դիզել և այդ փոզի մի մասը գործադրել մետաքսի արտադրության վրա: 1865—1915 թվականներին Ղարաբաղում բացվել է 36 մանելու գործարան 1574 դազգահներով և 10 վորտարան (шелкокрутильня) 8888 իլիկներով: Այդ գործարանները մի տարում կլանելիս են յեղել 35000

փուլի, վորից և Ղարաբաղը տալիս և յեղել 2500—3000 փուլի չոր բոժոժ: Ուրեմն տեսնում ենք, վոր Ղարաբաղում բանող գործարանների հում նյութի մեծ մասը ստացվելիս և յեղել զբսից (Քուլթայիսի նահանգից, Անդրկասպյան յերկրից, Պարսկաստանից և այլն): Ղարաբաղի գործարանների շատությունը բացատրվում և նրասակավանդությամբ և աշխատող ձեռքերի գերաբազարությամբ: Արագ աճող գյուղացիությունը չի կարողացել հողից ստացած բերքով ապրել: Նա շարունակ գաղթել և ոտար յերկրներ: Չնայելով մեծ արտագաղթի, յերկրում շարունակ մնալիս են յեղել ավելնորդ ձեռքեր: Փողատերերը բաց էյին անում գործարաններ, վորպեսզի յերկրի ներսի եփան բանվորական ձեռքերը սպասգործեն: Չնայելով, վոր բոժոժի 90% զբսից եր ներմուծվում, բայց և այնպես գործարանատիրոջ վրա թեղը շատ եփան եր նստում: Այս հանգամանքը բացատրվում եր նրանով, վոր Ղարաբաղում թե փայտն եր եփան և թե բանվորական ձեռքերը: Ահարոնյան յեղբայրների Բալուջայի գործարանի բանվորները մինչև պատերազմը որը ստանալիս են յեղել 20—30 կոպեկ: Իսկ անչափահասները և արբունքավորները (подростки)՝ նույն իսկ 5—10—15 կոպ.: Հասկանալի յե, վոր նման շահագործվող պայմաններում հեռու տեղերից բոժոժ ներմուծելը ձեռնառու կլիներ: Գործարաններից 24 կառուցվել և մինչև 1900 թվականը: Պարզ և, վոր զբանք բոլորն ել կարոտ են վերանորոգման: Գործարանների շատությամբ առաջին տեղը բռնում և Սաչենը, յերկրորդ տեղը՝ Դիզակը, հետո գալիս են Վարանդան և Զրաբերդը:

Դավաններ	Մետաքսի թեղ մանելու գործարան		Մետաքսի թեղ վորտրելու գործարան	
	Գործարանների թիվը	Դազգահներ	Գործարանների թիվը	Իլիկներ
Սաչեն . . . . .	24	948	7	7748
Դիզակ . . . . .	9	454	3	1140
Վարանդա . . . . .	2	120	—	—
Զրաբերդ . . . . .	1	52	—	—
	36	1574	10	8888

36 մանելու գործարաններից 33-ը գտնվում են Սաչենում և Դիզակում: Բոլոր վորտրելու գործարանները գտնվում են նույնպես Սաչենում և Դիզակում: Այդ բացատրվում և նրանով, վոր Դիզակը և Սաչենը Ղարաբաղի ամենից հողագուրդ վայրերն են: Պետք և վոր Դիզակը Սաչենից ավելի շատ գործարաններ ունենար, վորովհետև սակավահողությամբ առաջին տեղը բռնում և Դիզակը և միայն երկրորդ տեղը՝ Սաչենը: Բայց վորովհետև այստեղ Սաչենի կենարոնումն և գտնվում Շուշին, վորը Անդրկովկասի շերամապահության յերկրորդ կենարոնն եր, հետո Սաչենի վրայով և անցնում Շուշի-Յեվլաղ տանող խճուղին, զբա համար մեր կապիտալիստները նպատակահարմար են համարել ունենալ ավելի գործարաններ Սաչենում, քան Դիզակում: Բոլոր գործարաններում մինչև պատերազմը պատրաստվում եր 7—8 հազար փուլ թեղ (35000 չոր բոժոժից):

Համաշխարհային և ազգամիջյան պատերազմների ժամանակ Ղարաբաղի ծաղկած մետաքսի թեղի արդյունագործությունը տակն ու վրա յե լինում: 1920 թ. շրջանի գործարանների կեսից ավելին վոչնչացան: Այժմ նախկին դազգահներից և իլիկներից հնարավոր և բանեցնել միայն 25—30%-ը: Պիտանի գործարաններն ել հին սիստեմի յեն և կարոտ վերանորոգման:

\* \*

1922 թվից մետաքսի թեղի արտադրությունը նորից սկսում և վոտքի կանգնել: 1922 թ. բանել են միայն 5 թեղի գործարաններ 133 դազգահով: Բոլոր գործարանները միասին աշխատել են 158 որ: 3-ը աշխատել են Դիզակում (Առաքյուլ, Հալուստեղ և Եղիշեն) և 2-ը՝ Սաչենում (Դայրան և Սնձերխատան): 500 փուլ չոր բոժոժից բոլոր գործարանները 1922 թ. քաշել են 98 փուլ թեղ վորից Դիզակը՝ 22 փուլ, իսկ Սաչենը՝ 76 փուլ: 5 գործարանից Ազդրկի կողմից պետականացվել և միայն 1 գործարան (Սնձերխատանի), իսկ մնացած 4-ը շահագործվել և մասնավոր մարդկանց ձեռքով:

1923 թ. բանել են 11 մանվածարան և 1 վորտրարան: Դրանցից 3-ը 70 դազգահով 240 որ Դիզակումն են բանել, իսկ 8-ը 259 դազգահով 581 որ՝ Սաչենում: Դիզակում 1923 թ. բանել են միայն 1922 թվին բանող գործարանները, իսկ Սաչենում բանել են. Բաղառի, Դայրավի, Դաշբլաղի, Բիշլանքենդի, Սարգաբաշենի, Սեյիդբեգլիյի, Սինձերխատանի № 1 և № 2 գործարան:

ները: Դիզակի 3 գործարանը տեղային գործկոմը ավել եր կոպերատիվներին ոգտագործելու համար: Սաչենի 2 գործարանները արվել եր նախկին տերերին, իսկ 6 մանվածարանները և 1 վորարանը (Իաշալթիյինը) ուրիշ մասնավոր մարդկանց: Բոլոր գործարանները 1600 փութ չոր բոժոժից քաշել են 320 փութ թել, վորել 61<sup>0</sup>/<sub>0</sub>-ը ավել և Սաչենը, իսկ 39<sup>0</sup>/<sub>0</sub>-ը Դիզակը: 1823 թ. վորրվել և ընդամենը 5 փութ թել:

1923 թ. թե վորքան բանվոր և աշխատել բոլոր գործարաններում, դժվար և ասել: Միայն Ղարաբաղի վիճակագրական բաժինը կարողացել և իմանալ 6 մետաքս մանելու և 1 մետաքս վորրելու գործարանների բանվորների թիվը: Այդ 7 գործարանում բանել են 326 հոգի, վորից զուտ բանվորներ յեղել են 290 հոգի: Բանվորներից 268 հոգի կանայք են յեղել, իսկ մնացածը՝ աղամարդիկ: Պիտի յենթադրել, վոր 1923 թ. բոլոր գործարաններում աշխատող բանվորների և ծառայողների թիվը 700 հոգուց ղենը չի անցել:

1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեյջանի կենագործկոմի հրովարտակի հիման վրա Ղարաբաղը ստանում և ինքնավարություն: Գործարանները այդ որվանից Ազըրկից անցնում են ինքնավար Ղարաբաղի շրջգործկոմին: Վորովհետև շրջանը գեո չուներ իր ժողովրդական տնտեսության բարձրագույն Սորհուրդը (ժ.Տ.Ք.Ս.), գրա համար ժամանակավորապես թելի գործարանները անցնում են Ստեփանակերտի կոմմունալ տնտեսության (կոմունխոդին):

1924 թ. բանել են միայն 7 գործարան, վորոնցից 2-ը Դիզակում (Հազրութ, Յեղիշա), իսկ 4-ը Սաչենում (Իաշալթի 1, Կիլաքենդ 1, Սինձիրխատան 2): Գործում եր և Իաշալթիյի մետաքս վորրելու գործարանը: 1924 թ. Դիզակի գործարանները անցնում են Ղարապետին, իսկ Սաչենի գործարանները 3 տարվա ժամանակով արվում և մի տարով): Մանելու գործարաններում աշխատում էին 209 գազգահ, իսկ վորրելու գործարանը բանում եր 1220 իլիկով: Բոլոր գործարաններում աշխատել են 435 մարդ, վորոնցից կանայք կազմել են 91,2<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Զափահասները կազմում էին աշխատողների 96,6<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Շարաթվա մեջ չափահասները աշխատում էին 46 ժամ, արբունքավորները՝ (подростки) 33 ժամ, իսկ անչափահասները՝ 22 ժամ: Բանվորների աշխատավարձի մի-հիմունը յեղել և ամիսը 13 ո. 92 կ., մաքսիմումը՝ 33 ուրբ. 60 կ. (վարպետները): Գործարանների մեծ մասը բանում եր շողու-

ողնությամբ: Միայն Դաշալթիյի վորրելու գործարանը բանում եր ջրի ոգնությամբ: Գործարաններից և վոչ մեկը անընդհատ ամբողջ տարին չի բանել: Ամենից յերկար բանել և Իաշալթիյի վորրարանը—225 որ (1924 1/1—10/X) և ամենից քիչ՝ Իաշալթիյի—62 որ (1924 թ. 8/1X—19/XI): 6 մանվածարանում պատրաստվել և 474 փութ թել (Դիզակում 206 փութ և Սաչենում 269 փութ): Բացի թելից զուրս և յեկել և 449 փութ մնացորդ (Ֆրիզոն 184 փութ, նելադ 131 փ., բասենե 134 փ.): Բացի զրանից Դիզակի գործարանները ավել են 66 փութ 31,5 գրվանքա չխար, 32 փութ 29<sup>1</sup>/<sub>2</sub> գրվ. թոմփալ և 11<sup>1</sup>/<sub>2</sub> գրվ. վազաթել (шелк-ваза): Իաշալթիյի վորրարանը ավել և 92 փութ վորրած թել:

Սաչենի գործարաններում 1924 թ. թել պատրաստվել և ղյուղացու չոր բոժոժից: Գյուղացին ամեն գործարան մտցրած 6 փութ չոր բոժոժի փոխարեն ստանում եր 1 փութ պատրաստի մանած թել: Սովորաբար 5 փութ չոր բոժոժը տալիս և 1 փութ թել: Նշանակում և գործարանի բանեցնողները ամեն 6 փթի մեջ շահում էին 1 փութ չոր բոժոժ:

Իաշալթիյի վորրարանը մյուս գործարաններում մանած թելը մանում եր փութը 80 մանեթով: Իաշալթիյի գործարանում են իսկ Թիֆլիսից ու Բագվից 1924 թ. վորրելու համար հում թել և բերվել\*):

Տեսնում ենք, վոր 1922—1924 թվին թելի արտադրությունը զգալի չափով բարձրացել եր, բայց նա գեո չեր հասել նախապատերազմյան արտադրության քանակին:

1924 թ. հում թելի փութը ծախվել և 350—400 ուրլիով, այն ինչ փութը նստում եր 351 ո. 62 կոպ.:

Ինչո՞վ բացատրել այդ յերևույթը.

Այդ յերևույթը բացատրվում և նախ նրանով, վոր 1924 թ. ուսական շուկան մետաքսի թելի մեծ կարիք չուներ: Մինչև Համաշխարհային պատերազմը Անդրկովկասի մետաքսի թելը ամբողջովին կլանում եր Ռուսաստանը: Իսկ 1924/25 տնտեսական տարում Ռուսաստանը Անդրկովկասում պատրաստած թելի <sup>1</sup>/<sub>10</sub> տարում ևլ չեր կլանում, վորովհետև մետաքսի գործվածքների արտադրությունը այդ ժամանակ գեո չեր. հասել նախապատերազմյան զրության 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ին:

Վորպեսզի թելը եժան նստի, պետք և միշարք աշխատանք-

\*) 10 փութ բերվել և Բագվից, 10 փութ ևլ Թիֆլիսից:

ներ տարվեն: Նախ և առաջ գործարանները պիտի արմատական  
բեմնադրու յենթարկել: 1915 թ. մինչև մեր որերը Ղարաբաղում չի  
կառուցվել և վոչ մի գործարան, այն ինչ Յեվրոպայում, նամա-  
նավանդ Ամերիկայում, վերջին 10 տարվա ընթացքում տեքստիլ  
արդյունաբերություն մեջ տեխնիկայի հսկայական զարգացում և  
տեղի ունեցել: Զպիտի մոտանալ, վոր Ղարաբաղի գործարանները  
<sup>3/4</sup> մասը կառուցվել և մինչև 1900 թվականը:

Թելի ետանություն կնպաստի և յերկրի ելքարոֆիկացի-  
ան: Յերկրի գետերը և գետակները (Թարթառ, Սաչենի գետ, Գար-  
գառ, Կուրուչայ) պիտի ոգտադործել մետաքսի արդյունագոր-  
ծությունը զարգացնելու համար: Բնության ձրի ուժերի ոգտա-  
գործումը նյութի արժեքը զգալիորեն կիջեցնի:

Պիտի աշխատել, վոր հում նյութի տեսակետից Ղարաբաղը  
գառնա միանգամայն անկախ: Յեթե առաջները հնարավոր էր  
հետու տեղերից բոժոժ ներմուծել և այնուամենայնիվ ոգուտով  
թել ծախել, այդ կատարվում էր շնորհիվ բանվորական ուժերի  
ստակալի շահագործման: Այժմ հնարավոր չէ աշխատավարձը իջե-  
ցնել և 5—40 կ. հասցնել: Ղարաբաղի գետերի հովիտներում հնա-  
բավոր և շերամի թթենիների տարածությունը կրկնապատկել ու-  
յեռապատկել: Յեվ յեթե այդ իրականանա, այն ժամանակ Ղարա-  
բաղի գործարանները կխով չափ բոժոժով կապահովվեն:

Այժմ մի քանի խոսք էլ Ղարաբաղի այսօրվա մետաքսի  
արդյունագործության և նրա հեռանկարների մասին:

Նախորդ յերեսներից պարզվեց, վոր համաշխարհային պա-  
տերազմից առաջ Ղարաբաղում բանում էր 36 մանվածարան և  
10 վորտարան: Համաշխարհային պատերազմից և ազգամիջյան  
կոնվեկերից հետո մանվածարանների կեսը (ուղիղ 18-ը) փչացել,  
վոչնչացել էր և մնացել 18-ը, իսկ վորտարաններից մնացել էր  
միայն մեկը: Մնացած գործարաններն էլ կանոնավոր չէին բա-  
նում: Պիտանի գործարանների մի մասը կապալով և տրվում:  
Թե մինչև 1927 թ. կապալով տրվածները տարին վորքան թել  
էին պատրաստել, այդ ցույց և տալիս հետևյալ աղյուսակը.

1923 թ. 5	գործ.	(կապալ տրվ.)	500 փ.	չոր բոժ.	պատր.	և	98 փ.	թել
1924 թ. 4	»	»	»	»	»	»	»	»
1925 թ. 6	»	»	1600	»	»	»	320	»
1926 թ. 13	»	»	2303	»	»	»	474	»
	»	»	2700	»	»	»	543	»

1925 թ. հուլիսից կազմակերպվում և Ղարաբաղի մետաքսի

տրեստը (Каршелктрест), վորը գործի յե անցնում 1926 թ. հու-  
նիսի մեկից: Այդ ժամանակվանից տրեստը մեծ աշխատանք և  
կատարել: 1926/27 արդ. տարում տրեստի տրամադրությամբ տակ  
եր գտնվում 4 մանվածարան (Ղալաղի, Սինիթիրխտանի 2 գործա-  
րանները և Ստեփանակերտինը) և մեկ վորտարան (Դաշալթում):  
Ծրագրով 1926/27 տարում տրեստի գործարաններում պետք է  
մանվել 756 փուլ թել, բայց մանվել է 900 փուլ: Բացի դրա-  
մանվել 756 փուլ թել, բայց մանվել է 90 փուլ թել: Բացի տրեստի  
նից 1926/27 տարում վորտրվել է 90 փուլ թել: Բացի տրեստի  
մեքքի տակ յեղած գործարաններից բանել են և ուրիշ 10  
գործարաններ (մանվածարաններ), վորոնք կապալով էր տրված:  
Թե մանավոր գործարանները 1926/27 տարում վորքան թել են  
արտադրել, չկարողացա պարզել:

1927/28 տարվա սկզբից տրեստի տրամադրության տակ են  
գտնվում 6 մանվածարան և 1 վորտարան:

Տրեստի կառավարիչ ընկ. Մուսայեկյանից իմացա, վոր  
1927/28 տարվա համար արդեն 21600 փուլ թաց բոժոժ և գնված  
(15000 կարյազին և Աղչամից, 3600 փուլ Գութայիսից և 3600  
փուլ Լ. Ղարաբաղից): Բոժոժը պատրաստել են. Ղարաբաղի գյուղ-  
կույր, Քեյթերլիզին և Գրուզլուիլը:

Ղարաբաղի մետաքսի տրեստի վերջին յերկու տարիների ունե-  
ցած հաջողությունը բացատրվում է նրանով, վոր Մոսկվայի շուկա-  
րեստը այժմ նրան ֆինանսական ոժանգակություն և ցույց տա-  
լիս: Առաջ (1922, 23, 24 թ. թ.), յերբ խորհրդային Ռուսաստա-  
նի մետաքսեղենի արդյունաբերությունը համարյա կանգնած էր,  
Անգրկովկասում պատրաստած թելի և բոժոժի վաճառման խնդրի-  
բը, ներքին շուկա չլինելու պատճառով, դժվարացել էր: Բայց  
բը, յերբ Ռուսաստանի մետաքսեղենի գործարանների ձիննե-  
աջոժ, յերբ Ռուսաստանի մետաքսեղենի գործարաննալ, թելի և բոժոժի  
ույներով նորից սկսել և ծուխ բարձրանալ, թելի և բոժոժի  
երացումը (реализация) հեշտանում է: Ղարաբաղի մետաքսի տը-  
րեստը Մոսկվայի շուկաորեստից ընթացիկ տարում (1927/28) 27804  
կիլո մանվածքի պատվեր և ստացել: Ստացել է արդեն 550000  
կիլո թել փող: Պատվերի համաձայն 27804 կիլո թելից 7070 կի-  
լո յել Դաշալթի գործարանում պիտի վորտրվի:

Տրեստը Անգրպետառի (Закавказье) միջոցով Իտալիայում  
պատվեր էր տվել նոր սխտեմի գործարան (96 զազայից բաղ-  
կացած և 8 աչքանի) վորի ամբողջ սարքավորումը այս հունվա-  
բին (1928 թ.) Իտալիայից արդեն հասել և Բաթում: Գործարանը  
ունի հատուկ մաս, վորը 24 ժամում թաց բոժոժը չորացնում է

(այժմվա գործարաններում չորացնելը տևում է 3 ամիս): Գործարանը ունի նաև բոժոժը մեքենայորեն տեսակների (СОРТ) բաժանող մեքենա: Այդ մեքենան իր վորակով Ազրբեջանում առաջինն է: Անգամ նույնվա մետաքս մանող գործարանները նման մաս չունեն:

Մտեփանակերտում նոր բացվելիք գործարանի շենքը մինչև 1928 թ. ամառը պիտի ավարտվի: Մի քանի ամսից հետո (հավանորեն 1928/29 տնտեսական տարվա սկզբին) նոր գործարանը կսկսի աշխատել:

1926/27 տարում տրեստը մոտ 40000 ո. ոգուտ է ստացել: Վորի 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ը ծախավելու յե մետաքսագործության զարգացման համար:

Տրեստի նպատակն է ժամանակի ընթացքում բոլոր գործարանները, կապալի ժամանակը լրանալուց հետո, իր ձեռքը վերցնել:

VIII

ԱՐՈՏԱՏԵՂԻՆԵՐ ՅԵՎ ՔՈՉԻ ԽՆԴԻՐԸ

Ղարաբաղի արոտները մեծ մասամբ գտնվում են շրջանի արևմտյան մասում, ամենարարձր սարահարթների վրա: Արոտատեղիները սկսվում են Մուսլի լեռնաշղթայից, Կըրի-Կղի, Բիրսի և Դիզափայտի վրայով իջնում են Արաքսի հովիտը: Ղարաբաղի արոտները Քրդիստանի և խորհրդային Հայաստանի լեռնային արոտների շարունակությունն են կազմում: Ղարաբաղի արոտների ընդհանուր տարածությունը հավասար է 38000 գեսյատինի, վորից 12000 գեսյատինը պիտանի չէ: Պիտանի արոտները գավառների վրա այսպես են բաժանվում.

Խաչենն ունի . . . . .	9000	գեսյատին
Ջրաբերդը՝ . . . . .	15000	»
Դիզակը՝ . . . . .	2000	»
	<hr/>	
	26000	»

Ղարաբաղի արոտատեղիների ճիշտ տարածությունը վորոշել անհնարին է, քանի վոր Ղարաբաղի և Քրդիստանի մեջ յեղած սահմանային արոտային վեճը (10773,5 գեսյատինի) մինչև որս չի լուծված:

Իր արոտներից Ղարաբաղի գյուղացիությունը շատ քիչ է

ուգտվում: Արոտները 70<sup>0</sup>/<sub>0</sub>-ից ոգտվողը դրսի քոչվորությունն է: Ղարաբաղը ամառ ժամանակ վոչ միայն իր արոտներում տեղ է տալիս քոչվորության, այլ և տարին 4—6 ամիս հանդիսանում է այն ընտանի կամուրջը, վորի վրայով դեպի Քրդիստանի և Հայաստանի լեռներն են անցնում ամբողջ Քուռի և Արաքսի հովիտներում ապրող քոչվորների և կիսաքոչվորների հոտերը: Ղարաբաղի տարին մոտ 1 միլիոն խոշոր և մանր յեղջյուրավորներ են անցնում: Այստեղից հասկանալի կլինի, թե վորքան տուժում է տեղացի ազգաբնակչությունը այդ տեղափոխություններից: Քոչվորությունը տեղացիների արտերն է արածացնում, խոտահարքերը կոխտում և մի շարք ուրիշ տեսակի ֆլաններ հասցընում:

Միապետության համար քոչը մի միջոց էր հայ-թուրքական անտագոնիզմը խորացնելու (1905 թվականը):

Բացի հիշածս ֆլաններից, քոչվորությունը իր հետ բերում է և մի սոսկալի աղետ՝ ժանտախտ (չումա), վորը, վորոշ տարիներում, Ղարաբաղի խոշոր յեղջյուրավորների 25—50<sup>0</sup>/<sub>0</sub>-ը լափում է: 1925 թ. ամառը լեռնային Ղարաբաղում հազարավոր անասուններ ժանտախտի գոհ գնացին: Ղարաբաղի սակավաթիվ անասնաբուժները իրենց սեփական ուժերով չումայի առաջն առնել չեն կարողանում, վորովհետև նրանց հաղիվ է հաջողվում շրջանի կարիքների մինիմումը հոգալ: Չումայի առաջն առահոգը իր վրա պիտի վերցնի վոչ միայն Ղարաբաղի կառավարությունը, այլ նաև Ազրբեջանի հողտղիմատը, վորովհետև Ղարաբաղի վրայով անցնում են Ազրբեջանի 3 գավառների (Սալյանի Աղլամի և Ջեբրայիլի) հոտերը:

Քոչը Յեվրոպայում այժմ գոյություն չունի: Դա հնության մի այնպիսի ֆնացորդ է, վորին պետք է վերջ տրվի և մեղանում: Դաշտում և գետահովիտներում ապրող գյուղացին և սեղանում: Դաշտում և գետահովիտներում ապրող գյուղացին և սեղանում, իսկ անասնապահությամբ պիտի զբաղվեն լեռնային և նախալեռնային մասում ապրողները: Բայց այժմ այդպես չէ: Դաշտում ապրող մահմեդականությունը յերկրագործությամբ շատ քիչ է զբաղվում և մեծ տեղ տալիս անասնապահության: Իսկ լեռներում ապրող Ղարաբաղի շինականը եներդիայի մեծ մասը տալիս է հողագործության, իսկ քիչ մասը՝ անասնապահության: Սա անհորմալ յերևույթ է: Մեր անասնապահան որգանները և անանձնապես պետպլանը ամեն ջանք պիտի թափեն դաշտում ապ-

րողներին կապել հողի հետ: Միևնույն ժամանակ պիտի աջակցել վորպեսզի նրանք դաշտավայրերում սովորեն ամեն տեսակի կուլտուրական բույսեր աճեցնել: Յեթև թուրք գյուղացին կարողացավ իր պարուստը հայթայթել հողից, նա կամաց-կամաց կբաժանվի քոչից: Լեռներում պարզ հայ գյուղացուն պիտի հրահրել, վոր նա դադարի Ղարաբաղի տերիտորիայի 60<sup>0</sup>/<sub>0</sub>-ի վրա կուլտուրական բույսեր և հացահատիկներ ցանել: Դրա փոխարեն պիտի ամեն կերպ նպաստել սովորեցնել, վոր նա բարձր տեսակի անասնապահությամբ զբաղվի: Հացահատիկների փոխարեն գյուղացին թող լեռներում ցանի կարտոֆիլ, խոտեր և ուրիշ արմատապտուղներ, վորոնք ձմեռը կհանդիսանան լավ կեր կենդանիների համար: Յեկուպյում այդ հարցը լուծված է հոգուտ մեր կարծիքի: Վաղ թե ուշ արոտատեղիների և քոչի հարցը պիտի լուծվի նպատակահարմար կերպով և մեղանում:

Քոչը անցնում է Ղարաբաղի տերիտորիայի հետևյալ ճանապարհներով. ա) Ասկարան—Շուշի—Լիսազորսկ, բ) Ասկարան—Բալուջա, գ) Գանձասարի վանքի մոտով, դ) Թարթառ—Սաղսաղանի կամուրջ, ե) Սոնաշեն - Աղսղան—Շուշի, զ) Տողի—Թաղի ձորը (туго-тагское ущелье):

Քոչվորների յուրաքանչյուր գյուղ ունի արոտավայրերում իր մշտական տեղը: Ղարաբաղի կառավարութունը պարտավոր է այդ տեղերը հասկացնել յեկվոր քոչվորներին: Արոտները արբվում են շատ եժան գնով: Նրանք բաժանվում են 4 կատեգորիայի.

- I-ին կատեգ. արոտատեղ. քոչվորն. սեզ. 1 դես. տալիս են 75 կ.
- II » » » » » » » » 55 »
- III » » » » » » » » 40 »
- IV » » » » » » » » 25 »

Հարթ տեղերը առաջին կատեգորիայի մեջ են մտնում, իսկ ժայռոտ տեղերը՝ չորրորդ կատեգորիայի: Այլպան արոտների բարձրութունը համնում է Ղարաբաղում մինչև 11219 փոտնաչափ: Մոավ սարը (11219 փոտնաչափ), Բիրս (8989), փոքր Բիրս (7340), Սաղսաղան (7083), Դիզափայտ (8186): Հիշյալ սարերը ծածկված են փարթամ և անուշաբույր խոտերով, վորոնք, իրենց համով, շվեյցարական ալպերի խոտերից յետ չեն մնում:

Արոտներից ստացած ոգուտը շատ աննշան է: 1923/24 թ. ստացվել է ընդամենը 14000 ուտըլի յեկամուտ, վորի 50<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

մտնում է կենտրոնական կառավարության գանձարկը, իսկ մյուս 50<sup>0</sup>/<sub>0</sub>-ը գնում տեղական գավործկոմիտեի ոգուտն: 1926—27 տարում ստացվել 17.861 ուտը. 0,7 կ. ոգուտ:

Ղարաբաղը իր արոտներից ավելի քան է ստանում, քան ոգուտ:

IX  
Ա. Ն Տ Ա. Ռ Ն Ե Ր

Անտառները Ղարաբաղի ամենամեծ հարստությունն են: Սրանից 100—150 տարի առաջ Ղարաբաղի տերիտորիայի 75<sup>0</sup>/<sub>0</sub>-ը ծածկված է յեղել անտառներով, իսկ 50 տարի առաջ տերիտորիայի կեսն է անտառապատ յեղել: Վերջին 50—60 տարիների ընթացքում, նամանավանդ 1917—1922 թ., շրջանի անտառների 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ը վանդալականորեն կտրավել են: Չնայելով այդ բոլորին, այսօր էլ Ղարաբաղի անտառները բռնում են մեծ տարածույթ: Ղարաբաղի անտառների տարածությունը հավասար է 140000 դեսյատինի, \*) վորը կազմում է ամբողջ տերիտորիայի 37<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Սա բավականի մեծ տոկոս է: Բայց ափսոս, վոր անտառները յերկրում համահավասար չեն տարածված. արևելյան մասը համարյա զուրկ է անտառներից, իսկ արևմտյան մասը անտառներով չափազանց հարուստ է: Վորպեսզի Ղարաբաղի անտառաշտությունը պարզ ենք, անհրաժեշտ էմ համարում համեմատել նրանուրիշ պետությունների հետ.

Պետություններ	Անտառաշտություն (лесистость)	
	%	%-ով
Ֆինլանդիա . . . . .	58	
Շվեդիա . . . . .	49	
Կանադա . . . . .	38	
Մ. Պետություն . . . . .	37	
Ն. Միություն . . . . .	35	
Նորվեգիա . . . . .	22	
Ֆրանսիա . . . . .	16	
Անգլիա . . . . .	5	
Անդրկովկաս . . . . .	18	
Հարավ-Ռուսիա . . . . .	73	
Աջարիա . . . . .	59	
Աբխազիա . . . . .	52	
Լ. Ղարաբաղ . . . . .	37	**)
Վրաստան . . . . .	25	
Ադրբեջան . . . . .	14	
Հայաստան . . . . .	11,8	

\*) Տես Надобное хозяйство закавказья в цифрах стр. 83:  
\*\*) «Обяснительная записка к государственному бюджету З.С.Ф. С.Р. на 1925/26 бюджетный год часть эконо. стр. 95-ում ավագ է, վոր Ղարաբաղի անտառաշտությունը 26<sup>0</sup>/<sub>0</sub>-է:

Այս թվերը ցույց են տալիս, վոր Ղարաբաղը իր անտառաշատությամբ (лесистость) Անդրկովկասի միավորների մեջ առաջնակարգ տեղերից մեկն է բռնում:

Ղարաբաղի անտառները գավառների վրա այսպես են բաժանվում.

Անտառամասեր (Лесные дачи)	Մ ա կ ե ր ե վ ու յ թ ր	
	Ընդհանուր մակերեսը	Անտառների իսկական մակերեսը
<b>1. Դիզակ</b>		
ա) Թումասի անտառամաս . . . . .	34381 դեա.	21338 դեա.
բ) Ովանեսի անտառամաս . . . . .		
<b>2. Խաչենի</b>		
ա) Չանախչիյի անտ.	8365 »	7055 »
բ) Մաղսաղանի »	25281 »	16000 »
գ) Բաղիրխանի »	7495 »	5000 »
դ) Խաչենի »	1000 »	800 »
ե) Խալիֆալինի »	3724 »	1500 »
զ) Չարխլինի »	2000 »	350 »
	<u>47865</u> »	<u>37905</u> »
<b>3. Զրաբերդ</b>		
ա) Չալարինի »	35129 »	28640 »
բ) Մաղաղխի »	22625 »	17000 »
	<u>57754</u> »	<u>45640</u> »
Ընդամենը	140000 դեա	104883 դեա.

Պարզվեց, վոր անտառների հարստությամբ առաջին տեղը բռնում է Զրաբերդը, յերկրորդ տեղը՝ Խաչենը և յերրորդ տեղը՝ Դիզակը:

Անտառների ծառերը տերևավոր են, փշատերև՝ համարյա չկան: Միայն Թումասի անտառամասում տեղ-տեղ յերևում են գիհենու (можжевельник) նոսր տունկեր, իսկ Չանախչիյի և Մաղսաղանի անտառամասերում լեռների կատարներին մեկ-մեկ պատահում են փոքր կարմրածառեր (ТИСС): Այս հան-

դամանքը բացատրվում է նրանով, վոր Քուռի և Արաքսի չոր հովիտները փշատերև անտառներ առաջանալուն չեն նպաստում: Անտառների մեծ մասը կարելի չէ շահագործել, վորովհետև ծառերը 100, 120 և ավելի տարիք ունին: Արդյունաբերական նշանակություն ունին Չանախչիյի, Ովանեսի, Մաղսաղանի, Չալարինի, Բաղիրխանի և Մաղաղխի անտառները:

Թե անտառների ծառերը ինչ տարիքի և տեսակի չեն, ցույց է տալիս հետևյալ ախտակը:

Անտառամասերի անունը (Лесные дачи)	Ծառերի տեսակը				Հասունություն	Բնակարան	Պարզություն (հարկեր)
	Կանի	Պեխ (Իրաճ.)	Հաճարհիտ (ԾԱԿ)	Ուրիշներ			
Չանախչի . . . . .	0,4	0,4	—	0,2	0,6	60—100	20—25
Մաղսաղան . . . . .	0,3	0,4	0,2	0,1	0,6—0,7	60—100 —120 և ավել	25
Չալարի . . . . .	0,4	0,2	0,3	0,1	0,7	80—120 և ավել	25
Ովանեսի . . . . .	0,5	0,4	—	0,1	0,7	20—60 —80 և ավել	15
Բաղիրխան . . . . .	0,3	0,6	—	0,1	0,5	30—60 և ավել	20
Մաղաղխ . . . . .	0,3	0,3	0,3	0,1	0,6	60—80 100—120 և ավել	25

Այս աղյուսակից պարզվում է, վոր Ղարաբաղի անտառների ամենատարածված ծառն է պեխին, յերկրորդ տեղը բռնում է կաղնին և յերրորդ տեղը՝ հաճարհիտն \*): Կան մեծ քանակությամբ լենկուզենի, \*\*): հոնի, լորենի \*\*\*) , հացենի (ЯСЕНЬ), տիղունների և այլ տեսակի ծառեր: Ծառերի 60—70% -ը հասուն են: Հիշյալ անտառամասերի ծառերի մեծամասնության միջին տարիքը 80—100 է:

\*) Տեղացիք ասում են «Հճրկենի»: \*\*) Զրաբերդում շատ վայրենի ընկուզենիներ կան Այնտեղ ընկույզ այնքան շատ կա, վոր չեն կշռում, այլ չափում են: \*\*\*) Տեղացիք ասում են «հլոսնի»:



Մենք տեսանք, վոր Ղարաբաղը հաճարենու անտառներով շատ հարուստ է: Ինչպես Վրաստանում պատրաստած աթոռները և տակառաճաղերն են ներքին և արտաքին շուկաներում մեծ ընդունելութուն գտնում, նույն ընդունելության կարժանանան և Ղարաբաղի հաճարենուց պատրաստածները:

Ղարաբաղում հարյուրավոր ատաղձագործներ կան, վորոնք աշխատանք վորոնելու համար շրջում են Անդրկովկասի բոլոր քաղաքները: Յեթե Ղարաբաղի անտառաշատ վայրերում գործարաններ բացվեն, յերկրի ներսի արհեստավոր—տնայնագործները կզարարեն այլևս թափառական կյանք վարել:

Հաճարենու պտուղներից կարելի չէ ստանալ յուզ կերակրի և սապոնի արտադրության համար: Յուզ ստացվում է սղմիչ (пресс) մեքենայի միջոցով: Յուզից հետո մնացած քուսպը (жмыха), վորը հասնում է պտուղի 60—70%֊ին, հանդիսանում է յեղջյուրավորների և խոզերի համար աննման կեր:

Կաղնի ծառից տեղում պատրաստում են հատկապես սալի անիվի մասեր (КОСЯК—հեցամաս): Կաղնին ևս տալիս է ամենալավ տակառաճաղեր գինու տակառների համար: 1912—18 թ. թ. Զրաբերդում, Իրզախում և Քրդիստանի գավառում ֆրանսիական մի ընկերություն կաղնուց մեծ քանակությամբ տակառաճաղեր եր պատրաստել, վորի մի մասը արտահանել եր, իսկ մյուս մասը մինչև վերջին տարիները մնում է Քրդիստանում և Ղարաբաղում:

Ապացուցված է, վոր Ղարաբաղի կաղնուց պատրաստած տակառաճաղերը վորակով շատ բարձր են:

Ընկուզենուց պատրաստվում է ամենալավ կահ կարասիք, վորը ավելի թանգ է գնահատվում, քան մյուս նյութերից պատրաստածները: Թանգ է գնահատվում ընկուզենու զրուսագաթերթերը (фанерка):

Լորենուց պատրաստում են տախտակ, շրջանակներ, պահարաններ և ամենաընտիր տեսակի փեթակներ: Այժմ Ղարաբաղում գործ է ածվում տների համար տախտակներ գլխավորապես տեղական լորենուց: Սոճիյի տախտակներ ներմուծվում է Վոլգայի ափերից: Լորենու տախտակները սոճիյի տախտակներից վորակով շատ ցածր են:

Հացի ծառից պատրաստում են Ղարաբաղում սամի, լուժ և այլ պարագաներ:

Պիտանի յեն. թեղին, հոնին և այլն:

Բոլոր ծառերը կարելի չէ այս կամ այն նպատակի համար ողտագործել: Բայց այդ ուղղությամբ աշխատանք համարյա չէ տարվում: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, վոր անտառային հողամասերը մեծ մասամբ հեռու յեն ընկած վոչ միտանային հողամասեր (գոնե խճուղիները) Ղարաբաղի անտառաւանց ճանապարհների (գոնե խճուղիները) Ղարաբաղի անտառաները կման յերկրի համար լիկ մեռած կապի տալ: Զպիտի կարծել, վոր Ղարաբաղը ճանապարհների տեսակետից խորհրդային միության մեջ բացառություն է կազմում: Նույն վիճակի մեջ են միության Աջարիան, Արևսպիան, Ազրբեջանը, Հայաստանը և Սիպոնիան: Գործարանների և խիտ աղգարնակության բացակայությունը ճանապարհների կուսական անտառները Ռուսաստանին թյան շնորհիվ Սիբիրի կուսական անտառները: Ռուսաստանին մինչև համաշխարհային պատերազմը տարին տալիս էին մի գեմայաթին 5 կոպ. ոգուտ, 1925/26 արդյունաբերական տարում՝ 1,7 ապրանքային կոպեկ \*):

Հետաքրքիր է, վորքան ոգուտ են տալիս Ղարաբաղի անտառները: 1923/24 թ. մուտք յեղել է 25000 ո., իսկ ծախս՝ 15000 ոուրլի, ուրեմն մաքուր յեկամուտ ստացվել է 10000 ոուրլի: Յուրբանչյուր զեայատինին գալիս է 7 կոպ.: 1925/26 թ. մաքուր յեկամուտ ստացվել է 58309 ոուրլի 86 կոպ.:

Մինչև համաշխարհային պատերազմը Զեբրայելի և Թարթառի անտառային ուսյոնները (лесничество) վոչ մի ոգուտ չէին տալիս: Յեկամուտ տալիս էր միայն Շուշվա անտառային ուսյոնը, վորից պետությունը, մինչև պատերազմը, ստանում էր 25000 ոուրլի ոգուտ:

— Ինչո՞ւ Շուշվա անտառային ուսյոնը ոգուտ էր տալիս, իսկ Թարթառի (Զրաբերդի) ուսյոնը, վոչ:

Այդ յերևույթը բացատրվում է նրանով, վոր Շուշվա ուսյոնի ճանապարհները, մյուս ուսյոնների հետ համեմատած, բավելի լավ պայմաններում են գտնվում: Հետո Շուշին, իբրև մի

\*) Մինչև պատերազմը Գերմանիայի անտառների ամեն մի զեայատինը պետությանը տալիս էր 20—25 ոուրլի ոգուտ, իսկ ֆրանսիայում՝ 10 ոուրլի: Ֆրանսիայի և Գերմանիայի անտառներից մեծ ոգուտ ստանալը բացատրվում է այդ պետությունների զարգացած տրանսպորտով և խիտ աղգարնակչությամբ: Վոր իրոք անտառներից ստացած ոգուտը կախված է վերտիշյալ յերկու ֆակտորներից, այդ ցույց կտան հետևյալ թվերը. 1913 թ. յեկամուտ կուսական անտառների ամեն մի զեայատինը տալիս էր միջինը 1 ո. 33 կ. ոգուտ, բայց նրա տրանսպորտով և աղգարնակությամբ խիտ ուսյոնները (Կիև, Պոդոլ, Սերսոնես, Պալտավա) տալիս էին 17—23 ո. ոգուտ:





կարող, վորովհետև 1926 թ. ղեկավարների տվյալով այստեղի ազգաբնակիչությունը հասնում էր 126000-ի: Այդ թիվը հավանորեն վերաբերվում է դաշտային և լեռնային Ղարաբաղին և Քրդիստանին, վորոնց ազգաբնակիչությունը 300000-ից ավել է:

Գորգագործությունը շրջանում հնարավոր է վերականգնել, յեթե կառավարությունը հատուկ ուշադրություն դարձնի անաչ-նագործների վրա: Այժմ բուրգը այնքան է թանկացել ( 1 փարթե 15—20 ուլարի), վոր Ղարաբաղի միջին անաչնագործը անգոր է իր սեփական ուժերով բուրգ գնել: Ղարաբաղում անհրաժեշտ է բանալ արհեստանոցներ, ուր 1000-վոր այրի կանայք կարող են աշխատանք գտնել: Արտադրությունը գործը ամուր հիմքերի վրա գնելու համար հարկավոր է նախկին, բայց այսօր կորցրած, շուկան ձեռք բերել: Իսկ այդ հեշտ կարելի չէ իրագործել այն դեպքում, յերբ նորից ճաշակով գորգ պատրաստելը առանձին ուշադրության առարկա դառնա: Պիտի իմանալ, վոր Ղարաբաղի կի՛նը ընդունակ է վոչ միայն ընդորինակելու, այլ և ստեղծագործելու, յեթե նրա աշխատանքը միխմալ չափերով վարձատրվի: Զուհեոր կանանց տիտի հավաքել և Լ. Ղարաբաղի 4 կենտրոններում, կամ դո՛նե Ստեփանակերտում, բանալ գորգի և կարպետի արհեստանոցներ: Գորգագործներին պիտի ծանոթացնել նիր թանկարժեք գորգերի և կարպետների վո՛ճի հետ: Իսկ վոճը վերականգնելու համար անհրաժեշտ է Ղարաբաղի բոլոր գավառներից (և դաշտային մասից) ամենալավ և գեղարվեստական նին ու նոր գորգեր և կարպետներ հավաքել և Ստեփանակերտում անաչնագործական մուզեյ բանալ: Բարձրարժեք գորգ պատրաստելու համար վոճի վերականգնումը բավական չէ, դրա հետ միասին պիտի սկսել բուսական չխուհացող գույների գործածությունը առանձին գրադման առարկա դարձնել: Բարբրախտարար բույսերի ոգնությունը թել ներկելու սովորությունը Ղարաբաղում մինչև որս փնացել է: Այսինների ոգնությունը 1925 թ. ամառը ինձ հաջողվեց ծանոթանալ բուսական գույների գործածություն հետ, վորի մասին կարևոր եմ համարում այստեղ խոսել, քանի վոր Անդրկովկասի գրականությունը նման նյութերով շատ աղքատ է:

\* \* \*

Լ. Ղարաբաղում թելին դեղին գույն տալու համար հետևյալ աշխատանքներ են կատարվում: Նախ ներկվելիք թելը կշռում

Ամեն մի գրվանքա թելին վերցնում են  $\frac{1}{4}$  գրվանքա պող-լեղ (շերլեղ), վորը ձգում են ջրով լեճը կաթսայի մեջ, վորպեսզի հարվի: Յերբ պաղլեղախառն ջուրը սկսում է յեռալ, պաղլեղն էլ հարվել, այն ժամանակ կշռած թելը պաղլեղաջրի մեջ են լցնում: Մի քանի ժամ թելը յեփվելուց հետո, կաթսան վերցնում են կրակից, վոր հեղուկը պողի: Պաղելու պրոցեսը սևում է 7—8 ժամ: Այնուհետև թելը հանում են ջրից և 1—2 որ արևի ճառագայթների տակ չորացնում, վորպեսզի, ինչպես ասում են, պող-լեղը լավ նստի: Հետո դաշտից հավաքած «տըղնըժաղիկ» (դեղին ծաղիկ) կոշված խոտը մաս-մաս լցնում են նոր ջրով լցված կաթ-սայի մեջ, վոր ջրի հետ միասին յեռա, գույնը ջրին տա: Մի քանի անգամ կաթսան տըղնըժաղիկ լցնելուց ու յեփ տալուց հետո, ջուրը բավականին դեղնում է: Այդ ժամանակ պաղլեղած ու չորացած թելը լցնում են դեղնագույն ջրի մեջ ու մոտ մի ժամ ու յեփ տալիս: կաթսան կրակից նորից են վերցնում ու թողնում, վոր մոտ մի որ ու գեշեր դեղին հեղուկը թելի հետ միասին փնան կաթսայում: Թելը սառած դեղնաջրից հանում են ու նորից մոտ 2 որ արևի տակ չորացնում: Այդ թելն էլ յերբորդ անգամ ձգում են խոշոր յեղջյուրավորներից հավաքած յեռացող մեզի մեջ, ուր նա ստանում է մուգ դեղին գույն: Այնուհետև կաթսան վերցնում են կրակից ու թողնում, վոր մեզը թելի հետ միասին սառի: Թելը այս անգամ ևս հանում են ու չորացնում ու Այս բոլորից հետո թելը պող ջրում լվանում են, չորացնում ու անմիջապես իր նպատակին գործադրում: Դեղին գույն կարելի չէ ստանալ սոխի կճեպից, խնձորի կեղևից և այլ բույսերից: Ղարաբաղում շատ գործածական է «տըղնըժաղիկը»:

Թելը սև գույներով ներկելու համար վերցնում են նուան կեղևը ու յեփում յեռացրած ջրի մեջ: Այնուհետև ջուրը պաղեցնում են: Փափկած ու հյութի մի մասը դուրս տված նուան կեղևները ձեռներով լավ տրորում են իր ջրի մեջ: Նորից կաթսան տրորած նուան կեղևներով դնում են կրակին: Յերբ կեղևախառն ջուրը սկսում է լավ յեռալ, թելը լցնում են կաթսայի մեջ, վոր ներկվի: Այնուհետև թելը չորացնում են, վորից հետո յեռացած մեզի մեջ ձգում, նորից չորացնում, պող ջրով լվանում ու նպատակին ծառայեցնում: Այս բոլոր գործողությունները կատարելուց հետո ստացվում է սուրճի գույնի թել (цвет кофе с молоком): Յեթե ուզում են նույն թելը սևացնել, այն ժամանակ թելը ձգում են վոչ թե մեզի մեջ (ինչպես սուրճի գույն ստացման





րածվում են ցինկի յերակներ, վորոնց հաստությունը  $2\frac{1}{2}$ —12 վերջոկի յե հասնում: Բոլոր յերակները համարյա յերկրի յերև-  
սին են ընկած: Այս հանգամանքը շահագործումը հեշտացնում է: Մինչև պատերազմը և պատերազմի ժամանակ, առանձին ուշա-  
դրության առարկա յեր դարձել այտեղի ցինկի հանքատեղին, վորը շահագործվում էր, իսկ հանածոն ուղարկվում վլադիկավկա-  
զի արձիճ—ցինկի գործարանը հալելու համար: Այժմ այդտեղի աշխատանքները կանգ են առել: Մոտ ապագայում այդ հանքա-  
տեղիները կենտրոնական կառավարությունը ստիպված պիտի լինի նորից շահագործել, վորովհետև ցինկի կարիքը Ռու-  
սաստանում և մեզնում շատ մեծ է: Մինչև պատերազմը Ռուսաստանը շատ աղքատ է յեղել ցինկի և արձիճի հանքատե-  
ղիներով ու արտադրությամբ. ներքին կարիքները բավարա-  
րելու համար Ռուսաստանը ստիպված է յեղել շարունակ դրսից ներմուծել թե ցինկ և թե արձիճ: 1913 թ. Ռուսաստանում ար-  
տադրվել է 10,5 հազար տոնն \*) ցինկ, իսկ ներմուծվել է 25,7 հազար տոնն: Նույն թվին արտադրվել է 1,3 հազար տոնն կապար (արձիճ), իսկ ներմուծվել է 57,8 հազար տոնն: Այս թվերը ցույց են տալիս, վոր Ռուսաստանը կապարի և արձիճի տեսակետից դրսի աշխարհից մեծ կախումն ունի: Այսոր նույն վիճակը շարունակում է մնալ անփոփոխ: Արձաթի տեսակետից ևս Ռուսաստանը մինչև պատերազմը անկախ չէր: Այժմ նույնպես ինքնագոյ չէ: Մեխմանայի ցինկի և արձիճի հանքատեղիները բացիոնալ կերպով շահագործելու դեպքում, Խորհրդային միությունը կզարկի մեծ քանակությամբ այդ մետաղները ներմուծել, նամանավանդ վոր «իր պաշարով և բնա-  
վորությամբ Մեխմանայի հանքատեղին կարելի յե լուրջ համա-  
րել»: \*\*) Մեխմանայի հանքատեղիների շահագործումը նպատա-  
կահարմար է ամեն տեսակետից: Նախ նրանք հարուստ են պաշա-  
րով, հանածոն մեծ տոկոս է պարունակում, շրջապատված են ան-  
տառներով, մեծ քանակությամբ ջրային ույժ կա շրջակայքում (\*\*\*) , շրջանը հարուստ է բանվորական ձեռքերով և անասունների ու-  
ժերով: Միակ պակասությունը այն է, վոր յերկաթուղագծից հեռու յե ընկած: Ստեփանակերտ—Յեվլաղ յերկաթուղագծի անց-  
կացնելու դեպքում, կիսով չափ նա կմոտենա հանքատեղիներին:

\*) 1 տոննը=61,05 փթի:  
\*\*) Տես Կարապետյանի գեկույց—գրությունը:  
\*\*\*) Մենակ Թարթարը 150 հազար ձիջու ուժ ունի:

«Մեխմանայի շրջանը իր հանածոյի հարստությամբ արժա-  
նի յե առանձին ուշադրության: Ինչպես յերևում է, շրջանը ունի  
մի շարք յերակներ, վորոնք գործնական նշանակություն ունին:  
Մինչև այսոր կատարած չնչին աշխատանքները յերևան են հա-  
նել ցինկի և կապարի մեծ հարստություն: Լուրջ աշխատանքները  
կարող կլինեն նոր յերակներ բանալ: Այդ հանքատեղիները շա-  
հագործումը ոգտավետ է ու բանական (рациональный): Հետա-  
խազումից ու պաշարի վորոշումից հետո, պետք է գործարան  
կառուցել: Թարթարի ուժի ոգտագործումը, մի կողմից և յերկա-  
թուղին (Շուշի—Յեվլաղ), յերկրորդ կողմից, գործարանի կառու-  
ցումը կըյուրացնեն»: \*)

Մյուս հանքերից արժե հիշատակել պլիննը և ջաղացի քա-  
րը: Պլինն Ղարաբաղում շատ կա, բայց պղնձի հանածոն իր մեջ  
մեծ տոկոս պլինն չի պարունակում, դրա համար Ղարաբաղի  
պլիննը համարյա չի շահագործվել, յեթե չհաշվենք Գանձասարի  
պլիննը համարյա չի շահագործվել, յեթե չհաշվենք 1—5 վերստ հեռավորու-  
թյան վրա յե դանվում: Ղաթարի պղնձատեղին յեթե շահագործ-  
վել է մինչև պատերազմը, դա բացատրվում է նրանով, վոր նրա  
հանածոն մեծ  $\frac{0}{10}$  պլինն է պարունակում (մինչև  $18\frac{0}{10}$ ): Ղաթա-  
րում  $2-3\frac{0}{10}$  պլինն պարունակող հանածոն դեն են շարտում, չեն  
հալում, վորովհետև ձեռնտու չէ, այն ինչ Ալլավերդում  $3-5\frac{0}{10}$ -ի  
հանածոն շահագործվում է, վորովհետև յերկաթուղուց շատ մոտ  
է ընկած \*\*):

Միացյալ պետություններում նույն իսկ  $1\frac{0}{10}$  պլինն պա-  
րունակող հանածոն ոգուտով շահագործվում է:  
Խճուղների խիտ ցանցը, յերկաթուղիները, սվտո-տրանս-  
պորտը և Անդրկովկասի արդյունաբերության զարգացումը Ղա-  
բաղի պղնձատեղիների շահագործումը կզարձնեն անհրաժեշտ  
և ոգտակար:  
Գանձասարի պղնձատեղիի (\*\*\*) շահագործումը զարգացվել  
է 1913 թ. հունիսի մեկին: 20-ից ավելի հանքահորեր փչացել  
են և այժմ ել վերանորոգման վորջ մի հույս չկա: Կենտրոնական  
կառավարությունը այժմ զբաղված է ավելի հարուստ պղնձ-  
ձատեղիների շահագործումով:

\*) Տես Կարապետյանի գեկույցումը:  
\*\*) Ղաթարը յերկաթուղից 230 վերստ հեռու յե գտնվում:  
\*\*\*) Ընդամենը աշխատելիս են յեղել 30 բանվոր: Այդ պղնձատեղին Ան-  
դրկովկասում մի առանձին նշանակություն չի ունեցել:



այլ նաև դաշտային մասի ազգաբնակչության: Ամենից շատ Ղա-  
րաբազը հարուստ է ածխաթթվուժային (թթու ջուր—углекислые  
воды) ջրերով: Ժողովուրդը այդ ջրերին տալիս է «թթու ջուր»  
անունը: Թթու ջրեր շատ կան Սաչենի և Թարթառի հովիտնե-  
րում: Վորքան մոտենում ենք Քրդխատանի սահմաններին, նրանց  
թիվը շատանում է: Թթու ջուր կա Քոլատակում (Սաչենի հով-  
տում), Ուշաղզ գյուղի մոտ, Հաթերքի շրջանում (Թարթառի հով-  
տում): Յեթե Ուշաղզի թթու ջուրը լցնենք կժի մեջ և բերանը  
փակենք, նա կես ժամից հետո կտրաքի: Ջրաբերվում—Թարթա-  
ռի և Սաչենի հովտում այնքան շատ թթու ջրեր կան, վոր յերբ  
գյուղացուն հարցնում էք, վոր ցույց տա վորևե թթու ջրի տեղ,  
նա ասում է. «վոր ձորինն էք ուզում ցույց տամ»: Ածխաթթվու-  
տային ջրեր կան և այսօրվա Սաչենում (պատմական Վարան-  
դայում): Դրանցից մինը «թթու ջուրը» լավ հայտնի յե Շուշեցի-  
ներին: Նա գտնվում է Շուշուց 17 վերտ դեպի արևմուտք, Սաղ-  
սաղան լեռան տակին (Քիրսից 7 վերտ. դեպի հյուսիս—արև-  
մուտք): Այդ ջրից մի քանի քայլի վրա գտնվում է յերկարե ջուր:  
Մի ժամանակ այստեղ վաննա յե յեղել, բայց այժմ չկա: Այս  
ջուրը անուշադրության է մատնված: Ջուրը ամբողջովին վա-  
րակված է, վորովհետև ամեն տեսակի հիվանդություն ունեցող  
հովիվներ մտնում են նրա մեջ լողանում: Մի քանի քայլի վրա  
այս յերկաթե ջրից կա խմելու յերկարե ջուր, վորը նույնպես  
անխնամ դրության մեջ է գտնվում:

Բոլոր հիշյալ ջրերի առողջապահական նշանակության մա-  
սին վորևե բան ասել դժվարանում եմ, քանի վոր նրանցից և  
վոչ մեկը լաբորատորական քննության չի յենթարկվել: Առժող-  
կում Ջաքարյանի ասելով, Լիսազորակու յերկաթե ջուրը ավելի  
թունդ է (շատ յերկաթ է պարունակում) Ժելեզնոփոսկու հան-  
քային ջրերից: Մի առանձին ուշադրության արժանի յեն Տուժի  
(Իդակի) գյուղի հանքային ջրերը, վորոնցից մեկը գտնվում է  
գյուղից չորս վերտ հեռավորության վրա, «Կեփա-ձոր» կոչված  
տեղում, իսկ մյուսը՝ հինգ ու կես վերտի վրա «Սնձորատուն-  
անցում»: Տեղական ազգաբնակչությունը վաղուց է, վոր ոգ-  
տվում է այդ ջրերից: Թույլ կազմվածք, արյան պակասություն,  
մանավանդ ստամոքսի հիվանդություն ունեցողները յերբ այդ  
ջրում մի քանի շաբաթ մնում են, բոլորովին առողջացած վերա-  
դառնում են իրենց տեղերը: 1925 թ. հունիսի 28-ին Տուժու I աս-  
տիճանի դպրոցի դասատու Ա. Ղազարյանը թե «Սնձորատուն» և

թե «Կեփա ձորի» աղբյուրներից ջուր է տարել Պյատիգորսկ և  
այնտեղի քիմիական լաբորատորիայում անալիզի յենթարկել  
տվել: Անալիզը հետևյալն է տվել.

I լիտր ջուրի սու- լիս է գրամներով	I աղբյուր (սնձո- րատուն)	II աղբյուր (Կե- փա-ձոր)
Ջուր մնացորդներ (մի- ներալիզացիա)	0,4080	0,4920
Ծծմբային թթվուտի անգիդրիդ	(SO <sub>3</sub> ) 0,0103	0,0110
Իւր . . . . .	(Cl) 0,0124	0,0124
Կալցիյի Ուսիդներ	(CaO) 0,1550	0,1740
Մագնիյի »	(MgO) 0,0703	0,0580
Յերկաթի գալիս	(FeO) 0,0162	0,0092
Ածխաթթվուտ կապված	(CO <sub>2</sub> )— 0,1006	0,1024
» ազատ ( » )	1,9822	1,8562
» ամբողջ ( » )	2,1834	2,0610

Բացի դրանից ջրի մեջ մկնդեղի և մետաղների ալկալի  
(щелочь) հետքեր են գտնված:

Յերկու աղբյուրն էլ կազմով իրար նման են, Կեփա-Ձորում  
ազատ ածխաթթվուտ և յերկաթ պակաս կա, բայց ընդհանուր  
միներալիզացիա և ածխաթթվուտային կալցի ավելի կա, քան  
«Սնձորատուն անցում»-ում: Առաջինի մեջ կա և մկնդեղի հե-  
տքեր: Յերկու աղբյուրներն էլ կարելի յե անվանել սառը ածխա-  
թթվուտային բուլլ պնդացած (միներալիզացիայի յենթարկված)  
աղբյուրներ: «Սնձորատուն անցումը» միևնույն ժամանակ յեր-  
կաթային է:

Յերկուսն էլ պիտանի յեն սամոֆսի, ալիֆների, յարդի,  
մալլարիայի յել սակավարյունություն ունեցող հիվանդների համար:

В 1 Литре воды грамм.	I Источник Хнзора- тунанца	II Источник Кефа-Дзор
Сухого остатка (минерализация)	0,4080	0,49,20
Серной кислоты ангидрид	(SO <sub>3</sub> ) 0,0103	0,0110
Хлора . . . . .	(Cl) 0,0124	0,0124
Окиси кальция	(CaO) 0,1550	0,1740
» магния	(MgO) 0,0703	0,0580
Закуси железа	(FeO) 0,0162	0,0092

Углекислоты свя-			
занной	(CO <sub>2</sub> )	0,1006	0,1024
„ свободной	( » )	1,9822	1,8562
„ всей	( » )	2,1834	2,0610

Кроме того следы мышьяка и щелочных металлов.

Оба источника по составу родственны друг—другу, в Кефа-дзоре несколько меньше свободной углекислоты и железа, но общая минерализация и содержание углекислого кальция больше, чем в Хнзоратунанце, в первом содержатся и следы мышьяка. Оба источника могут быть названы холодными углекислыми слабо минерализованными источниками, при чем Хнзоратун-анца является кроме того еще железистым.

Обе воды полезны при заболеваниях желудка, кишок, печени, малярии и малокровьи. \*)

Թարթառ գետի վերին հոսանքում, Ղարաբաղի և Քրդիստանի սահմանում կա տաք ջուր (30<sup>0</sup>C), վորը կոչվում է Խսիսառ, վորից գյուղացիք ոգտվում են: Այդ ջուրը, մյուս ջրերի հետ, նույնպես կարող են լուրջ և մանրադնին ուսումնասիրություն \*\*):

Բոլոր հանքային ջրերը կարելի չէ գեղեցիկ կուրորտները վեր ածել, վորովհետև աղբյուրների շրջապատը իրենց ողով գեղեցիկ անտառներով (նամանավանդ Տումինը) միանգամայն կուրորտների համար պիտանի չեն:

Ամեն տարի թե Աղբրեջանի և թե Ղարաբաղի աշխատավորությունը տասնյակ հազարներ է ծախսում, 100-վոր վերստեր կարում ու գնում հյուսիսային Կովկաս բուժվելու: Այն ինչ Ղարաբաղի ջրերը անողուտ հոսում են:

Ղարաբաղի առժողկումատը այնպիսի կուրորտային պայմաններ պիտի ստեղծի յերկրում, վորպեսզի վոչ միայն ներսից, այլ նաև դրսից մեծ քանակությամբ հիվանդներ գան Ղարաբաղի կուրորտներում ապաքինվելու: Յեկվորները իրենց դրամը թողնելով Ղարաբաղում, պակաս չեն նպատի յերկրի անտեսակամբ բարգավաճմանը:

\*) Այս անալիզի պատճենը վերցրել էմ Ա. Ղազարյանից:

\*\*\*) Այս տաք ջուրը ևս ածխածխածնային ջրերի տեսակին է պատկանում:

XIII

ՋՐԱՅԻՆ ՈՒԺ ՅԵՎ ԵԼԵԻՏՐՈՖԻԿԱՅԻՍ

Ղարաբաղը հարուստ է գետերով ու գետակներով: Առաջին տեղը ջրի առատությունը բռնում է Թարթառը, հետո Խաչեն գետը, Գարգառը և մի շարք մանր գետակներ: Ղարաբաղի գետերից ուշադրություն արժանի չէ Թարթառը, վորին դաշտավայրում ապրող թուրք ժողովուրդը աստվածացրել է: Ղարաբաղի բոլոր գետերը սկիզբն են առնում կամ իր լեռներից, կամ հարողոր գետերը սկիզբն են առնում կամ իր լեռներից, կամ հարեան Քրդիստանից: Այսոր Ղարաբաղի միջով հոսող գետերը իրեն աննշան ոգուտ են տալիս, իսկ Աղբամի և Կարյաղինի գավառին շատ մեծ ծառայություն մատուցանում: Թարթառը այնքան մեծ նշանակություն ունի թուրք ժողովրդի համար, վոր նույն իսկ նա իր յերգեբում նրան անմահացրել է:

- Բու Թարթառ, նաշը Թարթառ,
- Չայլարն բաշը Թարթառ,
- Ուչ յուզ ալթմըշ արխն վար,
- Գենա դոջա Թարթառ:
- (Այս Թարթառը, գիժ Թարթառ է,
- Գետերի գլուխ Թարթառ է,
- Յերեք հարյուր առու ունիս \*),
- Ելի մնում ևս մեծ Թարթառ): \*\*)

Սարգիս յեպիսկոպոս Ջալալյանը իր «Ճանապարհորդությունն ի մեծն Հայաստան (մաս 11 յերես 240) աշխատությունն մեջ Թարթառի մասին ասում է.

- Ալթմըշ ալթը արխում վար,
- Գենա դոջա Թարթառամ:

(Վաթսուն և վեց առու ունիմ, Ելի մեծ Թարթառ յեմ: Այս վտանավորը ցույց է տալիս, վոր Թարթառի վտուգող նշանակությունը շատ մեծ է դաշտավայրում ապրող թուրք աղբյուրների համար: Գետերը յեթե լեռնասանդակին մեծ ոգուտ չեն տալիս, այդ բացատրվում է նրանով, վոր նրանք հոսում են, մեծ մասամբ, իոր ձորերով: Ղարաբաղի կառավարությունն է, մեծ մասամբ, իոր ձորերով: Ղարաբաղի կառավարությունը այսոր աշխատում է վտուգել և լեռնային մասը: Այդ ուղ-

\*) Ուղում է ասել, վոր Թարթառից 300 առու չէ դուրս գալիս:

\*\*\*) Այս վտանավորը վերցրել էմ Ա. Առաքելյանից:



և այլն: Միակ վայրը, վորին ելեքարոֆիկացիայի յենթարկելու մասին մինչև որս վոչ մի բան չի արվել, դա լեռնային Ղարաբաղն է: Պետք է կենտրոնից և տեղական միջոցներից գումարներ ստանալ և այդ նպատակին ծառայեցնել: Ելեքարոքաններ պատանալ և այդ նպատակին ծառայեցնել: Ելեքարոքաններից (վորի մի բաժանմունքը գտնվում է թիֆլիզում) շրջանի ջրային ուժը ոգտագործելու համար արժե սպասել գումարների ձեռք բերելը\*):

Բացի խոշոր ելեքարական կայաններից, Մելիք-Փաշայանը խորհուրդ է տալիս մոտ ապագայում կառուցել 5—6 մանր (100—200 ձիու ուժանոց) կայարաններ Ղարաբաղի հետևյալ վայրերում: Մի կայարան, ասում է, պիտի կառուցանել Ղայթալի շեն և Դաշալթի գետերի խառնարանի վրա, վորտեղից Գարգառ գետն է սկիզբն առնում: Այս կայարանը պիտի Ստեփանակերտին և նրա մոտ ընկած գյուղերին լույս մատակարարի: Հետագայում հնարավոր է եներգիայի տարածման շառավիղը յերկարացնել և լույս մատակարարել նաև Շուշիին և Շուշիքենդին: Մի ուրիշը պիտի կառուցանել Կուրուչայ գետի վրա և սրա եներգիան տարածել Թաղար, Տոզ, Դրա խտիկ, Յակուրի և Հազրութ գյուղերի վրա: Կաղալան գետի վրա կառուցվելիք կայանը լույս կտա Թաղավարդ, Սարուշեն և Սուխտորաշեն գյուղերին: Բալուջայի հիդրոկայանը լույս կտա Սոջալին, իսկ Սաչենի կայանը՝ Դաշալթին, Գանձասարին և Մարգակերտին (Աղլարա):

Ջրաբերդի հողերը մոռոզելու համար, յերթ Թաթառից (Վաղուհաս գյուղի մոտից) անցկացվի ճրագրված առուն, այն ժամանակ հնարավոր է ասվի մեծ թեքվածքների վրա տեղական կարիքների համար մի շարք հիդրոկայաններ կառուցել:

Ղարաբաղի լեռների ծոցում թաղնված անհատնում հարստությունը նրա աշխատավոր մասսաների սեփականությունը կդառնա այն դեպքում, յերթ յերկիրը հիդրո-կայանների խիտ ցանցով ձածկվի:

II Ասիեանի դպրոցների ցանցը № 1

Դպրոցներ, խմբակներ, աշակերտներ և ուսուցիչներ	1923/24		1924/25		1925/26		1926 '27	
	Քանակ	Աճման %	Քանակ	Աճման %	Քանակ	Աճման %	Քանակ	Աճման %
Դպրոցներ . . .	2	—	3	50,0	5	66,7	5	0,0
Սմբակ . . . . .	2	—	4	100,0	12	200	16	33,3
Ուսանողներ .	60	—	126	110,0	315	150	464	47,0

\*) Տես Մելիք-Փաշայանի գեղուց-գրությունը Ղարաբաղի ջրային ուժի մասին, կաղմված 1925 թ. հունիսի 19-ին:

I Ասիեանի դպրոցների ցանցը (Լուստողիտամի տվյալներից) № 2

Դպրոցներ, խմբակներ, աշակերտներ և ուսուցիչներ	1922/23		1923/24		1924/25		1925/26		1926 '27	
	Քանակ	Աճման %	Քանակ	Աճման %						
Դպրոցներ . . .	79	—	102	29,1	88	-13,7	134	52,3	137	2,3
Սմբակ . . . . .	—	—	255	—	254	-0,4	434	70,8	464	6,9
Աշակերտներ .	4375	—	7627	74,1	8665	12,3	14764	79,8	15339	3,9
Ուսուցիչներ . .	150	—	222	48,0	181	-18,5	241	33,1	304	26,1

Ազգային փոքամասնության դպրոցների ցանցը: № 3

Դպրոցներ, խմբակներ, աշակերտներ և ուսուցիչներ	I Ա ս ս ի ն ա ն					II Ա ս ս ի ն ա ն ի				
	1922/23	1923/24	1924/25	1925/26	1926/27	1922/23	1923/24	1924/25	1925/26	1926/27
1) Թուրքական դպրոցներ	10	16	12	18	20	—	1	1	1	1
2) Մյուս ազգությունների դպրոցներ (սուսաց)	—	2	2	2	2	—	—	—	—	—
1) Թուրքական խմբակ	—	38	40	48	57	—	1	2	4	4
2) Մյուս ազգությունների (սուսներ)	—	3	5	5	5	—	—	—	—	—
1) Թուրք աշակերտներ	781	1166	1060	1193	1389	—	38	68	96	104
2) Մյուս ազգությունների աշակերտներ . . .	—	57	67	67	74	—	—	—	—	—
1) Թուրք ուսուցիչներ	30	39	30	32	39	—	4	4	6	8
2) Մյուս ազգություններ	—	3	3	3	3	—	—	—	—	—

Տեղեկություն արժեթղթային  
(հոկտեմբերի)

Միության անդամ	Անդամների ընդ- հանուր թիվը	Վ ր ա										
		Տղամարդ	Կ ի ն	Ազգություն				Տ ա ր ի ք				
				Հայ	Քուրդ	Ռուս	Արևելներ	16—18	18—25	25—40	40-ից ավելի	
Պորճ. ծառայող.	886	356	30	787	72	24	3	8	261	419	198	
Լուսաշխ . . . . .	361	257	104	297	60	3	1	6	85	201	69	
Հողանտառ . . . . .	527	498	29	476	37	5	9	255	152	79	41	
Կառուցողներ . . . . .	358	358	—	342	12	1	3	13	25	120	200	
Մանվածային արդ- մեջ աշխատողներ.	460	25	435	460	—	—	—	46	155	159	100	
Բժշկա-սանիտ . . . . .	72	41	31	50	7	13	2	16	25	24	7	
Մուտնոյ մատակար. բանողներ . . . . .	45	26	19	31	12	1	1	12	17	10	6	
Կապի աշխատողներ	20	19	1	5	12	3	—	1	3	14	2	
Տպագրիչներ . . . . .	21	21	—	18	—	1	2	2	6	10	3	
Ընդամենը . . . . .	2750	2101	649	2466	212	51	21	359	729	1036	626	
0/0	100	76.4	23.6	89.7	7.7	1.8	0.8	13	27	38	22	

Տեղեկություն արժեթղթային  
(1926 թ. հոկտեմ)

Պորճ. ծառայողներ	808	775	33	691	94	21	2	6	196	422	184
Լուսաշխ . . . . .	410	286	124	344	62	3	1	5	134	211	60
Հողանտառ . . . . .	684	668	16	623	43	8	10	288	178	128	90
Կառուցողներ . . . . .	549	549	—	528	17	1	3	15	30	308	196
Մանվածային արդ- մեջ աշխատողներ	666	39	627	663	3	—	—	66	190	300	110
Բժշկա-սանիտ . . . . .	182	91	91	137	21	18	6	28	55	85	14
Մուտնոյ մատակար- բարողներ . . . . .	85	48	37	68	14	2	1	16	23	31	15
Կապի աշխատավոր.	20	19	1	5	12	3	—	1	3	14	2
Տպագրիչներ . . . . .	14	14	—	13	—	1	—	—	6	6	2
Ընդամենը . . . . .	3418	2489	929	3072	266	57	23	425	815	1505	673
0/0	100	72.8	27.2	89.9	7.7	1.7	0.7	12.5	26.5	40.4	17

անդամների մասին  
1-ին 1925 թիվ)

ն ց ի ց											ՊրՖ. անդ. սկիզբ.					Կապ. անդ. թիվը
Գ ր ա գ ե տ				Կուտակյութ.			Սոց. գրութ.			Մինչև 1917 թ.	1917— 1920 թ.	1920— 1923 թ.	1923— 1926 թ.			
Բարձրագ- ույն	Միջնա- կարգ	Ստորին	Կիսա- գրագետ	Անգղա- կետ	Կամե- նիտ	Կամի- րետ	Անկու- տակցակ.	Բանվոր	Գյուղա- յիլ	Ծառայող	Մինչև 1917 թ.	1917— 1920 թ.	1920— 1923 թ.	1923— 1926 թ.		
54	142	380	298	72	189	101	596	69	96	721	30	43	150	663	581	
14	113	180	21	33	26	34	301	—	—	361	2	19	188	152	160	
2	15	34	107	369	—	89	430	73	392	62	1	2	14	510	49	
1	3	6	135	213	7	24	327	151	200	7	—	—	8	350	113	
—	2	3	113	342	9	8	443	52	390	18	—	1	1	458	358	
17	10	24	12	9	4	5	63	2	—	70	2	21	25	24	14	
—	—	2	30	13	2	10	33	10	21	14	—	2	1	42	15	
—	15	5	—	—	4	4	12	4	4	12	—	3	7	10	10	
—	1	2	12	6	1	10	10	14	2	5	2	2	9	8	2	
88	301	636	668	1057	250	285	225	375	1105	1270	37	93	403	2217	1302	
3,2	11	23,1	24,3	38,4	9,1	10,4	80,5	13,8	40,1	46,1	1,3	3,4	14,7	80,6	47,2	

բյուս անդամների մասին  
բերի 1-ին)

63	147	362	180	56	190	85	533	61	82	665	32	47	113	616	631
8	186	161	34	21	44	70	296	—	—	410	—	16	182	212	328
3	16	186	249	230	39	256	389	86	527	71	1	3	17	663	121
1	3	10	271	274	11	33	505	137	400	12	—	1	8	540	448
—	2	5	161	498	9	11	646	80	566	20	—	1	1	664	465
13	12	72	65	20	6	10	166	8	—	174	1	23	43	115	56
—	—	3	60	22	2	15	68	15	50	20	—	3	1	81	20
—	15	5	—	—	4	4	12	4	4	12	—	3	7	10	10
—	—	4	8	2	1	6	7	10	2	2	1	2	6	5	6
88	381	808	1028	1113	306	490	2622	401	1631	1386	35	99	378	2906	2085
2,5	11,1	23,6	30,2	32,6	8,9	14,4	76,7	11,8	47,7	40,5	1	2,9	11,1	85	61

Սպառազանց կոոպերացիայի ցանցի զարգացումը 1923—27 թ.թ. № 5

Տարիներ	Կոոպերատիվ ընկերությունների քանակը	Արտադրանքի (խանութների քանակը)	Անդամներ թիվը	Փայի կապիտալ (ուր)	Նշանառություն (ուր)	Կոոպերացիաների ֆինանսները (0,00-ը)
1923/24 տ.	8	28	3786	8875	116000	14
1924/25 տ.	14	40	9311	25662	1.076109	35
1925/26 տ. Առ 1-ն ողջատու	14	65	13925	51566	1921807	52
1926/27 թ.	15	72	18801	68776	1665668	71

№ 6

Գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի զարգացումը

Կոոպերատիվ ընկերությունների տեսակները	1923/24		1924/25	1925/26		1926/27		
	Ընկերությունների քանակը	Անդամների քանակը						
1) Գյուղատնտեսական վարկային ընկերություններ	—	—	5	1165	5	2865	10	6674
2) Արտադրական կոոպերացիա	—	—	—	—	1	60	1	87
3) Գյուղատնտեսական աշխատավորական արտեր	—	—	—	—	3	36	3	32
4) Թռչնաբուծների արտեր	—	—	—	—	—	—	1	15
5) Մեղվաբուծների արտեր	—	—	—	—	—	—	2	59
6) Մեքենաների ընկերություններ	—	—	—	—	—	—	9	185
	—	—	5	1165	9	2961	26	7052
Փայի կապիտալ (նաշված ուրիշով)	—	—	—	—	—	10376	—	31555
Արտադրական կոոպերացիաների կոոպերացիաների ֆինանսները (Համեմատած գյուղատնտեսական անտեսությունների հետ)	—	—	—	5%	—	12%	—	29%

№ 7

Ղարաբաղի գյուղատնտեսական վարկային ընկերություն (Ղարգյուղբանկ—карсель банк) շրջանառությունը (նաշված ուրիշներով)

1924/25 թ.	1925/26 թ.	1926/27 թ.
1.417.000	6.000.000	6.503.000

№ 8

Ղարաբաղի 1923—27 թ. պետական բյուջեում (յեկամտային մաս)

Յեկամտային աղբյուրներ	1923/24	Առանձին աղբյուրների 0,00	1924/25	Առանձին աղբյուրների 0,00	Աճման 0	1925/26	Առանձին աղբյուրների 0,00	Աճման 0	1926/27
	1) Ուղղակի հարկեր	7160	9,84	278991	62,5	3793,7	188392	47,0	-32,1
2) Անուղղակի հարկեր	45134	62,0	93170	20,9	106,5	120148	30,0	28,8	92417
3) Պոշտինա	5263	7,2	14154	3,2	168,9	20003	5,0	41,3	18931
Ընդամենը հարկային յեկամտային	57551	79,0	386315	86,6	578,2	328543	82,0	-15,8	243539
4) Յեկամտային պետական կայքերից	15214	21	60110	13,4	291,1	72477	18,0	20,6	56901
	72771	100	446425	100	510,8	401020	100	-10,2	300440*

\*) 1926/27 թ. յեկամտային միայն 10 ամսվա յե:

Պարտքերի 1923—27 թ. պնակալի բյուջեի (ձևակերպում) № 9

Չափանիշներ	1923/24		1924/25		1925/26		1926/27		Աճումն %	Աճումն %	Աճումն %	Աճումն %
	Աճումն %	Ցուցանիշ	Աճումն %	Ցուցանիշ	Աճումն %	Ցուցանիշ	Աճումն %	Ցուցանիշ				
1) Կենտրոնական . . . . .	3,8	9783	9,9	48523	390,6	31837	6,2	28,750	-35,0	9,4	28,750	-8,9
2) Կենտրոնական (Ա. Շ. Մ.)	1,2	3145	—	—	—	—	—	—	—	—	—	—
3) Ներքին գործող կառուցումներ . . . . .	14,3	36423	14,6	71689	96,8	20163	4,0	52,276	-71,9	9,4	52,276	158,6
4) Արտադրատեսակների կառուցումներ . . . . .	10	25433	12,2	60265	136,4	42248	8,4	40731	-29,9	7,4	40731	-4,9
5) Լուստեղծումներ . . . . .	48,8	124393	37,1	182945	47,7	187266	37,2	202619	2,0	36,7	202619	8,2
6) Հողմուկումներ . . . . .	10,2	25886	10,7	52639	133,3	89372	17,7	10475	69,8	18,1	10475	12,4
7) Առևտրական . . . . .	11,7	29611	15,5	76518	158,4	124685	24,8	129415	61,6	23,4	129415	3,8
8) Սոցիալական ապահովումների կառուցումներ . . . . .	—	—	—	—	—	8765	1,7	—	—	—	—	—
<b>Ընդամենը</b>	100	492579	100	934 503836	93,4	503836	100	2,3 54266	2,3	100	54266	10,0

№ 10

Ղարաբաղի տեղական բյուջեի 1923—27 թ. (յեկամային մաս)

Ցուցանիշներ	1923/24		1924/25		1925/26		1926/27		Աճումն %	Աճումն %	Աճումն %	Աճումն %
	Աճումն %	Ցուցանիշ										
1) Սեփական լիկազմում	59420	37,5	205030	42,0	245,1	198434	26,7	-3,2	191238	21,0	-3,6	
2) Գոտային	99115	62,5	283437	58,0	186,0	545353	73,3	92,4	670148	79	22,9	
<b>Ընդամենը</b>	158535	—	488467	100	208,1	743787	100	52,3	861386	100	15,8	

Վարարաթի սեղական բյուջեք 1923—27 ր. (ծախանքի մաս) № 11

Հիմնադրեր	1923-24		1924-25		1925-26		1926-27		Մասնին ծախանքի %		
	Մասնին ծախանքի %	Բյուջե									
1. Ընդհանուր վարչական հիմնադրերի բյուջեներ	—	49636	18474	37,8	272,3	182819	24,6	1,1	164852	19,1	-9,8
2. Հասարակական կարգի պաշտպանություն	—	—	14730	3,0	—	76542	10,3	419,4	66558	7,7	-3,1
3. Արդարադատության դրամներ	—	—	781	0,2	—	30270	4,1	775,8	333737	3,9	11,5
4. Ժողովրդական բուսակ	39444	24,9	72285	14,8	83,3	243703	31,8	3237,1	37281	39,2	38,4
5. Աստվածատու	43325	27,3	58402	12	34,8	65774	8,8	12,6	73474	8,5	11,7
6. Սոց - ապահ.	—	—	3825	0,8	—	12043	1,6	214,8	40000	4,7	232,1
7. Կոմունալ հիմնադր.	8699	5,5	21235	4,3	146,1	19961	2,7	-6,0	43812	5,1	119,4
8. Կոմունալ անտես.	—	—	11742	2,4	—	13214	1,8	12,6	4013	0,5	-69,6
9. Ժանապարհների	—	—	15175	3,1	—	18987	2,5	25,1	16665	1,9	-17,5
10. Զարգի բնակարան	—	—	36847	7,5	—	31532	4,2	-14,4	37432	4,3	18,7
11. Գյուղատնտեսություն	—	—	2315	0,5	—	38533	5,2	1564,4	9004	1,1	-76,6
12. Պարտի մարումն	—	—	23847	4,9	—	9409	1,3	-60,5	—	—	-100
13. Պահեստի ֆոնդ	—	—	42500	8,7	—	1000	1,1	-97,6	29475	3,4	1047,5
14. Արտակարգ ծախանք	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
15. Զանազան ծախանք	17521	11	—	—	—	—	—	—	—	—	—
Ընդամենը	158535	100	488467	100	208,1	743787	100	52,3	861387	100	15,8

Պեսական լիվ սեղական բյուջեքով ծախանքի և № 12

Տարիներ	1923-24		1924-25		1925-26		1926-27		Մասնին ծախանքի %		
	Մասնին ծախանքի %	Բյուջե	Մասնին ծախանքի %	Բյուջե	Մասնին ծախանքի %	Բյուջե	Մասնին ծախանքի %	Բյուջե			
1. Ժողովրդական կրթություն	163837	39,6	255230	26,0	55,8	430969	34,5	68,9	539900	34,1	48,5
2. Առողջապահության	72936	17,6	134920	13,9	85,0	180459	14,5	33,8	202889	14,3	12,4
3. Գյուղատնտեսության	25886	6,3	89486	9,1	245,7	120804	9,6	35,1	137907	9,7	14,0
4. Մյուս ծախանք	150610	36,5	581510	51	232,9	515291	41,4	2,8	534956	37,9	3,8
Ընդամենը	413269	100	981046	100	137,4	1247623	100	27,2	1415652	100	13,5

№ 13

Յուրենի յեվ գարիյի ցամբսի սարածությունը (հաշված դեսյատիններով)

	1913 թ.	1921 թ.	1913 թ. ցանքսի վոր $\frac{0}{10}$ և կազմում	1923-24 թ.	1913 թ. ցանքսի վոր $\frac{0}{10}$ և կազմում	1924-25 թ.	1913 թ. ցանքսի վոր $\frac{0}{10}$ և կազմում	1925-26 թ.	1913 թ. ցանքսի վոր $\frac{0}{10}$ և կազմում	1926-27 թ.	1913 թ. ցանքսի վոր $\frac{0}{10}$ և կազմում
Յուրեն (աշնանացանքս)	21000	13570	64,0	17610	84	18000	86	21000	100	21500	102
Յուրեն (գարնանացանքս)	3500	1950	56,0	3860	111	3100	89	5200	149	5000	143
Գարի (աշնանացանքս)	9200	5700	62,0	8980	98	7500	82	8000	87	7200	78
Գարի (գարնանացանքս)	2300	1740	76	2690	117	2400	104	4000	174	4000	174
	36000	22960	64,0	33140	92	31000	86	38200	106	37700	105

\*) Այս աղյուսակը հանդիսանում է աշխատությանս V գլխի լրացումը: Աղյուսակը թվերը վերցված են Ղարաբաղի Կենտրոնական Կոնսուլարատի (II, C. V.) և Նարկոմֆինի Ղարաբաղի ներկայացուցչության գրասենյակից, որս համար այստեղի թվերը ցուրենի և գարիյի ցանքսի մասին ավելի ճիշտ պիտի համարել:

# ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ

I

Ստեփանակերտը չպիտի խառնել Ստեփանավանի՝ Լոռու կենտրոն Ջալալողլու հետ: Նա այժմ Լեռնային ավտոնոմ Ղարաբաղի, նրա 130.000 աշխատավոր գյուղացիության վարչական, կուլտուրական և տնտեսական կենտրոնն է:

Յերկար տարիներ՝ ամբողջ XIX դարում և նրանից ել առաջ Շուշին է յեղել Լեռնային և դաշտային Ղարաբաղի սիրտը, նրա զարկերակը: Շուշին մինչև անցյալ դարի 90-ական թվականները համարվել է նաև Անդրկովկասի հայության կենտրոններից մեկը: Շուշին ուներ իր Անդրկովկասյան մաշտարով հարուստ գրադարանը: Շուշիա թեմական դպրոցը հազարից ավելի գործիչներ է ավել հայությանը, իսկ բնակական դպրոցը ավել է համառուսական մաշտարով մաթիմաթիկոսներ և ինժեներներ:

Մինչև անցյալ տարի 80-ական թվականները նա համարվում էր Անդրկովկասի նշանավոր տնտեսական կենտրոն—հանգույց Պարսկաստանի և Ռուսաստանի միջև: Պարսկաստանի առևտրի նշանավոր մասը Թավրիզ—Սուլթանֆերիհ—Շուշի վրայով էր անցնում դեպի Յեվրոպա և Ռուսաստան: Ութսունական թվականի Բագու-Թիֆլիս, իսկ հետո նաև XX դարու սկզբի Թիֆլիզ-Ջուլֆա յերկաթուղագծերը Շուշի տնտեսական արժեքը ձգեցին: Սակայն Շուշին մինչև վերջերս ել համարվում էր շերամապահության յերկրորդ (Նուխուց հետո) կենտրոնը: 1821 թ. Շուշին Թիֆլիսից իր ազգաբնակչությամբ մի քանի հազարով գերազանց է յեղել:

Այսօր նա կորցրել է իր նախկին արժեքը: Հայկական մասը, վորը ամենաձաղկածն էր, շնորհիվ Դաշնակցության քյալագյոգության և Մուսավաթի նամարդ ու վանդալ քաղաքականության այժմ իրենից փլատակներ լի կուլտ է ներկայացնում: Հայկական մասից կտրտվել են ծառերն անգամ: Թրքական ազգաբնակչությունը 50—70 տոկոսով պակասել է: 1886 թ. Շուշում հաշվում էր 27000 շունչ, 1897 թ. 26.000, 1921 թ. 9000, 1923 թ. 6000 \*): 1926 թ. Շուշի ազգաբնակչությունը ինչնում է 5107-ի:

Ստեփանակերտը կոչված է Շուշի փոխանորդը լինելու:

\*) Ազգաբնակչության քանակը վերցրել եմ կրթ թվերով:

II

Ստեփանակերտը ծովի մակերևույթից 800 մետր (2931 մոտնաչափ) բարձր է:

Նրան 4 կողմից յեզրող լեռներն ու լեռնաշղթաները ողբ դարձնում են մեղմ: Տաք ու ցուրտ քամիներ Ստեփանակերտը համարյա չի տեսնում: Այս հանգամանքը նրա բուժող արժեքն ավելի յե բարձրացնում: Շուշին իբրև կուրորտ բարձր է Կիսլովոդսկից, Աբաստումանից և Շվեցարիայի շատ տեղերից: Առավոտվա ժամը 7-ից մինչև յերեկոյան ժամը 9-ը ողի տատանումը (амплитуда)

Կիսլովոդսկում հավասար է 8, 1 <sup>0</sup> -ի
Աբասթումանում » 9, 8 <sup>0</sup> -ի
Սուխումում » 5 <sup>0</sup> -ի
Շուշիում » 4,8 <sup>0</sup> -ի
Սոչիում » 4,6 <sup>0</sup> -ի
Յալտայում » 4,2 <sup>0</sup> -ի

Այս տախտակը ցույց է տալիս, վոր Շուշին վոչ միայն ցամաքային կուրորտներից պակաս ամպլիտուդա ունի, այլ նաև Սուխումից: Ստեփանակերտի ամպլիտուդան Շուշուց ել պակաս է: Այս հանգամանքը Ստեփանակերտի համար մեծ պլյուս է: Անդրկովկասում քիչ տեղեր կան, վորտեղի ողբ թոքախտավորների համար լինի նպաստավոր ամբողջ տարվա ընթացքում: Ստեփանակերտում համարյա ամբողջ տարում թոքախտավորները բժշկվում են: Ստեփանակերտը Շուշուց տաք է, բայց այդ նրա առավել կողմն է: Ստեփանակերտից մի քանի քայլի վրա սկսում են անտառներ, վորոնք քաղաքի ողբ մեղմացնում ու զովացնում են: Այս բոլոր բնական առավելությունների հետ նա ունի և պակասավոր կողմ. ապրելու սենյակներ քիչ կան: Այդ բացը անշուշտ մի քանի տարվա մեջ կծածկվի:

Յերկաթուղուց (Յեկախ) գտնվում է 92<sup>1</sup>/<sub>2</sub>, իսկ Շուշուց՝ 14<sup>1</sup>/<sub>2</sub> վերստ (ուղիղ գծով 7 վերստ) հեռավորությամբ:

Մինչև պատերազմը Ստեփանակերտը յեղել է մի ծառայատ գյուղ, մի խաղաղ անկյուն, վորտեղ կարելի յեր հանգստանալ հոգով ու մարմնով: Այստեղ միշտ ապրում եր կողակների մի գունդ, վորը գյուղին տալիս եր մի առանձին փայլ: Ազգաբնակիւթյուն շատ չի ունեցել, 1897 թ. Ստեփանակերտում յեղել է 1495 շունչ, 1917 թ. 1529 շունչ, 1920 թ. ազգամիջյան պա-

տերազմի ժամանակ այրվել ու թալանվել է: Աղբրեջանի խորհրդայնացումից հետո, ցաք ու ցրիվ յեղած, լեռները ապաստանած ժողովուրդը կամաց-կամաց վերադասնում է ու սկսում խաղաղ աշխատանքով զբաղվել:

1923 թ. Ստեփանակերտի կյանքում մեծ փոփոխություն տաջ յեկավ: 1923 թ. հուլիսի 7-ից Ղարաբաղն ստանում է ինքնավարություն — դառնում է Ինքնավար Լեռնային Ղարաբաղ, իսկ Սան-Քենդին (Ստեփանակերտը)՝ նրա մայրաքաղաքը:


1923 թ. նոյեմբերի 23-ին Ղարաբաղի Խորհուրդների տաջջին համագումարը, ի պատիվ վաստակավոր զործիչ Ստեփան Շահումյանի, Սան-Քենդուն տալիս է Ստեփանակերտ անունը: Այդ որվանից Սան-Քենդուն դառնում է Ստեփանակերտ: 1923 թ. հետո Ստեփանակերտը սկսում է մի նոր, դեռ մինչև այդ չտեսնված կյանքով ապրել: Նա կարճ ժամանակում վոտքի և կանդնում ու սկսում առաջադիմել վոչ թե տարով ու ամիսներով, այլ որերով:

III

Այժմ տեսնենք, թե ինչ փոփոխություն է տեղի ունեցել Ստեփանակերտում ավտոնոմիայից հետո: Ստեփանակերտի 1923 թ. և այսօրվա տարբերությունը մեծ է այնքան, վորքան սաքը ձորից: Ավտոնոմիայի առաջին ամիսներին, ինչպես պատմում են, Ստեփանակերտում նույնիսկ մի տուն չի ձարվել վորպեսզի հիմնարկությունները տեղավորվեն: 1920 թ. Ստեփանակերտի այրվելուց հետո, գյուղում կրակից աղատ միայն մի քանի տներ եյին մնացել: Այդ տներում ել տեղավորվել եյին իրենց տերերը: Վերջին չորս տարվա ընթացքում մեծ քանակությամբ տներ է շինվել ու վերանորոգվել. այնպես վոր այսօր բոլոր հիմնարկությունները ունեն իրնց չափազանց համեստ անկյունները, դեռ ամառանոց եկողներն ել տեղավորվում են: Տների կառուցումը այսօր ել արագ տեմպով շարունակվում է:

Քաղաքի մայթերը բավականին կանոնավորված են, փողոցներն ուղղվել, զեղեցիկ տեսք են ստացել: Քաղաքը լուսավորվում է ելեքտրական լույսով:

Վերջին տարիների ընթացքում ազգաբնակիւթյունն ևս աճել է: Ստեփանակերտը իր հիմնավորման որից այնքան ազգաբնակիւթյուն չի ունեցել, ինչքան այսօր: 1923 թ. Ստեփանակերտում եղել է 300 հոգի, իսկ 1924 թ. դեկտեմբերի 18-ի վի-



ճակագրութեան տվյալով 2447 հոգի, վորոնք ազգությունների վրա հետևյալ կերպով էյին բաժանվում.

Հայ . . . . .	2008	շունչ
Թուրք . . . . .	318	»
Այլազգիներ . . . . .	91	»
Ընդամենը . . . . .	2467	շունչ.

1926 թ. համախորհուրդային գեմոզրաֆիական վիճակագրութեան տվյալով Ստեփանակերտի բնակչութեան թիվը բարձրանում է 3118 (1624 տղամարդ և 1494 կին):

Կուլտուրական կյանքը ևս իր հունով է ընթանում: Քաղաքն ունի իր պետական թատրոնը, վորն իր արտաքինով, ներքինով ու կահավորումով կարող է բավարարել վոչ միայն Ստեփանակերտցու գեղարվեստական պահանջներին, այլև Յերևանի, Բաթումի, Քութայսի և Գանձակի նման քաղաքների կարիքներին: Քաղաքն ունի կինո, տպարան, վորտեղ վերջին տարիներին ընթացքում տպագրվել են մանկավարժական, քաղաքական և տնտեսական բովանդակութեամբ գրքեր: Արդեն 5 տարի յե, ինչ հրատարակվում է «Խորհուրդային-Ղարաբաղ» շաբաթաթերթը: Քաղաքն ունի յերկու ակումբ, կուսպարոց առաջին աստիճանի, լիկկայան, 1 և 2 աստիճանի դպրոցներ, 2-րդ աստիճանի Գյուղատնտեսական Տեխնիկում, վորը կոչված է Ղարաբաղի նոր գյուղատնտեսական կյանքի հիմքը ամրացնելու, նահապետական կեռի (արոր) փոխարեն Ղարաբաղի Ալպերում փոքրիկ Շվեցարիա ստեղծելու:

Տնտեսական կյանքը նույնպես առաջադիմել է: Յերկու տարի յե ինչ բանում է յեղբայր Ահարոնյանների մեռաքսի թեկ մանելու գործարանը: Յեթե Նուշի-Յեվլախ յերկաթուղագիծն անցնի, այն ժամանակ Ստեփանակերտի ապագան ապահովված է:

Քաղաքն ունի մի գեղեցիկ հիվանդանոց, կառուցված փոքրիկ բլրակի վրա 78 մահճակալով և մեկ ամբուլատորիա:

Ստեփանակերտը բավարար կանոնավորելու համար, դեռ 1925 թ. ծրագրվել էր առաջիկա հինգ տարում հետևյալ աշխատանքները կատարել.

Վորոշվել էր քաղաքից հինգ - վեց վերստ հեռավորությունից, «Փահլուլ» կոչված տեղից քաղաքը խմելու ջուր բերել վորովհետև ջուրը ազգաբնակչութեան չէր բավարարում: Քաղաքի բնակչութեանը կրկնապատկելու գեպքում ջրի մեծ կարիք էր

զգացվելու: Այդ ջուրը արդեն բերվել է: 1927 թ. նոյեմբերի 7-ին պաշտոնապես ջրանցքը բացվել է:

Վորոշված է նույնպես Ղայբալիշենի գետից ջուր բերել վորպեսզի քաղաքի ջուրը ընկած հողերը վոռոգել, քաղաքի ներքին առուներին ջուր մատակարարել և կոյուղիների համար: Փողոցները պիտի սալահատակվեն: Դրված է և հրապարակի կանոնավորման խնդիրը:

Ծրագրված է ժողկոմատների համար կառուցել ազատութեան տուն, ծառայողների համար 6 տուն, գյուղացու տուն, կանոնավոր հյուրանոց, սպանդանոց, աղիքների առանձին բաժանմունքով և շուկայի համար հարմար շենք: Պիտի ավելացվի նաև ելեքտրո-կայանի ուժը: Այստեղ կայանը 23 ձիու ուժանոց է և հին կարգ ու սարքով: Դրա համար նա քաղաքին ազոտ լույս է մատակարարում:

Հաշված է, վոր այդ բոլոր աշխատանքները կընստեն կառավարութեան վրա 1,700,000 ուրբլի: Սա, ի հարկե չնչին գումար է, բայց Ղարաբաղի նման աղքատիկ բյուջե ունեցող յերկրի համար նման գումարի միանգամից հայթայթումը դժվար է: Ղարաբաղի աշխատավորութեանն անում է այն բոլորը, ինչ հնարավոր է: Սակայն նա անգոր է կարճ ժամանակամիջոցում մենակ, առանց դրսի ոգնութեան, վերականգնելու ու նորից կառուցելու Ղարաբաղի նեպուրը—Ստեփանակերտը:

Հանաջարան . . . . .	
I. Պատմական ակնարկ . . . . .	5—6
II. Վարչական բաժանում . . . . .	6—7
III. Տերիտորիա և ազգաբնակչություն . . . . .	7—12
IV. Հողաշինարարություն . . . . .	12—14
V. Հողագտագործություն . . . . .	14—35
1) Ցանքատեղիների տարածությունը և բերքը . . . . .	18—24
2) Ագարակային հողամասեր . . . . .	24—34
ա) Մրգի այգիներ . . . . .	
բ) Պտղաբեր այգիներ . . . . .	
գ) Թփենու այգիներ և ողիի արտադրություն . . . . .	
VI) Կենդանաբուծություն . . . . .	34—44
1. Սոռոր յեղջյուրավորներ . . . . .	34—37
2. Մանր . . . . .	37—39
3. Ձի, ջորի և եղ . . . . .	39—40
4. Սոզ . . . . .	40—42
5. Մեղվաբուծություն . . . . .	42—44
VII. Շերամապահություն և մետաքսի թելի արտադրություն . . . . .	44—64
VIII. Արտատեղիներ և քոչի խնդիր . . . . .	54—57
IX. Անտառներ . . . . .	57—65
X. Տնայնագործություն . . . . .	65—73
XI. Կոնային հարստություն . . . . .	73—77
XII. Հանքային աղբյուրներ . . . . .	77—80
XIII. Զրային հարստություն և ելեկարոֆիկացիա . . . . .	80—84

Ոգտվել են հետևյալ աղբյուրներին.

- 1) Դարաբաղի կենտրոնի արխիվին: Առանձնապես ոգտվել են ինժ. Կարապետյանի և Մ. Փաշայանի «Հանքային հարստություն» և «Ելեկարոֆիկացիա» զեկուլյոգրություններին:
- 2) Դարաբաղի վիճակագրական բաժնին: «Շերամապահություն և մետաքսի արտադրություն» զլուխը ոգտվել են, շատ տեղ բառացի, վիճակագրական բաժնի վարիչ ընկ. Միրզայանի անտիպ հոգվածներին:
- 3) Լուսժողովուրդի արխիվին:
- 4) Հողժողովուրդի հաշվետվություններին (отчеты)
- 5) Առժողովի արխիվին:
- 6) Պրոֆմիսյան գրասենյակին:
- 7) Кочаряни-ի «Нагорный Карабах» աշխատությունին:
- 8) С. Заварян—Голод в Карабахе
- 9) Անդրկովկասի և Ազրբեջանի Ը.Ս.Մ.-ների ըլուխտեղիներին:
- 10) Ինժ շատ ոգնել են Ստեփանակերտի կուրսերի ուսուցիչ—կուրսանաները (տեղեկություններ են հաղորդել) և այսանները:
- 11) Закавказье—статиско-эк. сборник 1925 г.
- 12) Народное Хозяйство Закавказья в цифрах  
З. С. Ф. С. Р. ЦСУ 1927 г.

«Ազգային գրադարան»



NL020600

29 635